



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1tn
✓ 290

1999. 2

ՀԻՆ ՀԱՅՈՑ

ՏԵՂԱՉԱՓԱԿԱՆ

ԸՐՈՒԵՍՔ



ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԽԵՏԻՔԱՅ ԲԱՀԱՐԳԵԱԼ.

Հ. 146



ՅՈՒԹԻ

Միքաղական Մահմետական Թակորեանցի տպարանում.

1891

Ա. Օ. Դ.

Այս գիրքը անցեալ 1889 թուին ներհայացրուած էր Կ. Պոլոյ կամերան
ճրցանախաբաշխութեան տպանին, լուչուս որ „Արմենից“ շրագար
համար Ազգականաց էնց արև ժամանակութեանը. որից և արդարողեց
„Սուրբ“ մասգիրը իւր օգոստոս մասունքներ Ազգ: Սահայն էս անբարե-
խան շնուրով նոյս ժամանակութեամբը Հարբ համարեցի առաջրութեանի
հրապարակել, և այդ համար նորանոր յաւելուածներ և փոփոխութեաններ
ներմուծեցի արև Ազգ և անհան բարեփոխեցի, որ համարաւոր շինուր իմ
անցեալ և ապագայ ժամանակներին՝ անխափան գամագիւտ լինել իմ
մտացս որոշ և բացայատ կերպով, որն յարհաղէս պահանջուած էր
իմ ժամանակ Թիերուան Եփենդին: Եւ ամե մի ժանի ծառաօթութեաններով
ջանացի բայցայատ կայուցանել այս իետերը, որոնք ենթարկուած էին
ժամանակութեան, և որոց նկատութեամբ այժմ աթուայն ուշ շամել
ժամանակն հարոց է իրաւա ու անլիրու իրարի զանազնութել: Բայց Շ վերա
այսր ամենայնի չ իսրծեմ Ան իմ ժամանակութեան բոշք հաներին հանրահան
պատրասիւսած ընենիմ, որունենակ նոյս ինուները չափ անընչ և անըն-
ցոյցյոր էին. առելի ևս Թիերուան Եփենդին, ինչ անրեարին է, զայց և
առանում և կամ ըստհանուր եւլրակացութեամբ է բաւականանած, բայց
երես այսու գահան բառերի վերա ինանգ է առանում աթուայն զգուշութեամբ
պահանջնորդ խոսիս, Ան ինչու նոյս առանուցեստ էն և ծպաւաւ, և Ան
եւրոպական բուն արմաները պիտի գործարուած ընենին, և ամեն
ինուներով առանցանում է Ան ինչու պիտի Արքայանէնին այտ բաները
հայերէնան: Եւ զայցման, Ան ինչ վերաբերութեան ունենին պաշառական
մի շրաց ժամանական Ազգերէ այլառշուտին բատերի ճշճիմ հետաքառու-
թեան: Արժէր արդեօս Ան գլխաւոր ժամանակն ինտիմները անպես Առաջ՝
հանրահան ուսումնասիրել մի ամբողջ գրքի Ազգ գանուած էրեւ այսու գո-
հան բատերը մայս, որոց առանուցեստ պատճառաւ արդէն նամակով
այսպիսի էր իրանց — որ ոչ ելե Կ. Պոլոյ ուշաբիւրու, այլ Ուստանապահուած
պատճեւու նպագուած էր իսպահած գիրքը, և որ Արդարու ընդունուած է
առանուրակ Եւրոպական բառերին առանուին յանգիրով գործարութեանը:

Дозволено цензурою со исключением Тифлисъ, 14 Ноября 1890 г.

4290-Ա

28. 293

Типо-Литография А. М. Мугдусіакопова, въ Шуши.

Մինչեւ առաջանալը՝ ի՞նչ որ հարելէ էր գոտել Կ. Պալայ ժամանակականութեանց մէջ Թէրոշանի խոսքառած էր, որ Գրամէ „Եվէ Հարէլ պահանջէ ընդարձակոյն ևու պիտի գրէմ.... և այժմ իսկ մէ առանցին Գրութեան ունիմ պատրաստ“։ Այդպիսի Խորանան ժամանակական վակոգեղութեան առաջանակ արդուղ յարուցանելու պէշէն չունի, այլ անմիջապէս նաև Տաշագրելով և հանից իրէնելով իմ արդարուցի պահանջս յայբաշարեցի—որ համէ ունիմ իմ գիրքը պատրաստեամբ հրապարակել, և որ իմ համէն իրագործելու համար անհրաժեշտ կարի ունիմ Թէրոշէնի պատրաստ Գրութեանը, վաճառոր ինուրեցի որ անյատաց գիրքը իւր Խորանան ժամանակական հետ առանցին ինչ։ Անյաւ անբաշը պարի, ոչ գիրքը, ոչ ժընադատական և ոչ մը բառահանուցիչ պատասխան չպատասխան պարագան ունիմ գրեցի նորոց չարգագործ և պատրաստ ունինի պատրաստեան համար։ Չմասանամ առել նուա, որ յանչնաժաղաց անդամները ինուրիւ էնի ինչ մը առանցին նումակուլ պատրաստ այս գիրքը, և որ Թէրոշանի խոսքառած ժամանակական յանիւան ծածկուած նայ ինչպահ, և չգետէ, լէ այլ և ինչ հարկ էր Հարզառը, որ նա իւր պատրաստ Գրութեանը ինչ հաջորդելու յօժարուեր։

1890 Տարբ.

Ծուշեւ:

Այս գրքոյկի մէջ քննութեան առնելով հին հայոց տաղաչափական արուեստը՝ պարզաբանեցինք ըստ կարեաց թէ ի՞նչ չափով են յօրինուած Վահագնի, Արտաշէսի և Վարդգէսի վիպասանական երգերը, նոյնպէս և մեր եկեղեցական ժամերգութիւնները, շարականները և Գ. Կարեկացոյ աղօթական և այլքերթուածքները, որոց գաղտնիքը մինչև այժմ զեռ անբացայացտ էին մեր գրականութեան մէջ։ Այդ զանազան քերթուածքներից նաև ժողովրդական երգերից և աղօթքներից եզրափակեցինք հայոց հնագոյն տաղաչափութեանց որոշ կանոնները՝ և նախնի վիպասանական քերթուածքների տաղաչափական արուեստը աւելի գերազաս և նմանողութեան արժանի համարեցինք։

խոյնու առ ելուսց չեն պարզը ու լ
զար կուտայն մայնախոյնքուն քոյն ով
խոյն չո՞յ թել - զարզոյ ուոյ զայիմանցոր
և փաշտակ գարուն ։ Ե օստունցոյ ան
ու կրուն զգարզը մայնախոյնքի գարրուն ։
այս զգամանի ելորդներ մայնաղմբել զան և
մայնա ելոր լցութեցուն ։ Ի և զգամանինց
մշտի զայիմանքոր զայն զգամանուն ելորդ ։ Այս և
մայնախոյը զան ով աշակարցարն անք ենքու
զգամանուն ելորդ ։ Արաւոր քեւ ։ Չեն մաս-ն
ըլորդ ելոր և ըլորդը մայնախոյնք մաս-
ախոյնքուն մայնուն քոյն զայիմանինցոր
ուրդի զայիմ և զգամանուն չայն զան ել
մայնախոյնքուն վայեց օստուն ելորդ ։ մայնան
մաս ելորդներ և սորունք չընեն զամուցու
զայիմանինք վայն եղու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԵՐԹՈՒԹԻՒՆՑ

— 1 —

Երկու տեսակ քերթողական չափ՝ հնուց սովորական էին մեր լեզուի մէջ, մէկն համաչափ՝ որն գործադրվում է և մեր այժմեան դարում՝ այն ոտանաւորներն են, որոց անդամները և տողերը միշտ միօրինակ են ընթանում, բայց միւսն է անհամաչափ՝ որոց տողերը և անդամները քերթողի ախորժանաց համաձայն կարող են փոփոխութիւն, եթեմն սղութիւն երեքմն երկարանալ:

Ինչքան որ այժմ համաշխափութեան, նոյնքան աւելի
հնումը հակամիտուած էին անհամաշափ քերթութեան, սա-
կայն անծանօթ չէին մեր հնագոյն քերթողներին և համա-
շափ եղանակները՝ որոց օրինակները նկատում ենք և նախ
քան Նորհալին գրականութեան մէջ, ինչպէս են Գ. Նարե-
կացւոյ ծննդեան, յարտնութեան և եկեղեցւոյ տաղերը՝ որոց
մէջ յայտնապէս նկատվում են համաշխափութեան հետքեր. այս-
պիսի համաշափ քերթուածներ գտնվում են նաև հին շա-
րականների մէջ՝ որոնց վերալ շատ տեղ մատանիշ պիտի
անենք մեր այս գրքում։ Տարբերութիւնը՝ ինչ որ գտնում
ենք հին և նոր քերթողական ճաշակների մէջ, այն է, որ
հինները աւելի միտումն ունեին անհամաշափ քերթութեան՝
ուշ դարձուցանելով տաղերի ներքին կատարելութեանը,
բայց նորերը սովոր են վանգերի և տողերի համաշխափու-
թիւնը միայն քերթողութեան պայման համարել։ Եւ առհա-

սարակ ամենայն համաշափ և անհամաշափ քերթութիւններ երկու հակառակ խումբերի չափ իրարից տարբերվում են, որոց մէկը եթէ տարրանալով տիրանալ ազգային ախորժակի վերայ, միւսը պէտքն է հետզհետէ հրաժեշտ տալ ասպարեզից:

Համաշափ քերթութիւնները՝ որոց կազմութիւնը քաջ յալտնի է մեր այժմեան տաղաչափներին, բաղկանում են համաշափ անդամներից և տողերից, ուր քերթողը իւր ամբողջ քերթուածքի մէջ պարտաւոր է միշտ միօրինակութիւն պահպանել և հետևող լինել ճշտիւ իւր նախագծեալ գաղափարին։ Այսպիսի համաշափ քերթութեան իւրաքանչիւր անդամ պիտի բաղկանալ կամ 3, կամ 4, կամ 5, եւ կամ 6, վանգերից, և երեմն այդ անդամները կարող են իրարու հետ խառն դասաւորուիլ 3 և 4, 4 և 5, 5 և 6, վանգերով։ Այսպէս և նոցա տողերը կարող են կամ միանդամ, կամ երկանդամ, կամ եռանդամ և կամ քառանդամ լինել, ոչ աւելի քան քառանդամ տող և ոչ աւելի քան վեցավանդ անդամ գործատրել անկարելի է։ Սոյն այս օրէնքն է, որ տարածվում է և անհամաշափ քերթութեան վերայ, միայն թէ այստեղ մենք պարտաւոր չենք անդամների միօրինակութիւն պահպանել, այլ խառն գործ են տնվում երեմն փոքրավանդ և երեմն բազմավանդ անդամներ։

Համաչափ քերթուածներից խառն տողակարգուած մի քանի օրինակ այստեղ հարկ է մեղ առաջ բերել ապացուցանելու համար՝ որ հայք 'ի հնուց սովոր էին խառն տողակարգի, որոց կիրթ և կատարեալ օրինակները պիտի տեսնենք առաւելապէս անհամաչափ քերթուածքների մէջ։ Խառն տողակարգ ասելով պիտի հասկանանք այնպիսի քերթուածներ, որոց տողերը սովորականի պէս միանման չեն, այլ միևնույն քերթուածքի մէջ երբեմն միանդամ, երբեմն երկանդամ երբեմն եռանդամ և երբեմն քառանդամ տողեր գործադրվում են խառն 'ի միասին։ Այսպիսի խառն տողակարգի համար բաւական են այս մի քանի օրինակներս։

ԵԱՐԱԿԱՆՆԵՐԻՑ

ՕՐՈՎԱԾ ԵԸՆԴԻ
ԾԱՌԱՅ Ա ՀԱՆ Ա ԱԿՐԱՆԱԿՐԱ Ա ԽՈՎԱԿԱ Ա ԽՈՎԱԿԱ
ԾԱՌԱՅ Ա ՀԱՆ Ա ԱԿՐԱՆԱԿՐԱ Ա ԽՈՎԱԿԱ Ա ԽՈՎԱԿԱ

ՀԱՅՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Յան Առաքելոց մասին պատմությունները՝ առաջին համար կազմությունը կազմված է առաքելոց պատմությունների վեց համարում և առաջին համարում պատմությունը կազմված է առաքելոց պատմությունների առաջին համարում:

ԱՀա ինչպէս ակներև նկատում ենք՝ այս վերոյիշեալ քերթուածների մէջ տողերը խառն են դասաւորուած երբեմն երկանդամ և եռանդամ, և երբեմն միանդամ, երկանդամ և եռանդամ։ Այսպիսի խառն գողակարգուած քերթուածները ինչքան որ ճաշակի կրթութիւն և մեծ ճարտարութիւն են պահանջում քերթողներից, նոյնքան և կարող են խանդարումն և նսեմութիւն պատճառել, եթէ որ անկիրթ և անխորհուրդ լինին դասաւորուած նոցա կրծատ և երկար տողերը

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Մեր համաչափի քերթուածքների հանդէս Եւրոպացիք
ունին Սկզբակչունի (վանգաչափ) եղանակը՝ որ նոյս մէջ ևս
վանգերի զուգաչափ թուով են լորինվում. բայց անհամաչափ
մեր քերթուածները նմանութիւն ունին լունաց Մէտրիչունի
անուանեալ եղանակին՝ որոց երկուսն էլ կազմվում են սուզ
և երկար ձայների սատարութեամբ: Յոյնք քերթուածքի ոտ-
քերը որոշում են սուզ և երկար տառերով կամ վանգերով,
բայց հայք այդպիսի տառեր և վանգեր չունենալով՝ առողա-

Նութեան պայմանաւ կազմակերպում են սուղ և երկար անգամներ ամբողջապէս՝ որոնք աւելի ևս բացորդ և աջողապէս են կատարում այն ամեն պաշտօնները, ինչ որ Յունաց մէջ սուղ և երկար վանդերը. ինչպէս են շարծուածքի արագութեան և դանդաղութեան աստիճանները ևալլն: Մենք այս խնդրոյն պիտի դառնանք յետոյ բացատրելով Հայկական սուղ և երկար անդամների զինչութիւնը օրինակներով հանդերձ, բայց առ ալժմ այսքանը միայն ասենք, որ Հայոց անհամաչափ եղանակների մէջ իւրաքանչիւր անդամ իւր որոշ արտաքերութեան աստիճանն ունի. սուղ պիտի անուանել այն ամեն անդամները՝ որոնք բազմավանդ են և նոցա արտաքերութիւնը կատարվում է արագ, բայց երկար՝ փոքրավանդ անդամներն են և որոց արտաքերութիւնը համեմատաբար կատարվում է ծանր: Եւ այս պատճառու անհամաչափ քերթուածների մէջ կարող են գործադրուել զանազան սուղ և երկար անդամներ կամ 1, կամ 2, կամ 3, կամ 4, կամ 5, և կամ 6 վանդերից բաղկացած, որոց ալդ զանազանակերպ անդամները սուղ և երկար արտաքերութեան պայմանաւ գրէ թէ համաչափվում և հաւասարվում են իրարու հետ: Յունաց և Հայոց անհամաչափ քերթութեանց մէջ նաև այս տարբերութիւնը պիտի նկատել, որ յոյները քերթողական տողերի պահանջեալ ձայնի հանգիստը կատարելու համար դիմում են մի այլ միջոցի, որին անուանում են ցեղուրա (հատած), բայց Հայք ստիպուած չեն կամայական հանգիստ որոնել, այլ ամեն ձայնի հանգիստ կատարվում է իւրաքանչիւր անդամից կամ տողից յետոյ:

Մեր այս երկասիրութեան նսղատակը լինելով միայն անհամաշափ քերթութեանց զանազան եղանակները հետազոտել, դիւրութեան համար բաժանում ենք նորանց երկու գլխաւոր ճիւղերի, որոց մէկն անուանում ենք կանոնաւոր և միւսն անկանոն չափեր։ Այժմ այս գրքոյկիս առաջին մասի մէջ պիտի քննենք անհամաշափութեան կանոնաւոր չափերը, բայց միւս անկանոն չափերը ժողելով երկրորդ մասի մէջ։

ԱՆՀԱՄԱՉՈՓ ՔԵՐԹՈՒԹՅԱՆՑ

ՄԱԿԱՐ

ԿԱՆՈՆԱԿՈՐ ԶԱՓԸ և ՆՈՐՄ. ՔԱՌԱՆԴԱՄ. ՏՈՂԱԿՈՐՔԸ:
- Ամփոփաց գլուխ որ չէ սպառաբանական մասնիկը զայլ
- առ զայլ յորով ցանցօք է ։ Համեմատենք ու և դրա
- առաջար մակարական պրեսբիեր փառական ու յաբշայի
- ՞ Ա պահանջման պահանջ ու սխալ հաջողակ և մայիս
- առ այսպիս ու այսպիս բայց մասն ունի ու զայլ այս


Համաձայն քերթութեանց համար նախագաղափար
որինակներ ունինք Եկեղեցական տաղերը, երգերը,
շարականները և նաև Գ. Նարեկացոյ աղօթական և այլ քեր-
թուածները, ևալն, որոնք աւանդեցին մեզ Եկեղեցական
քերթողները փոխ առնելով նոցա տաղաչափական արուեստը
նախնի ազգային քերթուածներից: Թէ ի՞նչ եղանակաւ և ի՞նչ
կանոններով էին քերթվում հեթանոսական քերթուածները՝
նոցա մի քանի հատուկոտոր վիպական երգերից, որոնք պա-
տահաբար աւանդեց մեզ Խորենեան Ծերունին, կարող ենք
եզրափակել, որ միւնոյն այն անհամաչափ եղանակն ունին,
ինչ որ գտնում ենք Եկեղեցական քերթուածների մէջ, միայն
այն տարբերութեամբ, որ վիպասանականների մէջ նկատվում
են աւելի ճարտարակիւս և քաջակիրթ կազմութիւն, չափա-
ւոր ազատութիւն և անդամների ու տողերի որոշ և խոր-
հրդաւոր դասաւորութիւն, բայց Եկեղեցական քերթուած-
ների մէջ տաղաչափական արուեստը երբեմն այնպիսի յա-

խուռն ազատութիւն է վայելում որ հազիւ թէ նշմարելի են լինում նոցա տաղաչափական կազմութիւնը և ստիպուած ենք լինում շատ անգամ նորանց իբրև արձակ շարագիր ճանաչելու։ Արդեօք ունէին և նախնի վիպասան քերթողները այդքան քերթողական ազատութիւն,—հաւանական է թէ ունեցած լինին, ինչպէս որ գլքիս Բ մասի մէջ պիտի ջանանք մի այդպիսի օրինակ առաջ բերել վիպասանական երգերից. և որով պիտի համոզուինք, որ մեր եկեղեցական քերթողները ևս որևէիցէ հիմք ունեցել են իրանց ալդքան բացարձակ ազատութեան համար։

Մեր ալժմեան օրինակներից, ինչ որ ունինք շարականների և այլ քերթուածների մէջ, ալսքանը կարող ենք մակարերել, որ անհամաչափ քերթողները անսահման ազատութիւն են վայելում, այնպէս որ միևնուն քերթուածքի մէջ իրաւունք ունին ամեն տեսակ համաչափ և անհամաչափ տողեր խառն զետեղելու։ Միևնուն քերթուածքի անհամաչափ տողերը կարող են լինել 1—4 անդամներով և երբեմն նաև խառն տողակարգով, և դոցա իւրաքանչիւր թէ յետադաս և թէ առաջադաս անդամները կարող են կազմակերպուիլ անխտիր 1—6 վանդերով։ Ալսքան բազմատեսակ համաչափ և անհամաչափ խառնիխուռն տողեր և անդամներ գործադրութեան թողտուութիւն ունենալով մինչև ներսէս նորմակալուժամակները, նկատում ենք, որ քերթողներից ոմանք աւելի միտումն ունին միայն այսինչ տեսակ տողեր և անդամներ գործադրելու, և միւսերը մի այլ տեսակ. և կամ միևնուն քերթողը երբեմն իւր քերթուածքի տողերը և անդամները այնքան միակերպութեան է հասացնում, որ գրէ թէ հաւասարվում են համաչափութեան հետ, և երբեմն արձակ շարագրութեան անսահման ազատութեամբ են ընթանում։ Իալց որպէս զի կարողանանք մի այդպիսի ազատ քերթութեան վերայ գաղափար կազմել, առաջ բերենք ալստեղ նարեկացոլ տաղերից մի օրինակ անդամատելով նոցա տողերը զծանշանով։

Զայն — ինդուստրատուն — յայնէն,
Վաշար — եւ արդարուն։
Արդարուն — եւ արդարուն։
Տայը նոր — շատեալուն — առանց լուսուն — ինքնէն։
Խայքը — եւ արդարուն — եւ արդարուն — նոր պայան։
Ուսուն՝ այդարուն — արդարուն — ուսուն։
Փառաջ — ասուն սուշալլ — սուշալլ սուսիւն — ուսուն։
Խայքը — ասուն լուսուն — լուսուն շատեալուն — ինքնը։
Տերիս — ծիւլեւսաւացան — ըստ առաջ։
Բայց առաջ — մասնաց լին — մասնաց առաջ — հրարիւն։
Տայից — եւ ասունաց — լուսուն գոյնունոյ — ասուն։
Տայից — ասունաց — երկ գուլ եւ լուսուն շատեալուն։
Մերոյ — նըմանոյ — աննըմանոյ — ըստու,
Ըստու — նըմանոյ — եւ ասունաց — ինքնի։
Փառաջ — կատարաւուն ին — կատար ևս պատիւ — միշտ,
Սայման — ևս մասնացաւ — ին պատիւնուն — ամէն։

Այս տեսակ տողերի և անդամների բաժաննած մի ոտանաւոր եթէ առաջին անգամ ընթեռնու մի թէպէտ և փորձառու տաղաչափ, իսկոյն պիտի հերքէ և անհաւատալի համարէ դորա շափական կազմութիւնը. Սակայն դա իրողութիւն է, և մենք չենք կարող ուրանալ նորա տաղերը նկատում ենք խնամքով տողակարգուած և ոչ թէ նորա միւս քերթուածների պէս տնփոլթ թողուած։ Եւ իսկապէս ուշ գարձուցանելով մենք նշմարում ենք այդ տողերի մէջ մի ներգաշնակութիւն, այսինքն որ տողերի մեծ մասը երկվանդ անդամներ ունին սկզբումն և զերջումն, և կարելի է որ եղանակաւոր ձայնի պահանջմամբ միւս սակաւաթիւ միավանդ և բազմափանդ անդամները ևս՝ որոնք հանդիպում են տողերի սկզբում և զերջում, իերկարելով և կամ յապաւելով երկվանդ գարձուցանել, որոց օրինակները շատ կան շարականների մէջ զորորինակ փառըք, գործըք, փոխա— գրութիւն

և ալն։ Եւ հետազօտելով նարեկացոյ աղօթական քերթուածքները նկատում ենք նմանօրինակ տաղաչափութիւնք ևս, և նաև մի այդպիսի անհամաշափ քերթութեան մի նախագիծ օրինակ դրոշմուած նորա աղօթական մատենի ճակատին, որոց մասին պիտի տեսնենք գրքիս Բ. մասումը։ Եւ այսպիսի քերթուածների օրինակներից պիտի եզրակացնել անշուշտ, որ դոքա տաղաչափութիւններ են, և ունին միանման և խառն տողակալդ, և անդամներ 1—6. վանգերով անխտիր դասաւորուած տողերի ամէն մի անկիւնում, որին անուանում ենք անշառն։

Եւ թէպէտ այս տեսակ տաղաչափութիւնները շատ սակաւ տարբերութիւն ունին արձակ գրուածքներից, բայց այսու ամենայնիւ եթէ կամենում ենք դոցա տաղաչափական որպիսութեանը վերահաս լինել, հարկ է որ ընդելանանք նոցա հետ առժամանակ, և ամէն մի քերթուած պիտքն է ստէպ ստէպ կրկնել և ընթերցման ժամանակին ճշտիւ պահպանել առոգանութեան պայմանները, այսինքն իւրաքանչիւր տող և անդամ պիտքն է որոշ արտասանել, և անդամներից բազմավանդները սղելով արագ, բայց փոքրավանդները երկարելով ծանր արտաքրել։ Եւ եթէ այս տեսակ անհամաշափ զանազան քերթուածների մէջ ունականանք առժամանակ, կը համոզուինք անշուշտ որ դոքա տաղաչափութիւնք են։

Անհամաշափ քերթութեանց ինչքան էլ սիրահար քերթողներ ունենալինք մեր ալժմեան ժամանակում, նորանցից ոչ ով չէր լոժարուիլ նոյնութեամբ գործադրելու այնքան ազատ և անկանոն տաղաչափութիւնները, ինչ որ նկատվում են բազմատեսակ անհամաշափ քերթութեանց մէջ, այլ հարկ էր որ՝ որևէ մի չափ և սահման որոնէին և սահմանափակ կանոնների տակ փակէին նոցա անպայման ազատութիւնը։ Եւ արդարեւ մի այդպիսի նշանաւոր քերթող մխիթարեան միաբանութիւնից Հ. Արէն բագրատունին առաջին անգամ այդ աշխատութիւնը յանձն առաւ, և անհամաշափ քերթու-

թեան բազմատեսակ տողերից ընտրելով իւր ախորժանաց յարմարաւոր մի քանիսը կազմակերպեց իւր քառանդամը և որոց հետազօտութեան արդիւնքները աւանդեց մեզ իւր Վիրգիլեալ մշակականի յառաջաբանի մէջ։

Բայց Բագրատունոյ շնորհիւ մինչև այժմ մենք կարողացինք միայն քառանդամ քերթութեան համար մի աղօտ գաղափար կազմել, և յայտնի չէ արդեօք, թէ Բագրատունին իւր սիրած համաշափանման մի քանի տողերը ընտրելուց յետոյ ինչ էր նորա կարծիքը այն յարակից զանազանակերպ տողերի մասին՝ որոնք անընդհատ խառն դասաւորուած էին իւր քառանդամ տողերի հետ ՚ի միասին։ Որովհետեւ անկարելի է այնպիսի սխալ համոզման հանգչիլ—թէ մեր նախնիքը մի երգ գրելուց մի քանի տող ոտանաւոր էին գրում քառանդամ, բայց մնացեալը արձակ։—Այլ հարկաւ պիտք է ընդունենք որ բոլոր երգը տաղաչափութիւն էր, բայց նոցա չափը մեզ անծանօթ։ Եւ նաև խուզարկելով նկատում ենք որ ոչ թէ միայն քառանդամ տողեր, այլ և միանդամ, այլ և երկանդամ, այլ և եռանդամ տողեր սփոռուած են անհամաշափ քերթուածքների մէջ՝ որոց մանրամասն ուսումնասիրութեամբ շատ հին և նոր քերթողական առեղծուածներ կարելի էր լուծանել։ Այլ և խառն առղակարգը որ ընդարձակ կիրառութիւն ունէր հնագոյն քերթուածքների մէջ, կամ անբացայալտ էին Բագրատունոյ համար և կամ չարժանացին նորա ուշագրութեանը։ Բաց ՚ի ալդ թերամասնութիւններից Բագրատունոյ քառանդամ տողերի ընտրութիւնն անգամ անբաւական ենք գտնում, այնպէս որ, նորա քառանդամը երբէք չէ կարող անհամաշափ քերթութեանց նպատակին ծառայել։ Այս տեսակ թերութիւններ նկատելով Բագրատունոյ աշխատութեան մէջ՝ պիտք է այս գլխից նախազգուշացնել մեր ընթերցողներին միանդամ ընդ միշտ, որ եթէ ստիպուած քննադատենք մեր այս գրքի շարունակութեան մէջ նորա կարծիքները, ոչ եթէ այն բազմերախտ

ծերունոյն վարկը նսեմացնելու և կամ նորա բազմապիսի գրական երկերը ընդ վայր հարկանելու նսպատակաւ է իմ արարքը, ոչ, այլ միայն թէ ճշմարտութիւնը վերականգնելու համար պիտի ստիպուած լինինք ժխտելու ամեն թիւր կարծիքներ, թէպէտ և այդ թիւրը պատկանելու լինէր որևէիցէ մի նուիրական անձի: Ոչ ովչկայ անսխալական, և մեզ ամենից այդպիսի սխալներ սպասելի են ամեն ժամ:

Եւ որովհետեւ հարկ է մեզ այստեղ անհամաշափ քերթութեանց մէջ ընտրութիւն առնել և կանոնաւոր չափ սահմանել, հարկաւ ստիպուած պիտի լինինք Բագրատունեան քառանդամը հերքել միայն այն մասին, որ նորա լետադաս անդամները առհասարակ քառավանդ սուղ անդամներից կազմուած լինելով՝ նոքա չեն կարող լայտարար նշաններ լինել փոփոխակի սղութեան և երկարութեան և արտայալտել արագութիւն կամ դանդաղութիւն, ուրախութիւն կամ տրտութիւն և այլն: Միանման անդամները միշտ միակերպ արտաքերութեան ամանակ ունենալով չեն կարող սղութիւնը և երկարութիւնը բացայալտել, և եթէ կամենում ենք անդամները առողջանութեան պայմանաւ իրարից զանազանել, հարկ է որ տարբեր լինէին և նոյցա վանդերի քանակութիւնը: Անհամաշափ քերթութեան այս պայմանը ինքն Բագրատունին ևս չէ ժխտում, ահա և նորա խօսքերը. „յոլժ իմն առաւելութիւն ունի այս ազգ (անհամաշափ) տաղավութեան քան զգուգավանգն. զի ոչ միայն ազատ է 'ի ձանձրալի նոյնաձայնութենէ տողից և անդամոց, այլ և զի ըստ պատշաճի երագընթաց սղութեան և ծանրադանդաղ երկարութեան բառիցն և բանին ունի յարմարել. ուր զուգավանգն նովին ոտիւք հարկի ասել զօդաթուիչ ոլացս երիվարի և զյամրաքալ գնացս եզանց... և կամ զեռանդն բարկութեան և զվհատութիւն տրտութեան. յայսմ իսկ անզուգական են վեցոտանիքն յունաց և հոռոմոց...“ (տես նոյն լառաջաբան երես 18) Բագրատունոյ այս խօսքերից պիտի հաս-

կանալ—որ զուգավանդ քերթուածները չեն կարողանում արագութիւնը և դանդաղութիւնը, բարկութիւնը և տրտութիւնը արտայալտել, այլ այդ սղմանէ կարի իմն առաւելութիւն ունին անհամաշափ քերթուածները՝ որոնք ըստ պատշաճի սղութեան և երկարութեան բառիցն և բանին (անդամոց և տողից) ձեռնահաս են լինում այդ պաշտօնը անթերի կատարել: Ահաւասիկ սոյն այս նպատակաւ հարկ էր որ հագրատունին իւր ընտրած տողերի լետադաս անդամների մէջ անխտիր թուլատրէր եռավանդ և քառավանդ անդամներ՝ որպէսզի քառավանդները սղութիւն և եռավանդները երկարութիւն արտայալտէին: Սակայն նա յանկարծ մտքի փոփոխութիւն կրելով՝ արտաքսում է եռավանդ անդամները երկվանդների և հնգավանդների հետ 'ի միասին, և իւր վերոլգրեալ առաջարկը գրէ թէ մնում է անկատար: Ահա և իւր խօսքերը մօտաւորապէս „զի ուր նախնիքն զանդամսն անխտիր եռավանդ, այլ և երկվանդ և ուրէք հնգավանդ դնեն և եղանակօք նուագացն սղեալ և երկարեալ լնուն զշափն... (մեք զանց արարեալ զնոքօք զբերեարմար նուագաւորսն միայն ընտրեալ ընկալաք:“ Զախտի զարմանանք արդեօք թէ այն անձը՝ որ տաղաշափութեան մէջ անդամների սղութիւնը և երկարութիւնը անզուգական առաւելութիւն էր համարում, բնչպէս լանկարծ ապախտ է առնում մեր նախնեաց կիրթ ճաշակի ընտրութեամբը և անտես առնելով զանազան սուղ և երկար անդամները ընտրում է միայն միատեսակ քառավանդ անդամներ իւր լետադաս երկու անդամների համար առհասարակ: Կանոնաւոր քերթուածների լետադաս անդամների մէջ թէ երկվանդ և կամ հնգավանդ չպիտի մուտ գործեն, դորան մենք էլ համաձայն ենք, որովհետեւ այդ ազատութիւնը պիտի թողունք անկանոն քերթութեանց համար, բայց կանոնաւոր քերթուածների մէջ հարկ է գոնէ եռավանդները թուլագրել, որպէսզի քառավանդների հետ 'ի միասին սղութիւն և երկարութիւն արտայալտէին:

Թերես Բագրատունոյ այդ երկխօսութիւնը ծնանում է այն նախապաշարմամբ թէ—Հալոց լեզովի մէջ գտանվում են սուղ և երկար վանգեր, որոց միջոցով և տաղաչափութեան մէջ կարող ենք սղութեան և երկարութեան խորհրդաւոր իմաստներ արտալայտել։ Սակայն հայկական ոչ տառեր և ոչ վանգեր այդպիսի մտացածին զօրութիւն չունին, և եթէ Բագրատունին անհամաչափ քերթուածների մէջ սղութեան և երկարութեան հոտ է առնում, այդ նոցա տմբողջական անդամներն են միայն, որոց բազմավանգները սղութեան և փոքրավանգները երկարութեան պաշտօն են կատարում։ Ոչ եթէ միայն Բագրատունոյ բաղձանօք, այլ և անհամաչափ քերթուածների քաջակիրթ օրինակներով այն եղբակացութեանն ենք հասնում, որ եռավանգ անդամներ հարկ է անխտիր թոյլատրել յետադաս անդամների մէջ։ Այդպիսի օրինակներ տալիս են մեզ նախ առաջինն վիպասանական երգերի 44 տողերը, որոց թէ կրճատ տողերը և թէ երկար եռավանգ անդամները՝ միւսերի հետ անխտիր դասաւորելով յոյժ աջողապէս արտալայտում են սղութեան և երկարութեան խորհուրդը։ Եւ երկրորդ՝ շարականներից օրինակներ ունենալու համար աւելի բարւոք է հետազօտել նոյն Բագրատունոյ առաջ բերած օրինակները (նոյն լառաջ՝ երես 12 ծանօթ.) ուր որ գտանվում են բաւական թուով միայն վերնադրեր, և ոչ քերթուածքների տողադասութիւնք։ Եւ այդ շուրականների մի առ մի հետազօտութեան աշխատութիւնը լանձն առնելուց յետու այն եղբակացութեան ենք հասնում; որ նորանցից ոմանք ինչպէս են „Ու յանէից Գոյացուցէր.՝ ’Ի գէշէրէն յորում մոտիւր. Ու անգէն և անհնէնին. Վարդագոյն վառեւու ծաղ էլ. նաև Ներսէս Շնորհալոյ շարականները „Ու արտիւր պարւետիւն. Այսօք որ էն ’ի յերէնն. Ու պարական էրաբարանն. Նորուհայտ պահէւուր. և ալին, նոյնպէս և նարեկացոյ տաղերը „Սէառ էմ և գէշէյին. Աւետին մէծ խորհրդոյ.՝ Թէ սոքա և թէ նմանապիսի քերթուածները անշուշտ համարուեն, բայց առանց

ձայնայանգի։ Որովհետեւ այն սակաւաթիւ զարտուղութիւնքը՝ որոնք նկատվում են իւրաքանչիւր քերթուածքի մէջ, նոքա չեն բաւական անհամաչափութեան գրաւական լինելու. մեր այժմեան համաչափ քերթուածների մէջ անդամ երեսն նշանաբել են այդպիսի աննշան գարտուղութիւնք, որոնք երբէք մեզ չպիտի առիթ տան կարծելու. թէ անհամաչափ են նոքա։ Ուրեմն այդպիսի անվաւեր և համաչափանման օրինակներից ’ի գուրէ թէ անհամաչափ քերթութեանց համար վկայութիւն բերենք։ Սակայն այս հետեւեալ շարականները ինչպէս են „Ա.հուռու էս լագուառու. Ծագումն հրաշալի. Անըն ինըն բանն Ա.սպառած.՝ ’Ի սպառնգանէն. Նշանաւ ամենայաշն. Աղաւանինեցա. Այսօք սրբոց հայրապէտուց. Սուրբ էս տէր և ապայն “ սոքա և նմանօրինակ քերթուածները անխտիր եռավանգ և քառավանգ անդամներ ունին իրանց յետադաս ամեն անդամների մէջ։ Եւ գրէ թէ ոչ մէկը ճշտիւ Բագրատունոյ ընտրութեամբը չեն վարվում։ Ահաւասիկ շատերից մի քանի տող օրինակ։

Շնորհեա մեզ տէր—արթնութիւն—ընդ իմաստուն—իւստանայն Եւ գհուգոց—մէրոց—շապանքն—պայծառացու։ Ծագումն—հրաշալի—որ անյայտ—էր ’ի մէնջ, Եւ բանն—հայրական—անընմըռնելի, * Հուր—փալլակնացեալ—և ’ի մարմնի—բնուինյան Անվնաս—պահելով—շարարածն—ամենայն։ Ծագումն—հրաշագործ—որ ’ի կուսէն—ծագեյան։ Ճառագույնէլու—զարարածն—ամենայն, * Երկինք—ցընծային—և էրիւր—ուրախանալը, Եւ Քրիստոս—Աստղւած—ընդ մարդկան—շըզ էյտ։ Անսկիզբ—ըն բանն Աստուած—որ վասըն մեր—համբեր մահու. Բառնալով—ըզգատակնիք—անիծիյն—առ ՚ի մէնջ։

* Աստղանիշ տողերը նոքա են, որ կը ճատ լինելով խառն տողակաբգ են կազմում։ Բայց գծանիշ անդամները անխտիր գործադրուած եռավանգներն են յետադաս երկու անդամների մէջ։

Զի զԱստուած—բոլորից—ո՞լոյնք—ո՞լոյնք,
Էակցին հօր—հետեւալ—ստացան ըզթագ—ըն պարծանաց:
Որոշեալք—'ի կրից կարեաց—'ի Քրիստո—արձանացեալք:
Զի հաճութեամբ—խոնարհեալ—ըստույի—ըստույի,
Թողութիւն շնորհեսցէ—մէր բառում—յանցանաց:
Օձաջամբ—պատրանօք—ըն ճաշակեալ—'ի պըտջն,
Եւ եղեւ—վալրաքնակիւ—մայրաքաղաքն—Երուսաղէմ:
Նըշանաւ—ամենայաղթ—խոչէւլու—չո Քրիստո,
Պահպանեաւ—զմեզ մարդասէր—յաներեսոյթ—լուշանյն:
Որ 'ի վերալ սորա—տարածեցեր—պահպան—բազուկը քո:
'Դ միւսանգամ—քո գալրստեան—յէրեւլ—սուրբ նըշանիս,
Արժանի—արա զծառալս—քո վերըստին—նորոգման:
Ապաւինեցաք—'ի խաչ քո—Արարէլ—յաւիտենից,
Որ ետուր—մեզ պահպան—յաղթող ընդդէմ—լուշանյն:
Գողացաւ—թըշնամին—ըստ յայտնէլ—սուրբ լուսէն:
Ալսօր—արարիչդ—արարածոց, *

Որ նորահրաշ—արարչութեամբ—զարդարեցեր—զեկեղեցի,
Ըզքեզ—բարերանեմք—Ասպլուած—հարցըն մերոց:
Աստուածածին—մայր լուսոլ, *

Արեգական—արդարութեան—արև-ելք, *

Որ 'ի խաւար—աշխարհի—ծագեցեր զլոյս—ըն գերազանց:
Աւետէր—առ սուրբ կանալս—ոէր յարեալ—'ի մեռելոց:

Ալսպիսի օրինակներով ևս հաստատելուց յետոյ մեր կարծիքը, գուցէ ոմանք հարց առաջարկեն թէ—ուր է ապա սուղ և երկար անդամների զօրութիւնը, որ ամեն անհամաշափ քերթուածների մէջ պիտի որևէից մի ներքին խորհուրդ արտայալտեն—։ Ալդ մասին պէտք է իմանալ, որ ոչ ամեն տեղ և ոչ ամեն քերթող ձեռնահաս են լինում սղութեան և երկարութեան յալտարար նշաններով արագութիւն կամ դանդաղութիւն արտայալտել, և ոչ թէ միայն մեզանում այլ և յունաց և հոռոմոց մէջ անգամ անտեղի է ալդպիսի

մանրակրկիտ ճշտութեան հետամուտ լինել։ Եւ նաև ինչպէս երևում է, եկեղեցական քերթողները աւելի քերթութեան այլ հանգամանացը ուշ դարձուցին քան թէ սուղ և երկար անդամների խորհրդաւոր դասաւորութեանը։ Սակայն թէ արդեօք կայ մեր քերթողական արհեստի մէջ այդ հմտութիւնը, մենք պիտի ջանանք մի ուրիշ անգամ ապացուցանել, բայց թէ ինչու այս ինչ քերթողները ուշ չգալուցուցին այդ հանգամանացը, պիտի ասենք որ—Մեզ հարկ է որ միայն մեր քերթողական արուեստի մէջ սղութեան և երկարութեան յալտարար նշաններ ունենալ, բայց թէ քերթողներից ոմանք այդ քերթողական պայմանը չիմացին և կամ չկարողացին պահպանել, այդ դիպուածում մեղը արհեստինը չէ, այլ քերթողին և կամ մի այլ հագնամանաց՝ որոնք արգելառիթ եղան այդ ճշտութիւնը պահպանելու։

Այսքան մեր խօսքի այստեղ երկարացնելը միայն այն նպատակաւ էր, որ հնարաւոր կացուցանեինք բոլոր անհամաշափ բազմատեսակ տողերից ընտրել այնպիսի կանոնաւոր չափ, որ թէ ախորժալուր լինէին, և թէ բովանդակէին իրանց մէջ, ինչքան կարելին է, անհամաշափ քերթութեան պայմանաւորեալ սղութիւնը և երկարութիւնը։ Այս դիմամբ Բագրատունոյ քառանգամի մէջ մեր ներմուծած փոփոխութիւնը թէպէտ և աննշան, բայց մեզ պիտանի էին միայն այն մասին, որ մի փոքրիկ փոփոխութեամբ մի մեծ թերութիւն ենք լցուցանում։ Եւ այս առաջարկը ոչ եթէ ինքնահնար՝ այլ հաստատուած է նոյն իսկ Բագրատունոյ վկալութեամբ և հիմնաւորուած նախնի քաջակիրթ օրինակների վերալ, որոց մի քանի նշանքը պիտի տեսնենք յետոյ։

Աւելորդ չէր լինիլ այստեղ բացորոշ սահմանել անհամաշափ կանոնաւոր քերթութեանց սահմանափակ կանոնները՝ ինչ որ հարկաւոր են նորա ամեն տեսակ եղանակների մէջ։ 1. Ամեն տեսակ անհամաշափ կանոնաւոր քերթողական տողերի մէջ աւելի քան քառավանդ անդամ չպէտք է թոյ-

լադրել, որպէսզի չափազանց ազատութեամբ քերթուած-
ները չհաւասարուին արձակաբանութեան հետ։
2. Իւրաքանչիւր տողի նախադաս անդամը կարող է բաղկա-
նալ կամ միավանգից, կամ երկվանգից, կամ եռավանգից
և կամ քառավանգից ըստ պատշաճի տեղոյն։
3. Բայց նոցա ամեն լեռադաս անդամները հարկ է որ բաղ-
կանան անխտիր կամ եռավանգից և կամ քառավանգից։
Այսպիսի կանոնաւոր չափերը դիւրաւ կարելի է զանա-
գանել անկանոններից, որ այս վերջնոյս տողերի մէջ կարելի
է ներմուծել հնգավանդ և վեցավանդ անդամներ ևս, նաև
միավանգ և երկվանգ անդամներ նորա տողերի ամեն մի ան-
կիւնում։ Եւ թէպէտ ամեն անհամաչափ քերթուածների ըն-
թերցումը պիտի կատարուի ճիշտ առողանութեան պայմա-
նով, բայց այդ գդուշութիւնը առաւելապէս պիտի պահպա-
նել անկանոն քերթուածների մէջ, որովհետև նոցա անդամ-
ների այնքան ազատ դասաւորութիւնը միայն կարելի է որո-
շել ճիշտ առողանութեան պայմանով և ոչ վանդաչափով։

մանաւ աջում է ամ դշտղիմ դիմքը մարտասարդի հմաց
ով կայի շնչ մայստեռաւոյս քնն զմբաւ այս ծցիլիս այս
պատասխան աօրս մն մատելում զնն ենք գմիւս ու զմիւ
դիմքը մարտասարդի և դիմանու կայի զեւազգուց ցոյն
հայրաց, և այժմասդ վերածա, և սերամի պատասխանը
այս դիմքը քնն զցմանարան զույց ներ մէմի և ցղմքը
պայման ընդ ծառաւի ուսից և ուժութեան հայրաց
առ առաջար ԱՆՑՍՄՊ ԵՐԿԱՆԴԱՄ ՏՈՂԱԿԱՐԳ, զար ու մշեց
փարիցի Ֆել ցոօրդն մայթեազնասուր յացն դիմքու մարտ
այս այստպատճեն ՎԱՀՍԴԻՆԻ ՎԻՊԱՍՍՆԱԿԱՆ ԵՐԳԸ Խայրան և
անց դիմանաւու բամ ցղուց մարտարի կաց աղու մշեամին
զմացու մայիս Խոյեանաւ քոյզաւ բառաւ զմացի կաց կամ
կաց, ԱՆՀԱՄ ԶԱՎԻ կանոնաւոր քերթութեան քառանդամ
չափը՝ որով Հ. Բագրատունին իւր քերթուածները
բարգաւաճեց, արդէն նկատեցինք մեր նախընթաց գլխում,
որոց և օրինակ բաւական էին այն տողերը՝ որ շարական-
ներից առաջ բերինք: Բայց մեզ հարկ է նաև 'ի նկատի առ-
նուլ անհամաչափութեան այն ամեն կանոնաւոր եղանակ-
ները, որոնք խուսափեցին. Բագրատունոյ հայեացքից, բայց
պիտառութեամբն թերեւ աւելի ևս գերադաս էին քան նորա
քառանդամը: Նետագօտութեան արժանաւոր մի ալգակիսի
քերթողական նիւթ տալիս են մեզ նախաքրիստոնէական
գարու Վիպասանական երգերը՝ որոնցից նախ և առաջ Վա-
հագնի երգը առնունք քննութեան:

Մեր նախաքրիստոնէական դարու քերթողական ճարտարութեան վերայ գաղափար կազմելու համար առ ձեռն ունեցած մեր նիւթերը անչափ սակաւաթիւ են, և ինչ որ ունինք, պիտի շնորհակալութիւն մատուցանենք բազմերախտ խորենեան Ծերունոյն, որ քաջութիւն ունեցաւ չնուածուելու ժամանակին կրօնական խտրութիւններից, և արժան համարեց հին հեթանոսական պատմութեանց հետ աւանդել մեզ մի

քանի վիպասանական երգերի բեկորներ: Եւ թէպէտ ամեն բան հակիրճ աւանդեց մեզ, այսուամենալիւ գոհ պիտի լինինք, որ ունինք գէթ մեր հնութեան մի աղօտ նշարանքը, որոց շարքումը պիտի համարել և Վիպասանական երգերի նշարները, ինչպէս են Վահագնի, Արտաշիսի և Վարդգիսի երգերը: Մինչև ալժմ բոլոր քննաբանները ալդ երգերի քաջակիրթ կազմութիւնից, և ներկուու հիւսուածքից մակաբերեցին որ դոքա պէտք է ունենան չափական արուեստ, սակայն տողերի սխալ դասաւորութիւն արդեօք, թէ վրիպակ կէտագրութիւնն պատճառ եղան, որ ցայսօր անբացալաւ մնացին նոցա քերթողական չափը: Այդ պատճառների քըննութիւնը այստեղ աւելորդ համարելով՝ միայն այսքանը ասենք, որ դոքա անհամաչափ կանոնաւոր քերթուածքներ են, և նորանցից Վահագնի վիպասանական երգը ոչ ալ ինչ է, եթէ ոչ անհամաչափ քերթութեան երկանդամ կանոնաւոր եղանակը՝ որոյ տողերի մէջ ճշտիւ պահպանուած են նոյն քերթութեան կանոնները: Ահաւասիկ և նոյն իսկ երգը անդամների և տողերի բաժանած:

Երշնէր երին—և երին,

Երշնէր և—ծիրանի ծով,

Երին ՚ի—ծովաւ ունիր և անորաւած:

Բշ իտրին—եղեգնին.

* ՚ի ՚ու եղեգն փոշ—ծուխ երնէր, այսուամասնի առար

* ՚ի ՚ու եղեգն փոշ—բոյ երնէր, այսուամասն ցըզ վժրաւ

ե—՚ի բոյն—պատանին.

Վաղէր ՚ու—հուր Շիր ունիր,

Ապտ ՚ու բոյ—ունիր Տօրու,

* ՚ի ու ՚ու ՚ու ՚ին—արեգունին:

* Տաղաչափական օբէկտով ընդունուած է ընթերցման ժամանակին ձայնուուրներից առաջ զեղչել ըստ, և ևայլն, այդ օբէկտը պահպանվում է նաև համաշափ քերթուածների մէջ:

Թէրես ոմանք երկբայութիւն յարուցանեն հարց առաջարկերով՝ թէ—ինչ վիստ ունինք Վահագնի այս երգը այսպիսի տողակարգութեամբ դասաւորելու—: Այսպիսի հարցմանց մեր պատասխանները պէտք է լինին, ՚ո՞՚ որ հնագոյն կիրթ քերթուածները տողակարգելու համար՝ մենք աւելի պէտքն է ուշ դարձուցանենք, որ նոցա տողերը առանց բոնութեան բնական հանգիստ առնուն: Այս նկատմամբ Վահագնի այս երգի տողադասութեան մէջ աննկատելի են որևէ անհարթութիւնք, այլ նորա ամէն մի տողերը տաղաչափական կիրթ ճաշակով սկսուած և աւարտուած են: Երկրորդ՝ անհամաչափ մանաւանդ ճարտարահիւս քերթութեանց տողադասութիւնը անսխալ կարգելու համար հարկ է ուշ դարձուցանել և նոցա սուղ և երկար անդամների պայմանաւոր կիրառութեան վերայ, որ և ալս կողմանէ ևս ճշգրտվում են վերոյ դասաւորեալ տողերը, ինչպէս որ պիտի նկատենք մի ալ անգամ: Եւ Երկրորդ՝ որն գըլ թէ մի անհերքելի ապացուց է, պիտի նայենք թէ արդեօք այս տեսակ քերթուածների օրինակներ կան ալ ևս մեր ազգային տաղաչափութեանց մէջ: Այս վերջին հետազօտութիւնը աւելի ևս աներկայ է կացուցանում մեր ենթագրութիւնը, որովհետեւ Վահագնի երգի պէս երկանդամ անհամաչափ քերթուածք նկատում ենք տարածուած մեր թէ գրականական և թէ ժողովրդական քերթուածների մէջ: Ժողովրդական երգերից կարող են օրինակ լինել մեզ Վարդափառի և այլ քառասող քերթուածները, որոնք բոլոր ժողովրդական խաւերի մէջ տարածուած են, որոնցից ահա մի քանի տող օրինակ:


Արին—արև գունի,

Իմ եարևն—գեղարքունի,

Գեղարքունոյ—ուրիշ փուլ գոյ,

Բաղնի իմ—եարև առն գոյ:

Հայ—է բնոյ, է բնոյ,



Տշայն—չեր ակըն աս. . մայոցից քանի ուղիծ
Սիրել էմ—ակըն երեսին,
Բւհան—լևին երեսին,
Ու իմ եւրին—ինչ չե առ. . մայուսուր զմե զան

Այսպիսի քերթութեան մի գեղեցիկ օրինակ ես կարող է
տալ մեզ այս հմայական աղօթքը՝ որոյ տաղաջափական կազ-
մութիւնը և հրաշապատում դէպէբը համոզում են մեզ
ենթադրելու, որ այս և սորա պէս երգերը հեթանոսական
դարու մնացորդ են:

Պատուեց—ան լւաց, ամսոն փայտեամա դրդի՛
Դուրս եւտու—ան չին, ամս զմանի տառապատ ըմանի
Դուրս եւտու—ան մարտը, առու և յմացուձուր չա
Դուրս եւտու—ան օչը: զմանի տառապատ զուտան
Սև օչի մէ—առ չը ջուր եր, առուր լոյն ոճ նախացք
Միւս աչը—իրան էր. . անրան չա մի զմանի
Թուի—աչտուրի, առու խայր, և ըրցարս մաքայմ
Եւի—աչտուրի, առու զմանի մի զմանի նախա
Կանաչ—աչտուրի, անզմի ոչ ոճ մի զմանի նախա
Կապոյտ—աչտուրի զմանի նախացքապատ և բայթիմ
Զար աչը—ապաչտի:

Գրականական շրջանից կարող ենք օրինակ առնուլ Գ.
Նարեկացին, որ բազմաթիւ օրինակներ ունի իւր աղօթական
և այլ քերթուածների մէջ այսպիսի երկանդամ անհամաչափ
քերթութեան, ինչպէս են և նորա այս տաղերը:

Դուռը վարտը—վաս առեւու
Դ վեհի վարտին—արդինի,
Դ վեր—ի վերս վարտի
Ծառաւէր—ծառին ծառային. . .
Գունդ գունդ—կաշչա գունդ:
Յօրինաւուծ—երինի շուրջանակ:

Երգ—դարձանաւի,
Երգ—շարժվարժենի,
Տեղի եղեր—բարեւերպին.
Խորհուրդ—խորհուրդ հայելու,
Զարու—եղանեց զարու.
Սոճ՝ ՚ի սոճ—յետից
Սարդու—եղեգ սաշցն անիոյն,
Մարտն օրինօրին—նշառլէնի առան:
Այսպիսի օրինակներ անպակաս են և եկեղեցական երգերի
մէջ, որոնցից առաջ բերենք այստեղ այս երկու շարականները:
Որտ առիս—իշխանութիւն
՚ի վերայ—առ գիւղի մարտին զմանի զուր
Արշակունյաց—ըլլի՛ զ
՚ի չափունոյ—մշցոյ մերոյ:
Խաչակըուց—ընդ քիսունի,
Եւ շնդ նըմն—լագուրութուց,
՚ի մըսանգամ—գուլըսունուն նորս
Սըսպելցոյ—էս դափուրուց,
Թուղութիւն—շնորհեցէ
Եւ մէդ—մշառուց:
Արժալասիրութեանը—մոլու յուրուայ՝ ամսունուր
Զիւր ըշմեծ—զվարտուուին
Ընդ նըստան—ապծալու
Հրէից—ըն մասնիւ:
Ընդ որում ես—Հայքութեցի,
Ասէ զնու—կուլըրուց.
Ո՛չ հայքոյր—նէնգութեան, ամսի ամսանասուն
Նըստն—և առուլ մահու:

ՄԵՐՀԱՅԻՆ—յինչէնէ
ԶԱԿՈՒԹԱԾԱՅԻՆ—առըլլ հոգին,
ԵՐԵՎԱԿԱՆ—ըշտառական,
ՈՐՈՇՆ դաստիրք արին— շերեւ:

Կանոնաւոր քերթութեանց համար մեր առաջ բերած օրինակների մէջ երբեմն հանդիպում ենք այնպիսի զարտուղութեանց ինչպէս են հնգավանդ և վեցավանդ անդամներ և ալիքն, որոնք անկանոն քերթութեանց մէջ միայն կարող են գործադրութիւն: Այդ մասին պէտքն է կըկնել մեր միւս անգամ ասածը, որ Նախնիքը կանոնաւոր և անկանոն քերթութեանց սահմանը ճշտիւ չեն որոշել, և մենք կանոնաւոր քերթուածների համար պիտի այնպիսի օրինակ առաջ բերենք, որոց մէջ անկանոն զարտուղութիւնք սակաւ ենք նշանաւում, նոյնպէս և անկանոնութեան համար պիտի այնպիսի օրինակ առնունք, որոյ մէջ կանոնաւոր տողերը սակաւաթիւ են: Այսպէս և այն ամեն քերթուածները շարականների մէջ պիտի համաչափ անուանենք, որոնք շատ սակաւ անհամաչափութեան նշանաւում են ցոյց տալիս:

Մեր վերոպղբեալ փաստերը եթէ համոզեցին մեզ, որ
ազգային քերթութեանց մէջ սովորական էին անհամաչափ
երկանդամը, և որոց մի գեղեցիկ օրինակ ներկայացնում է
մեզ Վահագնի վիխասանական տասնտողեան այս հատուածը,
այստեղ նաև հաշկ է մի հայեացք ձգել այդ երգի այն հան-
գամանաց վերա՝ որ ձայնայանդի նմանութիւն ունի։ Սա-
կայն երգի ներքին ներդաշնակութեանը նայած պիտի այն
հետեւութեան հասնենք, որ քերթողը ոչ եթէ ձայնայանդ
այլ նմանաձայնութեան դաշն է կամեցել պահպանել իւր
տողերի մէջ, որև այն նուրբ և փափուկ ներդաշնակութիւնը
աւելի ևս ախորժավուր է քան ամեն ձայնայանդներ։ Այդպիսի
նմանաձայնութեան ներդաշնակութիւնը ըմբռնելու համար
արժան է ուշագիր նկատել նորա տողերը միառ մի, զորօրի-

Նակ—Վահագնի Երգի առաջին երեք տողերի մէջ զգալի են երչ, ծո, ծի ձայների զուգախառն կրկնութիւնը, չորրորդ տողի մէջ կրկնվում է չի Երկու անդամ. Հինգերորդ և վեցերորդ տողերը միանման բառերի կրկնութեամբ վայելչապէս բաղհիւ-սուած են, ութերորդ իններորդ և տասներորդ տողերը հոռ, ու, ունչ ձայներով հրաշալի ներդաշնակութիւն են կազմում: Բացառութիւն ունի միայն եօթներորդ տողը՝ որն իւր ան-դաշնակ կազմութեամբ աւելի ևս ազդու է կացուցանում Վահագն արեգի հրաշալի ծնունդը: Այսպիսի օրէնք նկատ-վում է առհասարակ և ժողովրդական քառասող քերթուած-ների մէջ, որոց երրորդ միջանկեալ տողը սովորաբար թողն-վում է առանց ձայնայանգի և նմանաձայնութեան: Մտա-դրութեան արժանի է այս Երգի մէջ նաև նմանաձայնութեան այն պայմանը՝ որ կարծես թէ մեր շըթունքների շարժուածքը մի ներքին կապ է հաստատում նորա իմաստին հետ. ինչպէս „Հուը հեր ուներ“ արտաբելով՝ մեր շըթունքը մի զոյտ համբուրի շըջան է կատարում այն լուսապայծառ դիւցազնի նորածնունդ պատկերը համբուրիւ մեծարելու:

Այսպիսի նմանաձայնութեան մէջ նշանաւոր էր Նարեկացին՝ ինչպէս որ նկատելի են ողորա և այն օրինակներից՝ որոնք առաջ բերինք այստեղ: Նոր քերթողների մէջ նմանաձայնութեան ձգտումն ունին մխիթարեան հարք, մանավանդ քաջ է Բեշիկթաշլեանը, բայց ուղղված գատելով՝ նոցամէջ շատ սակաւ ենք նշանաւում այն նուրբ և խորհրդաւոր ներդաշնակութիւնը, ինչ որ նկատելի են Վահագնի այս սակաւաթիւ տողերի մէջ:

ԱՆՀԱՍՏԱՎԻՔ ԿԱՆՈՆԱԿՈՐ ՔԵՐԹՈՒԹԵԱՆՑ

ՄԻԱՆԴԱՄ և ԵՐԱՆԴԱՄ ՏՈՂԱԿԱՐԳԸ

Վենք նկատեցինք արդէն անհամաշափ կտնոնաւոր Ք քերթութեանց քառանդամ և երկանդամ տողակարգը շարականների, Վահագնի վիպասանականի և այլ քերթուած-ների մէջ, այժմ մնում է մեզ մի հետևութիւն ևս եզրա-կացնել ենթադրելով—որ եթէ մեր նախնիքը գիտէին 'ի կեր առնուլ քառանդամ և երկանդամ անհամաշափ եղանակները, անշուշտ հարկ է որ նոքա ծանօթ լինէին այդ տաղաչափու-թեան նաև միանդամ և եռանդամ եղանակների հետ՝ որոնք անհրաժեշտ և յարակից մասունքն էին այդ նախնի քերթո-զութեանը։ Եւ այդ նկատմամբ հետազոտելով մեր ազգային քերթուածները իսկապէս նկատում ենք միանդամ և եռան-դամ քերթութեանց օրինակներ ևս, որովք և աներկբայ պի-տի մակաբերել որ այդ քերթութեանց միանդամ, երկանդամ, եռանդամ և քառանդամ տողակարգները 'ի հնուց խոր ար-մատ ձգած էին ազգային քերթողական արուեստի մէջ, որոն-ցից հատուկոտոր օրինակներ միայն հասին մեզ։

Այժմ առաջ բերենք այստեղ միանդամ և եռանդամ քերթութեանց մի քանի օրինակներ՝ որով և լրութիւն կառնուն անհամաշափ քերթութեանց ըոլոր չորս եղանակները:

Միանդամ քերթութեանց համար կարող են օրինակ լինել այս ժողովրդական հմայական աղօթքները:

Բանը սուրբ, Լուսնիցը նոր,
Տեղը հշուաբա, Գործառութը չըս,
Թըլուա լահ, Եպրաման առակեմ,
Պաշելէ արքալ Թու շապեմ. . .
Պատապ խահ. . .

Միանդամ քերթուածներ պիտի համարուին և պատարագամատուցի այս աղօթքները, ինչպէս որ և դպրի երաժշտական եղանակն է ասկացուցանում:

Ա.Հեւ	Ա.Արտառծ - Եր
Կայոցուտ,	Եւ - պէր Եր
Երէեւլեւ	Երևեցու Եղ,
Կայոցուտ,	Օբհնէ ալ
Բարւոչ	Եւէ ալ
Կայոցուտ,	Անումիք
Եւ նոյեցարուտ	Տէ առա:
Ըստաշուլետմբ:	

Եռանդամ տողակարգի համար առաջ ենք ըերում ժողովրդական ալս առակլ՝ որոյ տպագրեալ ամբողջ օրինակը կայ քնար Հայկականի մէջ ընդ համարաւ 68. ուր որ վրիհակաւ են կէտադրուած և անդամները որոշուած:

Գայլը ու արջն—ու աղոթեսուին—են բարըշեր։
Հօրեղբօր և—ժուոր որդիք—են բարձեր,
Զայտուեսուին—մայէց—են օրհներ,
Առար,—մայէց ս' ռար,—աղջլարար ս' ռար։
Առաստան—երբ լուսայտ—յոր են ելեր,
Մին ճակի և—մ լընկի գար—մ' են ճարեր,
Հագերը—բաժանարար—գայլը են բարեր,
Զար—բարար չ' ռար,—բաժանարար չ' ռար։

Նարեկացոյ քերթուածների նոյնպէս և այլ շարականների մէջ ևս գտանդում են եռանդամի օրինակներ, ինչպէս և այս շարականն:

Զօրութեամբ—սուրբ խոչ է—ու Քընդու,
Որ հանգնեցը—'ի պրութեամ—աշխարհի,
Սա—պահեայէ ըռմեղ—յամենայն—փորչութեահ:
Քանչի 'ի մա—բարչբայար—Ասպաւած,
Եւ 'ի մա հեղեր—ըռմաբուտահան—սուրբ պարիւնուր,
Սա—պահեայէ ըռմեղ . . .
Եւ ու ու—մեսանգոմ—ըռմաբուտապիտ
Նշանաւ—խոչ է—յանցը աշխարհի,
Սա—պահեայէ ըռմեղ . . .

Այս եռանդամ քերթութեանց վերաբերութեամբ պէտք է ասել, որ դոցա կիրառութիւնը նախնեաց քերթուածների մէջ այնքան սովորական չէր, ինչքան որ քառանդամը և երկանդամը. այլ յաճախ նկատում ենք եռանդամ տողերը միշտ խառն գործադրուած քառանդամների և երկանդամների հետ 'ի միասին, որով և յարդարում են վայելուչ խառն տողակարգ և որոց օրինակներին շատ տեղ պիտի հանդիպենք մեր այս գրքի մէջ: Ոչ եթէ միայն անհամաչափ, այլ և եկեղեցական համաչափ քերթուածները մէջ շատ սակաւ ենք հանդիպում եռանդամ տողակարգի, և նոյն իսկ Շնորհալոյ համաչափ քերթուածները նոյն են հաստատում: Սակայն ուղիղը դատելով՝ եռանդամ տողակարգը աւելի պատշաճագոյն էր քերթութեանց համար, որովհետեւ ոչ այնքան երկանաձիգ տողեր ունին, ինչպէս քառանդամը, և ոչ էլ այնքան հակիրճ ինչպէս երկանդամը, այլ նոցա միջնակարգ չափը բաւական են քերթուածքի իմաստը ամփոփ բովանդակելու իւրաքանչիւր տողի մէջ: Այս կողմանէ գովութեան արժանի են մեր ալժմեան քերթողները որոց համաչափ քերթուածների

մէջ յաճախ նկատում ենք դէպ 'ի եռանդամ տողակարգի ձգտումն և նոցա վայելուչ կիրառութիւնը:

Միանդամ տողակարգի համար առաջ բերուած պատարագի երգերից երկու օրինակները՝ առաջին անդամ այսպիսի տողակարգութեամք նկատողը պիտի բացէ 'ի բաց ժխտէ ասելով թէ—դոքա քերթուածներ չեն: Բայց ոչ եթէ միայն այդ երգերը, այլ նաև ամեն անհամաչափ քերթուածներ մեզանում քիչ հետազօտուած լինելով՝ զարմանք չէ որ ոմանք հերքում են նոցա տաղաչափութիւնը, և կամ համարում են նորանց անհամ և անարուեստ: Այդ ամենի պատճառը նոցա քերթողական ճաշակի միակողմանի կրթութիւնն է, որ երկար ժամանակ ընդելանալով համաչափութեան հետ այլ ևս չեն կամենում բաժանուել նորա սովորական միակերպութիւնից: Սակայն ընդհանրապէս անսխալ է այն կարծիքը, որ ամենայն երգեր ինչպէս այժմ նոյն և հնումը չափական արուեստով էին յօրինվում, և տաղաչափական արուեստը ծնունդ է առած յատկապէս երաժշտական պայմաններին բաւարարութիւն մատուցաներու համար. հետևաբար ամեն եղանակառը երգ պիտի համարել տաղաչափութիւն, և մեզ հարկ է որոշ նել նոցա կազմութիւնը և չափը, և ոչ եթէ բոլորովին հերքել նոցա չափական արուեստը: Այս ընդհանուր օրէնքից կարելի է բացառութիւններ կազմեն որևէցէ մի աննշան երգ կամ հատուած, բայց այդ հագուագիւտ բացառութիւնները չեն կարող օրէնք համարուիլ, այլ մի անգէտ գրչի արդիւնք: Եւ ընդհանրապէս մեր Հայոց ամեն եղանակաւոր երգերը և անհամաչափ քերթուածները՝ պիտի համարուին տաղաչափութիւնք. թէպէտ և նոքա ըստ ոմանց անարուեստ, բայց ըստ ոմանց կիրթ ճաշակով են յօրինուած:



Ազգային հորժութ գլուխ զմանը պահանջ է Ա
ռաջ առ պատճեն ուղարկել Հայության շահը առ և առ առք
պատճեն հայութ Հայութ պատճեն պահանջ է Ա

ԽԱՌՆ ՏՈՂԱԿԱՐԳ.

ԱՐՏԱՇԵՍԻ և ՎԱՐԴԻԳԵՍԻ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ :

Անչպէս համաշափ քերթուածների մէջ նկատեցինք,
ոչ որինակ և անհամաշափ քերթուածները շատ անդամ
առն տողակարգով են յօրինվում, ալսինքն միւնոյն քերթո-
ածքի մէջ կարող են խառն դասաւորուիլ միանդամ, երկ-
նդամ, եռանդամ և քառանդամ տողեր ըստ համոյից քեր-
տողին և ըստ պատշաճի տեղոյն. բայց անդամների դասաւո-
ութեան կարգը միւնոյնը պիտի մնալ, ինչ որ որոշեցինք
իանդամ ընդ միշտ կանոնաւոր քերթուածների համար: Մեր
կեղեցական քերթուածների մէջ միակերպ և անխառն քեր-
տութիւններից աւելի տարածուած է խառն տողակարգը՝ որոց
րինակներին կարելի է հանդիպել զըէ թէ ամենայն շարա-
անների մէջ, նարեկացոյ ամեն քերթուածների մէջ, և նոյն
սկ Բագրատունոյ իւր քառանդամի համար 'ի վկայութիւն
ոչած շարականները ևս (տես Մշակա. երես 12 ծանօթ.)
նին շատ կամ քիչ խառն տողադասութիւնք, ինչպէս
կատեցինք արդէն նորանցից մի քանիսը մեր I. գլխում:

Գլխաւոր պատճառները՝ որ նախնի քերթուածների մէջ խառն տողակարգը աւելի կիրառութեան մէջ էր, այնք էին, որ սահմանական խառն եղանակաւ տաղաչափելը շատ դիւրին էր:

այն ամեն քերթողների համար, որոնք ուշ չէին դարձուցա-
նում տողերի և անդամների խորհրդաւոր դասաւորութեանը։
Երբերդ՝ մեծ ծառայութիւն կարող էին մատուցանել այն
ամեն հմտագոյն քերթողներին, որոնք անձուկ միակերպու-
թեան սահմանի մէջ չմնալով՝ աշխատում էին իրանց ոգեսո-
րութիւնը և սրտի յուզմունքը ոչ եթէ սուղ և երկար ան-
դամներով, այլ և կրծատ և ձիգ տողերով արտայատել՝ որոնք
աւելի ևս բացորոշ յայտարար նշաններ են հանդիսանում
քան անդամների սղութիւնը և երկարութիւնը։ Երբերդ՝ խա-
ռըն տողակարգը և նոցա տողերի բազմակերպ փոփոխութիւն-
ները այս առաւելութիւնը ևս ունին, որ ընդունակ են լի-
նում զանազան տեսակ եղանակաւոր ձայնի յարմարուելու և
նոցա ելեէջները կրելու։ Եւ չըրբեր մեր կրօնական քերթո-
ւածների մէջ նկատելի են երեեմն կրծատ և ձիգ տողերի
այնպիսի ճարպիկ դասաւորութիւն, որովք կարելի է լինում
պատկերագրել որեւից մի առարկայի գծագրութիւն, ինչպէս
որ մի քանի այդպիսի օրինակներ պիտի նկատենք մեր այս
գրքի մէջ։ Ահաւասիկ այդ և նմանօրինակ պատճառների հա-
մար նախնիքը յաճախ դիմում էին խառն տողակարգի օգնու-
թեանը։

Անհամաչափ կանոնաւոր քերթութեան խաւան առղա-
կարգի կատարելատիպ օրինակներ հանդիսանում են նախա-
քըսատոնէական դարու Արտաշէսի և Վարդգէսի վիպասանա-
կան երգերը՝ որոց մեր ձեռքն հասած մի քանի հատուկոտոր
տողերի ուշադիր զննութեամբ պիտի հետևացնել, որ այդ
քերթուածները հնումը ամբողջապէս տողերի և անդամների
կիրթ պայմանաւորեալ կիրառութիւնն ունէին: Ահաւասիկ և
նոցա տողակարգը, որոնք բաղկացած են միանդամ, երկան-
դամ, եռանդամ և քառանդամ խառն տողերից: Մենք այս-
տեղ մէջ ենք բերում այն ամեն տողերը, ինչքան որ մատ-
նանիշ ցուցանում է մեզ Խորենեան պատճագիրը. բայց Բնչ
նպատակաւ արդեօք ուրիշները Արտաշէսի երգից մի քանի տող

- քննութեան առնելով միւսերը թողնում են անուշադիր,
եթէ սոքա քերթուածք են միւսերը ևս նոյն չափն ունին:
Արդար շնորհ վեպասաններն երգել պողերը:
1. Հեծաւ—արի արքայն—Արտաշէս
 2. 'Ի սեաւ—ըն գեղեցիկ.
 3. Եւ հանեալ—զոսկեօղ—շիկափոկ—պարանըն,
 4. Եւ անցեալ—որպէս զարծուի—սըրաթե—ընդ գետըն,
 5. Եւ ձգեալ—զոսկեօղ—շիկափոկ—պարանըն՝
 6. Ընկեց 'ի մէջք—օրիորդին—Ալանաց,
 7. Եւ շատ—ցաւեցոյց—ըզմէջք փափուկ—օրիորդին՝
 8. Արագ—հասուցեալ 'ի—բանակն իւր:
 9. Տեղ ոսկի—տեղալը 'ի—փեսալութեան—Արտաշիսի,
 10. Տեղայր—մարգարիտ—'ի հարսնութեան—Սաթինկան:
 11. Տենչալ—Սաթենիկ—տիկին տենչանս՝
 12. զԱրտախոյը—խաւարտ և զտից—խաւարծի
 13. 'Ի բարձիցն—Արդաւանայ:
 14. Վիշապազունք—գողացան—ըզմանուկն—Արտաւազդ,
 15. Եւ դե՛—փոխանակ եղին: ¹⁾
 16. Արտաւազդալ—ոչ գլտեալ—քաջի որդւոյն—Արտաշիսի,
 17. Տեղի—ապարանից—'ի հիմնանալն—Արտաշատու,
 18. Նա անց գընաց—և շինեաց—'ի մէջ մարաց—զմարակերտ:
 19. Ճաշ գործել—Արդաւանալ—'ի պատիւ—Արտաշիսի,

¹⁾ Այս վիպասանական երգերի վերսգրեալ տողերը կանոնաւոր չափով
քերթած լինելով միայն նկատելի են մի քանի բացառութեաններ, որոնք կ'ամ
անկանոն տաղաշաբութեան պիտի համարենք և կ'ամ պէտքն է ննթագրել, ո՞ք
խորենացին ինքը այդ աննշան փոփոխութիւնները 'ի նկատի չառաւ, և կամա-
բառափոխութեան անելով վիպասանական տողերի մէջ յարմարեց իւր շարագրու-
թեան կարգին: Այս նկատմամբ եթէ այս տողը այսպէս բառերի տեղափոխու-
թիւն անենք, այլ ևս հնդավանդ անդամ՝ չեն ունենալ:

Եւ գործուածք:—ուն երին:

20. Եւ խարտաւանակ—լեալ նմին—'ի տաճարին վիշապաց: ¹⁾
21. Մինչ գու գնացեր,
22. Եւ զերկիրս—Ամենայն—ընդքեզ տարար,
23. Ես աւերակացս—որպէս—թագաւորեմ: ²⁾
24. Դու յոյս հեծցիս—յազատն 'ի վեր—'ի—մասիս,
25. Ըզքեզ կալցին—քաջք տարցին—յազատն 'ի վեր—'ի մասիս,
26. Անդ—կացցես և ըզլոյս—մի տեսցես,

Գ. Մարդկարուսի Հաղորդած պողերը.

Ո՝ տալը ինձ—զծուլս ծխանի—և զառաւօտն—նաւասարդի,
Հզվագել—ըն եզանց—և ըզ վագել—ըն եղջերուաց,
Մեք փնդ—հարուաք—և թըմբըկի—հարկանէաք:

Վարդգեսի վիպահան պողերը.

Հատուած գնացեալ—վարդգէս մանուկ
'Ի տուհաց—գաւառէն—զքասաղ գետով՝
Եկեալ նըստեալ—ըզշրեզ բլով
Զարտիմէդ—քաղաքաւ—զքասաղ գետով՝
Կոել—կոփել ըզդուռն—Երուանդալ—արքալին:

Մեր կարծիքը հնագոյն քերթուածների տողերը տրոհե-
լու մասին՝ արդէն բացատրեցինք Վահագնի երգի տողա-

¹⁾ Նոյնպէս հաւանական է թէ այս տողերը բայով և ոչ թէ գերայնե-
ըսկ լինէն կազմուած: զորօրենակ—

Ճոշ գրիծեաց—Արգաւան—'ի պարիս—Արդար կ'արձի:

²⁾ Նոյնպէս և այս տողը այսպիսի բառափոխութեամբ կարող է կանոնա-
բառ լինել, զորօրենակ—

Աւելանցաց—և ողովու—լափաւը:

Բայց ոչ եթէ հարի եմ համարում անընդամենք այս փոփոխութիւնները,
այլ թողնում եմ ըստ կամաց, ո՛վ ինչպէս կամենալ:

կարգութեան միջոցին, նոյնը պէտք է իմանալ և այս Արտաշէսի և Վարդգիսի վիպասանականների համար, որոց ամեն մի տողը աւարտ է առնում բնական հանգստեամբ։ Եւ կարծեմ որ, շատ սակաւ վիճակն նիւթ կունենանք նոցա տողերի տրոհման վերաբերութեամբ, եթէ միայն կիրթ ճա- շակով և տաղաչափական հմտութեամբ ձեռնամուխ լինելու լինինք նոցա քննութեանը։ Բայց միւս գլխաւոր ապացուցը այն է, որ այդ տաղաչափական խառն եղանակը նկատում ենք, որ շատ սովորական էին հնագոյն քերթուածների համար, որոց բազմակերպ խառն տողակարգուած քերթութիւնները լի են մեր ազգային և եկեղեցական երգերի մէջ, որոնցից ահա մի քանի օրինակ առաջ ենք բերում այստեղ, բայց սոցա աւելի ազատ եղանակները անկանոն քերթութեամբ՝ պիտի տեսնենք Նարեկեան Աղօթական քերթուածների մէջ։

Այս հմայական աղօթքը ունի միանդամ և երկանդամ խառն տողակարգ:

Եւ ի եւ լ յառ ա տ է լ ը , ա ս պ ա ր ո ւ զ մ ն ե յ ա յ ա ?
Ե ր կ ա լ ը — հ ե ն ց ի ե ր ա ս ,
Ո ն ց ո ր — լ ո ւ ա ր է լ ը .
Ս ա ս ա ս ա մ ե ա ն
Ս ո ւ յ ը Գ ե ր ք ի — ա շ օ լ ե ա ն
Վ ե ր ի չ ա յ ա — դ ո ւ ր ա մ է լ ի ի :

Նարեկացոյ տաղերից օրինակ ենք առնում լարութեան տաղը, որ կանոնաւոր չափ ունի խառն երկանդամ, եռանդամ և քառանդամ տողերով:

Փառաց — Քըիսպանի — ամենաղջոյ — յարստեւան . . .
Ելք սսմիշն — էն արծալի — լուծն էր սսի,
Եւ սսմարիշն — աբրիշմե,
Փակեր շարսծ — շարսն ման — հուլ մորդարկա. . .
Աս չափ ածէր — եղնամուլին,

Կանչը կեն՝ առանձիւ — ալլուստ-ալին. . .
Սայշեն՝ կ գեւ — գայր՝ կ գեւ
Եւ ճանչաւով՝ գայր մըստանքը — յերսուսով է մ:
Եւ որդիս՝ նոր սիրանի՝ նոր երգէնն զայս տաւլու
Փառաք — Քրիստոնէ, Այսօր — առքանից յաք:

Նոյնպէս և եկեղեցական ժամերգութիւններից բաւական են այս մի քանի օրինակները:

Անդրբետաւ—ըստ յԱսպուծոյ—ով էրջանիկ—սուրբ քահանայ,
Նըլանեւու—Ահարոնի—և Մավուսիկ—մարգարեկն,
Այս որ—ըսդգետուցն—եր յօրինող,
Զոր Ահարոն—մեշտ ըսդգետոց:
Յօրիներ—ողափաթաշան—ողոր ՚ի չորից—իազմաւ նիւթոց. . .

Հոգի՝ Աստղածոյ, — որ շ դասահեցք — որ շ խորհուրդ՝
Իշեալ՝ ի յերէնից հաստաբեն՝ ի յեւըս մեր, ո՛վ աղջ
Հեղմանք — արեան սրբութաղացնեց պատրիարքութեան մասին
Հանգո զեռդիս — մեր նազ եցէլոյ:

Թագաւոր Գոյովլ — որ յաշակուհի՝
Մըրէր՝ ի ժաղացն — Երուսաղէմ,
Նըստեալ՝ ի վերոյ — հողեղ էն — որ յաւանահեց,
Կոչ էլ զնելեանոս — յերէրպագութիւն:
Տերք սսպովլք — ծիլլենեօս,
Եւ պայս սսպովլք — արմաւենեօս,
Եւ երամ երամ — դաստիքն — աղաղակնեցն,
Ովստնեայ — օրհնեալ ենեալ — ի յանուն — ըն աւունն:
Յընծայատ — սուրբ Սիրն,
Բերէրեցան — սուրբ ենեցնեցն,
Եւ իշնութեամբ քայլամ — ելլեն — ընդ աւազ,
Օրհնենքն — ըստ գալութեամբ — Փըսինք յաշակուհի

Առաջեւոյ — աշտանոյ,
 Իշտանելով — մժայոյն հնչանք — 'ի բարձունց
 'ի ամսաւթիւն — լուսոյ փոյշուն,
 Հրաշխեաց — անհելու էլեղանց պատաստ.
 Մինդեւ արսունին — 'ի սուրբ վերնատան:
 Անսելլական — աշտանի,
 Անտանելի — որ հնահեղութիւնը Աստոծոյ, որ անդամ
 Զոր առեւու — 'ի հարէ մժայութիւնոց զմոց մի այս մն
 Պատմէ — պահաւոր — և պահանգամ գալուստոն,
 Զոր ժարունակն — համագոյնուն:
 Օրհնութիւն — 'ի բարձուն,
 Ելուն — 'ի հօրէ — հոգեւոյ սրբոյ,
 Որ ոչ — առաջեւուն:
 Արբեցան — անհանդական — բաժանաւուն,
 Եւ հրատիրեցին — շերիւր «'ի յերիւն»:

Սոքա են գլխաւոր փոփոխութիւնները՝ որոնք նկատվում
 են անհամաշափ կանոնաւոր քերթուածների մէջ, այսինքն
 անխառն միանդամ, երկանդամ, եռանդամ և քառանդամ
 տողակարգ, և կամ դոցա ամենեցուն խառն տողակարգը ինչ-
 պէս այժմ նկատեցինք: Բաց 'ի դորանցից կան նաև երկրոր-
 դական փոփոխմունք, ինչպէս որ եթէ կամենանք՝ քառան-
 դամ տողերի մէջ որեկից համակերպութիւն մտացնել, նորա
 չորրորդ անդամը և կամ նորա հետ 'ի միասին և երկրորդը
 միշտ եռավանդ դնել, և կամ երկրորդ և չորրորդ անդամը
 քառավանդ բայց երրորդը եռավանդ կազմել և ալին. Այդ
 տեսակ բազմաթիւ երկրորդական փոփոխութիւնք կարելի է
 ներմուծանել ոչ միայն քառանդամ, այլև միանդամ, երկան-
 դամ, եռանդամ և նաև խառն տողակարգի մէջ՝ երեքն
 երկանդամ եռանդամ, և երեքն եռանդամ և քառանդամ
 տողեր դասաւորելով: Բայց այդպիսի երկրորդական փոփոխու-
 թիւնները էական մասն չեն կազմում անհամաշափ քերթու-

թեանց, որոց տողերը ըստ հաճուից կարող է փոխակերպել
 ամենայն քերթող, ով ինչպէս որ կամենայ: Նոյնօրինակ և Հ.
 Բագնատունին մի տեսակ տողեր ընտրեց՝ վերջին անդամները
 միշտ քառավանդ թողելով: ¹⁾ Որոց բոլորի վերաբերութեամբ
 պէտք է ասել, որ իւրաքանչիւր քերթող ազատ է իւր տողա-
 կարգութեան մէջ այս ինչ և կամ այն ինչ տողերը ընտրելու,
 միայն թէ տողերի անխորհուրդ ընտրութեամբ մենք չենք
 կարող ծառայել անհամաշափ քերթութեանց խորհրդաւոր
 նպատակին:

¹⁾ Բագնատունին թէպէտ օրէնքով թոյլադրում է վերջին չորրորդ ան-
 դամը երբեմն եռավանդ դնել, բայց այդպիսի օրինակները իւր թարգմանու-
 թիւնների մէջ այնպան սակաւաթիւ են, որ բոլորովին բացառութիւն պիտի
 համարուին Ընդհանրապէս նորա երրորդ և չորրորդ անդամները միշտ քառա-
 վանդ են դասաւորուած:

յաղըթայրի ։ Ե բայց զդունք՝ առ զդքուս զդու զդունք
։ և խանքածով զդունքով ու ականքի ին քահեղք մատնես
զդունքուս միջնորդ վեհուց զդքու խանք մի միջնուածքով
զնուն հայութայրի զնուն զնուն է ։ ինչ ականքի քահեղքուց ուշին
այսու ուշ և առաջ ու նկած զայժմուածքով ու զնուն ։ գաճի
այդպատի զդքուս մի մի նուն է ։ և այս շնուակի ուրպայի
զնուն պահն զնուն հայութայրի բայժանուածքուս մի մլունի
զնուն ։ 50 ։ և այս սունդ անդամական առաջարկուածքուս
ՍՈՒԴ և ԵՐԿԱՐ ԱՆԳԱՄՆԵՐ,

ԹԵՇ ՎԱՆԳԵՐ:

 **Ի**նչեւ ալժմ շատ անդամ լիշտակեցինք անհամաչափ
քերթութեանց այն առանձնայատկութիւնը, որն
անուանում ենք սուլ և երկար անդամներ, և բնականաբար
ամեն ընթերցող պիտի հետաքրքրուէր իմանալու թէ ինչ են
սուլ և երկար անդամները՝ որոնք պիտի փոխարինեն Բագրա-
տունոյ վանդերին։ Ըսթերցողների այդ հետաքրքրութիւնը
յագեցնելու համար հարկ է նախ և առաջ այստեղ ծանօթա-
նալ Բագրատունեան վանդերի հետ, և թէ ինչ փաստեր է
նա առաջարկում իւր այդ վանդալին դրութեան վերաբերու-
թեամբ։

Բագրատունին, երեկի կարծում էր, թէ մեր անհամա-
չափ քերթուածները ոչ եթէ հին ազգային են, այլ հայոց
եկեղեցական քերթողների հնարած մի տաղաչափութիւն յու-
նական վեցատանոյ հանդէպ, և այդ համոզմամբ գրում է իւր
մշակականի յառաջ։ Երես 19 „եթէ ներէր տեղիս, ակնյալունի
ցուցանէաք զկատարեալ նմանութիւն, մանաւանդ թէ նոյ-
նութիւն ախոցիկ ազգային տաղիցս. . . ընդ վեցոտանոյն

Յունաց⁴։ Անհամաչափ տաղաչափութեանց յունականի հետ
նոյնութիւնը ճշգրտելու համար ստիպուած սուլ և երկար
վանդեր է հնարում, և յունականի վերայ ձուլելով ենթա-
գրում է որ հայերը ևս սուլ և երկար վանդեր ունեին, բայց
թէ ինչ են դոքա և թէ ինչպիսի տառերով են կազմվում
այդպիսի վանդերը, դոցա մասին ոչ մի բաւականացուցիչ
բացատրութիւն չունի. Սակայն ճգնում է որևէ մի անբա-
ցատրելի եղանակու (տես նոյն յառաջ. Երես 18) իւրաքան-
չեւր քառանդամ տողի մէջ հաշուելով ստանալ 12 վանդ,
երբ որ նոյն այդ տողը ակնյալունի բաղկացած է վեշտասան
ամբողջ հայկական վանդերից՝ որոց մնացեալները յունականի
նմանութեամբ սղուած է համարում։

Այդպիսի մի անդոյ և մտացածին ենթադրութիւն նոյն
իսկ Բագրատունոյ վկայութեամբ անտեղի պիտի համարուին,
որովհետեւ եթէ հարցնում ենք նորան թէ ինչ տեսակ բաներ
են այդ սուլ և երկար վանդերը հայոց բարբառում, պա-
տասխանում է մեզ „Սուլ վանդս իմա ինձ աստանօր ըստ
երագաշարժութեան և ծանրաքայլութեան բնական առողա-
նութեան, ըստ իմաստից, ըստ կրից և ըստ ազատութեան
իսկ“։ Եւ կամ Երես 16. „պայման ոտանաւորացս ոչ 'ի
վանդսն եղեալ է 'ի հին նախնեաց, այլ 'ի յարդաշուն համե-
մատութիւն և չափակցութիւն անդամոց“ Բագրատունոյ այս-
պիսի վկայութիւններից ինքնին պէտքն է եզրակացնել, —որ
եթէ անհամաչափ քերթութեանց պայմանը վանդերի վերայ
չէ գրուած, այլ անդամների վերայ, էլ ինչ հարկ վանդերի
հետամուտ լինել և նոցա մտացածին սղութեամբ և երկարու-
թեամբը մոլորիլ։ — Այլ աւելի պարզ և բարւոք չէր եթէ
հաստատուն մնար իւր այն կարծեացը վերայ, ինչպէս գրում
է Երես 18. „լոյժ իմն առաւելութիւն ունի այս ազգ տա-
ղից ևալն, (տես գրքիս մասն Ս. գլ. I.) Որ և իւր խօս-
քերի վկայութեամբն անդամ պիտի ընդունենք, որ հայերը
բնական առողանութեան պայմանաւ՝ որն երբեմն երագաշարժ


և երբեմն ծանրաքայլ կատարելով մի տեսակ սուղ և երկար անդամներ են հնարում, որոնք և լինում են իբրև յայտարար նշանացոյց զանազան շարժմանց և մարդկալին կրից։ Սակայն Բագրատունին չէ կարողանում յարատեել իւր այս կարծեացը վերայ, և երևի այս նիւթի վերայ դեռ յստակ գաղափար չունենալով՝ կրկին և կրկին թարթափում է վանդերի սղութիւնը և երկարութիւնը զանազան եղանակաւ բացատրելու, և իւր յառաջաբանի 16—22 երեսների մէջ անընդհատ երկխօսութեամբ նսեմացնելով իւր քննութիւնը, և նկատելով որ անկայուն են այդ վանդերը, և երբեմն նորանցից երկարը սուղի տեղ և սուղը երկարի տեղ է ընթանում. վասն որոյ ասում է „ե ոչ է այդ ցնորք, այլ առողանութեան պայման, և եթէ ցնորք իցեն, լաւ է ցնորել ընդ հելլէնս, ընդ հոռմէացիս և ընդ մեր նախնիս“։

Եթէ ոչ ցնորական, գոնէ վրիպական պէտք է համարել Բագրատունոյ այս վանդալին դրութիւնը, որովհետև ոչինչ նմանութիւն չունին յունաց և հոռոմոց սուղ և երկար ձայնաւորները և վանդերը հայոց միօրինակ վանդերի հետ. և երբէք անկարելի է ըմբռնել մի այնպիսի վանդեր՝ որոց զինչութիւնը իմանալի լինէր մեզ միայն լսո ի՞նստից, լսո ի՞նստից և լսո առաջարկանուն կու։ Գոնէ մի քանի ալրպիսի տառեր կամ վանդեր և կամ իմանալի օրինակներ 'ի թիւ արկանէր և յականէ անուանէ որոշէր և ծանօթ առնէր մեզ նոցա զինչութեանը։¹⁾ Սակայն այդպիսի անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալու փոխարէն „եթէ ներէր տեղիս“ ասե-

¹⁾ Մի այդպիսի պարտաւորութիւն յանձն է առնում իմ այս գըքի քըննադատաւորութիւն իմաստութեան յանձն է առնում մասնակիաբաշխութեան 1889 թուոյն հանդէսը), որ սուղ և երկար վանդերի պաշտապան հանդիսանալով բացականչում է «Ուշափ բան հնար է սովորել բայից և հորովց վափոխութեան ուշափիք ուսումնասիրութեամբ»։ Այս խօսքերից պէտքն է մակարերել, որ մենք հայերս պարտաւոր ենք շատ երկար և մտադիւր ուսումնասիրութեամբ խելամուտ լինել վանդերի սղութեան և երկարութեանը, որովհետեւ խոնարհմանց և հողովանց մի քանի եղանակները լինչպիս են ներդայն, սատրասականը

լով անցնում է, և մի ուրիշ անգամ աւելացնում է „զորմէ չէ տեղուս յերկարել, յոր և մեք չեղաք իսկ անվրէպ ժամանակ։ Եւ արդարեւ երկարելու հարկ չկար, երբ որ միշտ միենոյն առանցքին շուրջը պիտի պտտէր, և հայոց տաղաչափական անգամների սղութեան և երկարութեան այն զգալի երեոլիթը, պիտի մեկնաբանէր յունական և հռովմէական վանդերի զօրութեամբ։ Բայց իմ կարծիքս այս կէտի վերաբերութեամբ յայտնել կամենալով, ասում եմ, որ—Բագրատունոյ հետ ՚ի միասին համաձայն եմ, և զգում եմ որ կան անգամների սղութեան և երկարութեան նշաններ հայոց տաղաչափութեանց մէջ, բայց բացէ 'ի բաց հերքում եմ այն կարծիքը թէ—սղութեան և երկարութեան այդ զգալի երեոլիթները կատարվում են վանդերով, ինչպէս որ յունաց և հռովմոց մէջ։ Թէպէտև թէ, յունաց և հռովմոց սուղ և երկար վանդերը և թէ հայոց սուղ և երկար անգամներ նոյնանըման պաշտօններ են կատարում տաղաչափութեանց մէջ։

և ողղականն ու տրականն և գոցա վանդերը սուղ են, բայց մնացեալները՝ երկար։ Այդպիսի անամենելի ուսումնասիրութեանը հարկ է խնդրել էփենդէ թեմզիսայլն՝ որ չնանրաբենէր մեղ վլրայ, այլ ևթէ հանոյ է, ինքն յոնձն առնէր դոցա մանրամասն և նրբին ուսումնասիրութեանը և աշխատէր որոշելու և մի առ մի սահմաններու հորովմանց և խոնարհմանց սուղ և երկար վանդերը։ Ծերես յայնժամ միայն կղզայը, որ ոչ եթէ վանդեր այլ ուրուականներ են իւր հետալուսածն։



զաշափական օրէնքը փոքր ինչ յետոյ եղանելով ասում է „եթէ նախաղաս քառավանգի վերջն ոչ երկարի. . . նշանակէ թէ այլով չափով է յօրինեալ տաղն“: Իսկ ուղիղը դատելով ոչ եթէ այլով չափով, այլ այլով եղանակաւոր ձայնիւ է յօրինուած այն շարականը, որոյ նախընթաց անդամի վերայ կարիք չէ զգում երգիչը երկար առողանութեամբ շեշտելու:

Պարզ է ալժմ, որ այդ երկար ձայնը որ կրում են կամ չեն կրում շարականների այս ինչ կամ այն ինչ անդամները, այդ կախուած է առաւելապէս նոցա եղանակաւոր ձայնից. թէ չէ, կարճագոյն անդամների վերայ վանդ աւելացնելու համար շարականները բոլորովին այլ միջոց ունին, նոքա այդպիսի դիպուածներում մի բոլորովին աւելորդ վանդ են հնարում և կցորդ տալիս յետաղաս անդամին զորօրինակ ռանի՛—ը բարեկան գործուածների միջոց ունին, և կամ երբեմն մի բոլորովին աւելորդ ը ձայն են վերադիր առնում ինչպէս—ը Աստըւած, ը անարատ ևայն: Եւ ընդ հակառակն երբ որ կամենում են սղել և վանգերից մէկը կամ միւսը զեղչել, յայնժամ կամ բառերը միջակտուր են առնում զորօրինակ բարեկան գործուածների միջոց ունին, և կամ արագ արտաքերելով սղում են ինչպէս պիտի նկատենք ահաւասիկ հոփիսիմեանց շարականների մէջ և ուրիշ շատ տեղերում: Բագրատունոյ առաջ բերած օրինակների վերաբերութեամբ առհասարակ պէտք է ասել, որ նա շատ անփոլի է վարուած մինչեւ այն աստիճան՝ որ իւր անհամաչափ քառանդամի համար կանոն սահմանելու նորատակաւ օրինակ է առնում եօթնոտնեան համաչափ ոտանաւոր թէպէտ և անձանայանգ: Ինչպէս—

՚Ի Հրաշտակ—աշբերէն

Անհապահու ըւտ վըստէն,

Կընդուռարոր ոուրէ հոգի.

Օրհնեալ եւ ըյո ճշմորիտ.

ՍՈՒՂ ԵՒ ԵՐԿԱՐ ԱՆԴԱՄՆԵՐ

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԷԶ:

Թէ հայոց տաղաչափութեան սուղ և երկար անդամների մեծ ազգեցութիւնը կրում են և շարականների եղանակաւոր ձայները՝ այդ անուրանալի է, Սակայն Հ. Բագրատունին կամենալով երաժշտական երգերից ևս օգուտ քաղել իւր վանդալին դրութեան համար, շարականներից մի քանի տողեր ՚ի վկալութիւն կոչելով եղբափակում է թէ—անհամաչափ քերթողական տողի մէջ եթէ նախընթաց անդամը երկար շեշտ է կրում, նա յանժամ լիսավանդ է դարձուցանում իւր յետաղաս կարճագոյն անդամը, այնպէս որ եռափանգը համարվում է քառավանդ, ևալն, (տես նոյն յառաջ. երես 20): Բայց ՚ի նկատի առնելով իւր առաջ բերած օրինակները և ընդհանրապէս շարականների կարգը տեսնում ենք որ բոլորովին այլ պատճառ ունին դոքա, և ոչ երեք այս ինչ անդամի վանդը պիտի երկարել, որպէս զիւ միւս անդամի պակաս վանդերը լրանան, այլ նոքա երկարվում և սղվում են միւյն եղանակաւոր ձայնի պահանջմամբ: Սակայն նոյն ինքն Բագրատունին իւր այդ տա-

Որպէս զի կարողանանք տաղաչափական անդամների սղութեան և երկարութեան օրինակներ ունենալ շարական-ներից, հարկ է իմանալ որ կան այնպիսի շարականներ՝ որոց տաղաչափական անդամները չեն համապատասխանում իրանց եղանակաւոր ձայնին, և այդ մասին տաղաչափական անդամ-ները զոհվում են եղանակաւոր ձայնի պահանջը՝ ի կատար ածելու համար։ Այսպիսի շարականներից անտեղի է եթէ սղութեան և երկարութեան օրինակներ առաջ բերէինք, որովհետեւ յայտնապէս տաղաչափեալ անդամները կամ միջա-բեկ են լինում, և կամ քերթողական տողի մի անդամը իբրև երկար և մնացեալը իբրև սուղ են համարվում, և կամ ընդ հակառակն։ Ինչպէս ահա այս տողս—

Ի՞չ պարբռն՝ բանառին՝՝ ի պահին առաջաւ առաջաւ։

Այս տողի նախադաս երկու անդամների վերայ երգիչը իւր ձայնը երկարում է ոչ թէ այն նպատակաւ, որ երրորդ եռավանդ անդամը դառնայ իբրև քառավանդ, այլ որ տա-ղաչափական և կամ երաժշտական օրէնքով ամեն փոքրա-վանդ անդամ հարկ է որ երկար համարուին և ծանը արտա-բերուին, բայց նոցա յարակից բազմավանդ անդամները սուղ համարուելով պէտքն է արագ արտաբերուին։ Եւ թէպէտ վերոյիշեալ այդ շարականի տողը քառեակ անդամներից է բաղկացած, բայց ըստ երաժշտական ամանակի մենք պէտք է ըմբռնենք իբրև եռանդամ, որոնցից երկու առաջինը ի՞չ պարբռն՝, բանառին՝, համեմատաբար փոքրավանդ լինելով երկար շեշտ են կրում, բայց յետադաս երկու անդամները իբրև մի բազմավանդ անդամ ոմբողջապէս առեալ սուղ հա-մարուելով արագ են արտաբերվում։ Ինչպէս և այս տողն—

Փառական Ասպարած կառակ որեւէլ յատիպէտն։ Այստեղ ահա եղանակաւոր ձայնիւ քառակ, քառակ, երկար անդամներ են և ծանը արտաբերութիւն են պահանջում, բայց մնացեալ յաջորդ հնգական վանդերը իբրև մի ամբողջ

անդամ առեալ համարվում են սուղ։ Այսպէս և Խորհրդարար մէ՛ծ և անդէն էլի որ յայ յամ առողջութեան Ահա և այս երգի պայմանն է, որ երրորդ անդամից մի երկ-վանդ անդամ խլելով նորա վերայ ձայնը երկարում է, բայց յետադաս հնգական վանդերը իբրև մի ամբողջ անդամ արտա-բերվում են արագ։

Ասացինք որ վերոյգրեալ շարականների պէս քերթուած-ները մեզ չեն կարող օրինակներ լինել, այլ եթէ կամե-նում ենք սղութեան և երկարութեան այնպիսի օրինակներ ունենալ շարականներից՝ որ նոքա իրանց եղանակաւոր ձայ-նիւ անդամ հստատէին, թէ կան հայոց տաղաչափութեան մէջ սուղ և երկար անդամներ, այն ժամանակ հարկ է այն-պիսի շարականներ ընտրել՝ որոց եղանակաւոր ձայնը չէ խանգարում իրանց տաղաչափական անդամները, այլ զուգըն-թանում են նոցա հետ համաձայն։ Այսպիսի օրինակ կարող է մեզ լինել Կոմիտաս Կալուղիկոսի Հռիփսիմեանց շարականը՝ որից ահա առաջ ենք բերում այս տողերը։

Երկունչունք և անիծից և ընծառն, Եւ Արտած և լեռը պին և Սապուածակներու ճռիտան, Փոխանուն և Եւայն ու բարուն ըստ նորս, Մարտիրոս և և իւստան և ընծայեալ և Սապուածոյ, Զըրը և հրեշտակուն և ընդ հորդ իւստան առնեցին, Եւ իւստայն և իւրին և ըստ գրեցան ու լինաւորս, Կոտութեամբ և ընդ հորդ ու ուստեղապահեալ և յաշ լեցին, Խոչանից և լինելով իւստաթեամբ և արարչ ին։ Եւ պարման և և ի լեր և ստան ըղմիտան, Խորհրդարար և բանից հրեշտակուն և և մորդ իւստան, Քանչի էնն և Սապուած և մենաուզը զըրութեամբ և Խոհարին և այստեղ տուացան։

Այս շարականը որ բաւական ընդարձակ է և այլուրենական կարգով յօրինած, եղանակաւոր ձայնիւ որոշվում են սորա սուլ և երկար անդամները. ամեն եռավանդից ստուարագոյն անդամ սուլ է, որոնք և երգիչը արագ է արտաբերում, ինչպէս են Ս.սպուտնիկը, պատերազմուլց, ամենալըր: Բայց ամեն եռավանդից նուազագոյն անդամ ինչպէս են—դափեր, ջըրչ, է՛, երկար են, որոց վերալ և երգիչը հարկ է համարում ձայնը երկարել:

Բագրատունին իւր սովորական անփթութեամբ այս շարականից էլ մի քանի տող առնելով (Երես 21) կամենում է սոցա օրինակով ապացուցանել որ նախադաս անդամի վանդը երկարվում է յետադաս եռավանդ անդամները քառավանդ դարձուցանելու նպատակաւ։ Բայց դոքա առ աչօք ենթադրութիւններ են, որովհետեւ բաղդատելով այդ շարականի տաղաչափական տողերը իւր երաժշտական եղանակի հետ ընդհանրապէս նկատում ենք, որ հարկ է իւրաքանչիւր տող բաղկացած լինի չորս անդամներից, և իւրաքանչիւր անդամ երրեակ վանդերից. ամեն եռավանդ անդամ երգիչը ծանր է արտաբերում ինչպէս վանդ վանդ, և ամեն թէ եռավանդ, թէ սուղ և թէ երկար անդամներ իրանց վերջումը շեշտ են կրում եղանակաւոր ձայնը կայացնելու համար։ Սակայն հանգիպում ենք երբեմն ալդ անհամաչափ բերթուածքի մէջ այնպիսի անդամների, որոնք եռավանդից նուազագոյն են, և որպէս զի դոքա ևս եռավանդ լինին, երգիչը կանդ է առնում և ձայնը երկարում, որով և ըստ երաժշտական ամանակի լրութիւն է առնում նոցա պակաս վանդը. և ընդ հակառակն երբ որ հանդիպում ենք եռավանդից ստուարագոյն անդամների՝ երգիչը նոցա սկզբնական վանդերով սահելով է անցնում և արագ արտաբերում, որպէս զի սղուի նոցա աւելորդ վանդն։

Այս շարականի երաժշտական այս առանձնայատկութիւնը ըմբռնելուց յետով որպէս զի համոզուինք անտարա-

կուս, որ ոչ եթէ ըստ Բագրատունոյն այս ինչ անդամի այն ինչ վանդը երկարանում են միւս իւր դրացի անդամի պակասը լրացնելու նպատակաւ. Հարկ է փորձել, որ նոյց ամեն նուազագոյն և ստուարագոյն անդամների փոխարէն եռավանգ անդամներ ներմուծուին. յայնժամ երգելիս կը նկատենք, որ այլ ևս ոչ սղելոյ և ոչ երկարելոյ կարիք չենք զգում, որով և պիտի հասնինք այն եզրակացութեան, որ ամեն անդամ իւր աւելորդը արաաքսելոյ համար է սղվում, և իւր պակասը լրացնելոյ նպատակաւ է երկարվում: Սոքա են ահա սուզ և երկար անդամները՝ որոնք այս և նմանօրինակ շաբականների մէջ որոշվում են նաև երաժշտական պայմանաւ. Բայց հասարակ քերթուածների մէջ մենք պարտաւոր չենք բազմաթիւ եռավանգ անդամներ գործ դնել, ինչպէս նկատում ենք այս շաբականի մէջ, այլ խառն պիտի դսսաւորուին ըստ պատշաճի տեղոյն, որպէս զի կարողանան յայտարար նշաններ լինել շարժմանց և կրից:

որոց և անուանում ենք էրկոր անուանէր, բայց ամեն բազմա-
վանդ՝ հարկ է սղելով փոքր ինչ արագ արտաքերել, որոց և
անուանում ենք սուշ անուանէր։ Եւ ինչքան որ քերթողական
հմտագոյն տողերից քաղելով մակաբերում ենք—անհամաշափ
կանոնաւոր քերթուածների մէջ ամեն եռավանդից նուազա-
գոյն անդամները պէտք է էրկոր ճանաչել, և ամեն եռա-
վանդից ստուարագոյն անդամները սուշ բայց եռավանդ ան-
գամները իւրաքանչիւր տողի նախագաս անդամի մէջ հարկ է
սուշ համարել, և ընդ հակառակն յետագաս անդամների մէջ
էրկոր, որով և նախագաս անդամները երկու սուշ և երկար,
բայց յետագասները մի սուշ քառավանդ, և մի երկար եռա-
վանդ կունենան։

Ահա այսպիսի սուշ և երկար անդամների արագ և
ծանր արտաքերութեանը պարտաւոր են ուշ գարձուցանել
նոքա ամենեքեան, որոնք պարապվում են անհամաշափ քեր-
թութեամբ, և իւրաքանչիւր անհամաշափ քերթող պարտա-
ւոր է ըստ կարեաց գործ գնել իւր քերթուածների մէջ ան-
գամների և տողերի խորհրդաւոր և պայմանաւորեալ գասա-
ւորութիւն, որոնք և յայտարար նշաններ կարող են հանդի-
սանալ զանազան շարժմանց և կրից լուսական և հոռվմէա-
կան վանդերի նմանութեամբ։ Այս քերթողական պարտաւո-
թիւնը ոչ եթէ ինքնահնար է, այլ ինչպէս ուրիշ անդամ էլ
ասացինք վկալուած է նաև այն միակ քերթողից ¹⁾, որ առա-
ջին անգամ սիրտ առաւ մուտ գործել անհամաշափ քերթո-
ւածների քննութեան մէջ։

¹⁾ Իմ քննադատ Թերզեանցը վանդային դրութեան պաշտպան հանդիսա-
նալուց յետոյ նաև գրում է, «Բահաթրեան սուշ և երկար վանդերը իբրև մտա-
ցածին պարսաւելով» սուշ և երկար անդամներ հնարելու պարտականութեան
մէջ կրգայ ինք զի՞ւք։ Ուկանն ոչ եթէ միայն ևս, այլ և Հ. Բագրատունին այդ
պարտականութիւնը գրում էր, ինչպէս որ յայտնապէս նկատում ենք նորա
միայնութիւնը երես 18. ուր որ գրում է յոյժ իմն առաւելաւթիւն ունի այս
աղդ տաղաչոփութեան քան զլուգավանդն . . . և այլն։ և այդ առաւելու-
թիւնը նոյն իւր թագրատունին բացատրում է առելով—որ անհամաշափ քեր-

ՍՈՒԴ և ԵՐԿԱՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ և ՏՈՂԵՐԻ

 Եթէ փոքր 'ի շատէ համոզեցուցիչ էին մեր մինչև ալժմ
առաջ բերած փաստերը, թէ հայոց տաղաշափու-
թեանց մէջ չկան սուշ և երկար վանդեր, այլ անդամներ.
ալժմ դառնանք այն հարցին՝ որի մասին շատ անգամ լիշա-
տակեցինք,—որ հայկական սուշ և երկար անդամները ունին
նաև խորհրդաւոր կիրառութիւն, որն զգալի է լինում մեզ
մի որոշ առոգանութեան պայմանաւ։ Որովհետև ոչ եթէ մի-
այն շարականների եղանակաւոր ձայնիւ, այլև հասարակ ըն-
թերցանութեամբ անհամաշափ քերթուածների անդամները
պիտի տարբերուին իրարից մի որոշ առոգանութեան պայմա-
նաւ, որով և կազմակերպվում են նոցա սուշ և երկար ան-
դամները։

Բայց թէ ինչ են ալդ առոգանութեան պայմանները, և
թէ ինչ կարդ պէտք է պահպանել անհամաշափ քերթուած-
ների ընթերցան միջոցին, պէտք է կրկնել ալստեղ մեր
միւսանգամ ասածը թէ—ամեն փոքրավանդ անդամների վե-
րալ հարկ է փոքր ինչ ձայնը երկարել և ծանր արտաքերել,

Սակայն մեր այս ենթադրութիւնները որպէս զի հագրատունեան սուղ և երկար վանդերի պէս մութ և անբացալայտ չմնալին, հարկ է ալստեղ մի քանի օրինակներով մեր միտքը պարզել, թէ ինչ եղանակաւ էին գործատրվում ոուղ և երկար անդամները մեր նախնեաց քերթուածների մանաւանդ վիպասանականների մէջ:

Վահագնի վիպասանական տասնտողեան հատուածը եթէ ուշադիր զննելու լինինք, պիտի այն համոզման հանդչինք, որ այդ երգը, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ արեգակի ծագման նկարագրութիւն. հետևաբար ոչ եթէ կիսաստուած, այլ այնքան յարգի էր այս չաստուածը, ինչքան որ երկնալին Զեսը, որ ինչպէս սա Դիտանեան հսկայների հետ, ալնպէս էլ նա վիշապանց հետ պատերազմ մղեց և յաղթող հանդիսացաւ, և սոցա արտաքին կերպարանքը ևս իրարու մօտ նմանութիւն ունին, երկուսն էլ հերապանծ և մորուեղ և որոց շուրջը պատած են ծով և այլ երկնալին մարմիններ: Այդ հնագոյն քերթուածների մէջ անդամների հմուտ դասաւորութեամբ զգալի են լինում մեզ թէ ինչ գաղափար ունէր քերթողը երկնի, երկրի և արեգակի շարժման վերա՝ որոյ բացատրութիւնը ահաւասիկ դնում ենք ալստեղ:

Երիշեր Երիշն—և Երիշը,
Երիշեր և—ծիրանի ծով,

Չեանց անդամների ծանր և աբագ արտաբերութեամբ հսկայն է արագութիւն, յամբութիւն, բարկութիւն և տրտութիւն արտայատել յունաց և հոռոմոց վեցանալոյ նմանութեամբ: Միայն թէ Բագրատունոյ այդ ուղիղ հայեացքը յունական լմաների վայրը գրաւուեցին: Եւ ոչ եթէ միայն Բագրատունին այլ և ապագյումը եթէ մի այլ քննադատ ևս յառնէր, նա էլ այդ պարտականութիւնը պիտի աւելի ևս խոր զգայր, եթէ միայն կամք չսնէր խոնարհմանց և հոլովմանց ուրականների հետամուտ լինելու:

) Երիշ ՚ի—ծոված ունէր
Լու հարինի—Եղիքնին:

Այս հատուածի մէջ մենք զգում ենք, որ վիպասան քերթողը վաղ առաւօտեան դէմքը դէպի արեելք դարձուցած քայլ առ քայլ հետևելով արեգակի ծագման՝ նկարագրում է շարունակ երկնալին փոխակերպութիւնները: Սկզբումն դեռ ամէն բան սովորական է, Երիշնէր Երիշն արագահնչիւն սուղ անդամով ըմբռնում ենք որ երկինը իւր ուղին շարունակելով շարժվում է, և Երիշն երկար անդամի ծանր առողանութեամբ պիտի զգանք, որ երկիրս իւր տեղում կանգնած է անշարժ: Այսպէս և ծովը ցամաքի համեմատութեամբ շարժուն լինելով սուղ անդամներով են արտայատուած: Բայց այդ ամենը երկունք են, և դիտում է քերթողը շատ հեռուից ծովի մէջ հարինի և շշչանին²⁾ որն իւր երկար անդամներով պիտի իմանանք որ անշարժ է, և ՚ի ներքուստ մինչև ՚ի վեր երկնի հետ հաղորդակցութիւն ունի: Քերթողի այս միօրինակ դիտողութիւնը յանկարծ ընդհատվում է այս հրաշալի երեսովթով—

) Ոչ եթէ երիշն, այլ հաւանական է թէ Երիշն լինէր գորա նախնական հնչիւնը, բայց ի ձայնաւորի զեղումը տեղի ունեցաւ միւս ՚ի նախդըն միտնաւորը այդ անդամի հետ. որ այդպիսի դիտուածում հարկ էր որ երկուսից մէկը զեղուէր:

²⁾ Կարմիր եղեգնիկը, որ երկու կողմից էլ պիտի բացուածք ունենար, որպէս զի արեգակը նորա մէջ մտնելով առաւօտեան իւր թէ Երկը ներքեւիցը դէպի վեր անցանէր, այդ ակագին անցքը մի եղեգնի նմանացնելը՝ օտարութիւնի համարուէր, ինչպէս և զոմերութիւնի մէջ գլ. Բ. Աքայեցոց զորքերը ճանձերի են նմանացրուած: Սակայն այդ հնագոյն նմանաբերութեան եղանակը հիմնուած է տեսողական օրէնքի վերայ որ հետաւոր իւր փոքրագոյն է երկում մեր աչքին. Այսպէս և արեգակնային անցքի ծիրը այնքան անշուն կեռաւութեան վերայ կարող էր եղեգնի չափ փոքրանալ, ինչպէս որ և արեգակի յաղթ մարմինը փոքր է երեւում մեղ պատանեկեկի չափ: Այս տեսողական օրէնքը աւելի ևս մանրամասն բացատրուած են զոմերական իլիականի մէջ, ուր քերթողը կանգնած նկատում է որ զօրքերը վազում են իւր առջևից և հետըզ-

Ըստ եղեգան փոշ—ծուխ էլունի,
Ըստ եղեգան փոշ—բոյ էլունի,
Եւ 'ի բոցոյն—պատահէին:

Այս տողերի թռուցիկ և սուղ անդամներով արշալուսոյ պատկերն է նկարագրում, որ յանկարծ նախ իբրև ծուխ և ապա իբրև բոց արագաշարժ թռչում և շառագունում է երկնի երեսը: Աւելի ճարտար և աւելի զգալի կերպով անկարելի էր յայտարար նշաններ տալ այդ վաղանցուկ և յանկարծական երեսոյթին, ինչպէս որ նկատում ենք այս տողերի մէջ սուղ և թռուցիկ անդամները: Արշալուսոյ տեսարանը անցնելուց յետոյ բոցերի միջից գուրս է երեսում պատահների արեգակի դէմքը:

Վաղեր նոս—Հուր Հեր ռունի,
Աղոս Ահ բոյ—ռունի հօրուս,
Եւ աշունանի հին—աղեգանին:

Տեսարանը փոխվում է: Վաղեր նոս ծանը արտաքերելով մենք զգում ենք, որ արշալուսոյ արագաշարժ երեսոյթը անցաւ, և Հուր Հեր ռունի անդամով, ինչպէս այլ անդամ նկատեցինք, համբուրիւ մեծարում ենք այդ նորածնունդ աստուա-

հետէ փաքանում են նախ սագի չափ, յետոյ տերեւների չափ, հուսկ յետոյ դասնում են ինչպէս ճանձեր: Բայց զգալի է մեզ որ այդ միջոցին նիըը քերթողը ևս գնալով մօտենում է զօքքերին, և այդ մասին այդ ճանձերը հետզշ կետէ ստուարանալով փոխարկիլում են սցծի երամակի և վիճասէս դառնում են նախերի և ցուլէ չափ մեծամեծ արարածներ: Բայց թէ ի՞նչու քերթողը եղեգնի նմանութեամբ բացատրեց այդ արեգակնային ծիրը և ոչ մի ութէ նմանութեամբ, —այդ կարող էր պատահէլքերթողի հայլենիքի գերքէց, որոյ արեւելան կողմին դանվում էր ծով և եղեգնուատ, և դիտելով քերթողը նըկտում էր թէ ի՞նչպէս այդ եղեգնուատ կարմբափայլ շառագունում էր, և դուրս դալիս արեգակը Այս նկատմամբ եթէ դաշտ կամ լեառն ունենար քերթողը եւը արեւելան կողմին անշուշտ տաշուային կամ լեւնային մի նմանութեամբ պիտի բացատրէր այդ արեգական ծիրը:

Ճային պատահների պատկերը քանի որ նա դեռ չէ խտողում մեր աչքերը: Յաջորդ սուղ անդամները մեզ յայտարար նշաններ են տալիս, թէ ի՞նչպէս այդ նորածին պատահնեակը նախ հերապանծ գլխով և ապա ճառագայթարձակ և բոցավառեալ մօրուով արագ արագ սլանում էր, և որ դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն ինքն արեգակն:

Ահա սորա են սուղ և երկար անդամները⁽¹⁾ որ ինչպէս տեսնում ենք, սուղը՝ արագաշարժութեան, և երկարը՝ ծանրաշարժութեան և անշարժութեան յայտարար նշաններ են: Եւ ինչպէս դոքա այս քերթուածքի մէջ իրական եղելութեան նշաններ են, այնպէս և ուրիշ քերթուածքների մէջ տեսնում ենք բարոյապէս գործադրուած: Որովհետև անշարժութիւն կարելի է համարել մարդկային այն զգացմունքը, որ զարմանքով կանգ է առնում ու մնում՝ յափշտակուած, բայց ընդ հակառակն արագաշարժ է, եթէ որ գոգուուած է և սաստիկ զալրացած:

Վահագնի այս երգը այսպիսի բացատրութեամբ առաջ բերելով՝ եթէ կան դարձեալ հակառակորդներ՝ որոց դեռ անզգալի են սուղ և երկար անդամների խորհրդաւոր կիրառութիւնը, առաջարկում եմ նորանց որ փորձի համար խանդարեն այդ երգի անդամների կարգը, փոխանակ սուղի երկար և փոխանակ երկարի սուղ անդամներ դասաւորեն, և ջան 'ի փորձ դնեն դարձեալ տաղաչափական ինքնահնար բացատրութիւն յերիւել նոցա վերայ, յայնժամ միայն պիտի նկատեն, որ այդ չէ յաջողվում, և կհամոզուին որ այդ քերթուածքի տողերը և անդամները գիտակցութեամբ և խորհրդով են այսպէս դասաւորեած:

⁽¹⁾ Անհամաչափ քերթուածների մէջ ոչ եթէ ամեն առարկայ միշտ պէտք է միօրինակ սորութեան և երկարութեան մէջ պաշենլ այլ կարող են նոքա փոխակերպութեամ պատշաճի տեղոյն, զօրօրինակ եթէ կամենանք եթին ասեւ լորա անհուն տարածութեամբ և բարձրութեամբ լըմբանել հարկ է որ երկար վնի նորա անդամը. բայց երկը անցաւոր կեակը՝ հարկ է սուղ անդամներով արտապատել:

Այժմ անցնենք Սրտաշէսի և Վարդգէսի վիպասանական քերթուածներին, որոնք ինչպէս նկատեցինք խառն տողակարգ ունին: Սակայն հաւանական է թէ, ոչ Արտաշէսի և Վարդգէսի երգերը միշտ խառն տողակարգ ունէին, և ոչ Վահագնի երգը միշտ միօրինակ տողակարգ, այլ դոցա վեպերի շարունակութեան մէջ գործադրվում էին ըստ պատշաճի զանազան միօրինակ և խառն տողադասութիւնք. այս են անհամաշափ քերթութեանց օրէնքը առհասարակ, ինչպէս որ ապացուցանում են շարականների և Նարեկեան քերթուածների այն ընտիր օրինակները, ուր որ նկատում ենք միևնույն քերթուածքի մէջ երբեմն միօրինակ և երբեմն խառն տողակարգով վարուած: Բայց թէ այսպէս և թէ այնպէս, միայն թէ անհամաշափ քերթութեան այն ազատութիւնը՝ որ շնորհում է քերթողներին չկաշկանդուել անձուկ միակերպութեան մէջ, այլ երբեմնապէս տարածանել իւր թեւերը խառն տողակարգով, լիովի նկատվում են Սրտաշէսի և Վարդգէսի այս վիպական երգերի մէջ, ուր որ նկատելի են ոչ եթէ միայն սուղ և երկար անդամներ, այլ և կրծատ և երկայն տողերի այնպիսի խորհրդաւոր դասաւորութիւնք, որոնք աւելի ևս որոշ և պարզ կերպով են արտայայտում քերթողի ներքին զգացմունքը՝ քան ամեն սուղ և երկար անդամներ: Այս երգերը ինչքան էլ ժամանակաւ տարանջատ լինէին Վահագնի երգից, ալուու ամենայնիւ մի և նոյն սուղ և երկար անդամները, նոյն պայմանաւորեալ կիրառութիւնն է, որ նկատում ենք և ալստեղ սակաւ փոփոխութեամբ. տարբերութիւնը միայն երկար միավանդ և երկվանդ անդամներ չկան ընաւին, որոյ և պատճառն պիտի համարել սոցա խառն տողակարգը և երկայն տողերը: Արտաշէսի և Վարդգէսի երգերի մէջ մեծ գեր են կատարում երկար անդամները և կրծատ տողերը, որոց վերայ երկար շեշտելով ինչպէս հեծուած, 'ի սետու,

Ն շ տ պ, ար տ գ, պէշ պը, ի՞ն է լ պատրաստվում ենք լսելու գերօ-
րինակ դէպքեր և ծանրակշիռ գործողութիւններ. Տէն շոյ եր-
կար արտաբերելով զգալի է լինում մեզ այն արտասովոր և
ամօթալի տռփանքը, որ տածում էր իւր սրտում Սաթենիկը.
Մէս կո՞չ երկար շեշտելով զգում ենք Արտաշէսի անչափ
զմալանքը և ձգտումը դէպի երաժշաական խինդը և խըն-
ջուքները: Այսպէս և նոցա կրնատ տողերի վերայ փոքր ինչ
սովորականից աւելի ձալնի հանգիստ տալով՝ մեծ համարման
և ուշագրութեան արժանի ենք դատում նոյն գործը և գոր-
ծողը, բայց շարժուածքի և այլ գործողութեանց արագու-
թիւնը բացատրվում են երկար տողերով և անդամներով:
Այժմ առաջ բերենք այստեղ մի քանի օրինակ նոյն տաղա-
չափական բացատրութեամբն հանդերձ:

Հեծան՝—արի՝ արժայն՝—Ս. բառակէ
՚Ի սեաւ—ըն գեղ եցին.

Արտաշէսի երգից միայն ալս ուժտողեան հատուածն ունենք, որ Վահագնի երգի պէս մի ամբողջ նկարագիր է բովանդակում։ Առաջին տողով Արտաշէսի աշտանակելը պատմելուց յետոյ երկար շեշտելով ոգի է առնում նորա սեաւ երիվարին վերայ, որովհետև ալդ երիվարը հուժկու էր և հազուագիւտ բոլոր հայստանի մէջ, և որոյ շնորհիւ միայն ձեռնհաս եղաւ Արտաշէսը ալդ յափշտակութիւնը՝ի կատար ածելու։ Բաց ՚ի դորանից կրճատ և երկայն տողերը ցուցանում են և շարժուածքի աստիճանը, ինչպէս որ պիտի տեսնենք ահա։

Տեսարանը փոխվում է, ահա մեր առջևն են գալիս երեք շարայր տողեր, որոց վերայ հարևանցի հայեացք ձգելով անդամ, կարծիք է ծնանում մեր մէջ—թէ դոքա հարկաւ խորհրդաւոր կազմութիւն ունին:

b- հանեալ—զանեալ—շինեալ—պարանըն

ବୁଦ୍ଧିମତୀରେ କାହାରେ କାହାରେ କାହାରେ କାହାରେ

b- ցգեալ—սպահեալ—շիշափութեալ—պարանական

Այս տողերը ոչ արագ այլ վանդ վանդ արտաքերելով
(բաց ՚ի ռդիկուլ զարդում) գրէ թէ քայլ առ քայլ հետեւում ենք
Արտաշէսին, որ երիվարի վերայ ջգանք թափելով և ջուրը
պատառելով իւր ընթացքը շարունակում է միօրինակ։ Բայց
ինչ նպատակաւ են արդեօք այդ երեք զուգաչափ տողերի
մէջ բոլորը եռավանդ անդամներ դրուած, և թէ Արտաշէսի
երիվարը սլացաւ արդեօք արծուոյ պէս գետովը իսկապէս,
ինչպէս պատմում են ժողովրդական վէպերի մէջ¹⁾, թէ հա-
սարակ մահկանացուի պէս ջուրը մտաւ։ Մեր այս հետա-
քրքրութիւնը կարող ենք լիուլի յագեցուցանել, եթէ ուշի
ուշով զննելու լինինք վերոյգրեալ երեքտողեան քերթողա-
կան պատկերագրութիւնը, որով գրէ թէ Կուր գետը նըկա-
րուած է մեր առաջին։ Նայիր ահա և տես, որ բոլոր շըր-
ջապատը ջուր է միօրինակ եռավանդ անդամներով պաշա-
րուած, և նկատում ենք որ ներս է մտել Արտաշէսի սըրն-
թաց լողացող երիվարը ռդիկուլ զարդում, որի արագ և թուուցիկ
արտաքերութեամբ զգալի է լինում մեզ, որ այդ երիվարը
ջրերի մէջ այնքան սըրնթաց էր ինչքան որ արծուին օդի
մէջ։

Բայց յանկարծ տողերի և անդամների ալդ միօրինակու-
թիւնը ընդհատվում է եռանդամ տողի և քառավանդ սուղ
անդամների միջամտութեամբ, —

Ըստ ՚ի մէջ — օրինրեն — Աշխաց

Այս յանկարծական փոխակերպութիւնը և այս տաղա-
չափական սուղ անդամների արագ արտաքերութիւնը մեզ
սթափեցնելով զգալի է առնում Արտաշէսի այն անօրինակ
արագաշարժութիւնը՝ որ ջրիցը ցամաք ելնելով գործ դրաւ-

¹⁾ Կուր գետի շըճակաց բնակելչները երանց վէպերի մէջ հանդէս են հա-
նում այնպիսի հեծեաւ և երիվար՝ որ սւանալով անցնում է Կուր գետը առանց
սմբակին անդամ թանալու։

ալդ յափշտակութեան միջոցին։ Արդեօք կարելի է պնդել
այլ ևս թէ այս վերոյգրեալ տողերի մէջ սուղ և երկար ան-
դամների պայմանաւոր կիրառութիւնը անդիտակցաբար էին
և անխորհուրդ, երբ որ իբրև անուրանալի փաստ նկատում
ենք ակներկ, որ ռդիկուլ զարդում սուղ անդամին խորհրդով շըր-
ջապատում են մետասան երկար անդամներ, և որոց բոլորին
հետեւում է ըստ ՚ի մէջ արագաշարժ սուղ անդամը։

Եւ շաբաթ յանդաւագ ըստ մէջ ժամանակ օրինրեն
Արդ գ հաստայեաւ ՚ի բանակ էր։

Այս վերջին երկու տողերի մէջ Արտաշէսի վերադարձն
է նկարագրվում։ մենք արդէն իմացինք թէ նա ինչպէս ան-
ցաւ գետը, բայց դեռ չգետենք, թէ օրինրդն էլ իւր հետն
առած ինչպէս վերադարձաւ։ Բայց ահա այս տողերի մէջ
նկատում ենք, որ օրինրդի մէջքը ցաւեցրուց, և այդ նշան
է, որ գետումը պարանով էր ձգտում օրինրդին, և ոչ թէ
ձիու վերայ էր նստացրել, որ անհնարին էր։ Եւ դարձեալ
նկատում ենք որ որդիկուլ զարդում, այլ իբրև արագուն իւր
որսը հասուցանում էր բանակ։ Եւ այդ նկատմամբ այդ եր-
կու տողերի նախընթաց երկար անդամների վերայ շեշտելով՝
մեզ զգալի են Արտաշէսի այդ քաջագործութեան մեծ նըշա-
նակութիւնը, որ ծանրաբեռնուած լինելով անդամ աճապա-
րանօք և անվտանգ վերադարձաւ իւր բանակը. Այսինքն թէ
իրապէս և թէ բարոյապէս ծանրակշիռ էին Արտաշէսի ալդ
գործողութիւնը։

Նոյնպէս և այս տողերը։
Ճաշ գործէլ — Արդգուանայ — ՚ի պատկեր — Արդպաշ իսկ՝
Եւ նարդառանակ լուս ՚ի պատմութիւն — ՚ի պատմութիւն — Լիշտուաց։
Այս երկու տողերի մէջ նշմարելի են գեղեցիկ հակա-

գրութիւնք։ Առաջին տողի մէջ Արդաւանը երկրորդ տողի
մէջ խարդաւան է, մէկումը ճաշ է պատրաստում՝ ի պատիւ
Արտսւշիսի, միւսումը խարդաւանութիւն է նիւթում՝ ի տա-
ճարին վիշտապաց. Եւ այդ մասին յարդանքը և խարդաւանքը
հաւասարակիւր լինելով՝ քերթուածքի տողերն էլ հաւասար
չտփով են:

Նոյնպէս և այս տողերը՝ որոց ուշադիր զննութեամբ
նկատում ենք թէ բնչքան վիրաւորուած էր հայրը իւր Ար-
տաւազդ որդուց։

Երբ որ տրտնջում էր Արտաւազդը թէ—

Սինչ ու— գնացէր,

Եւ ու երիւ— ամենայն— ընդ ժեղ պարսու,

Եւ աւերակայս— որպէս— լաւգուորիմ։

Արտաշէսը պատասխանում է այսպէս։

Դու յորս հեծոցի— յաղագն՝ ի վեր— ի մասին,

Ըզ ժեղ էալին— ժաշ առարցին— յաղագն՝ ի վեր— ի մասին,

Ա. ո՞ո— էայցի— և ըզ լոյ— մէ պեսցի։

Այստեղ Արտաշէսի երեք տողերը մի առ մի պատասխա-
նում են Արտաւազդի երեք տողերին առանձնապէս։

Առաջին տողով Արտաշէսը գրէթէ այսպէս է անիծում—
“Երբ ես գնամ, Աստուածանից կուզեմ, որ դու էլ յօրս գնաս,
գէպ ՚ի մասիսն ՚ի վեր”։ Երկրորդ տողով ասում է „Ես ամեն
երկիրը տարի, տալ Աստուած, որ քեզ էլ քաջքերը տանեն
գէպի մասեաց գագաթը”։ Երրորդ տողով իւր իշխը յայտնում
է ասելով „Ես թագաւորեցի, բայց դու թագուցեալ մնաս և
մարդկանց երեսը ոչ տեսնես”։ Եւ այդ մասին է որ վիպա-
սանը հօրը կամակատար լինելով՝ Արտաւազդին յաւիտենական
դատապարտութեան ենթարկեց։

Դարձեալ Արտաւազդի բողոքը՝ որոյ անդամների երկա-
րութիւնը և տողերի կրծատութիւնը գէպի իւր հայրը յար-
գանք և ակնածութիւն են արտայայտում, բայց Արտաշէսի
տողերը մեծաւ մասամբ սուղ անդամներից և երկար տողե-
րից բաղկացած լինելով՝ նոցա արտաբերութիւնն էլ պէտքն է
արագ կատարել, ինչպէս որ—արագախօս է լինում և ամեն
բարկացող։ Բայց վերջին անդամի վերալ մեր ձայնը եր-
կարելով՝ Արտաշէսը իւր անզուստ բարկութեամբ իբրև կեն-
դանի պատկերի մէջ ներգայանում է մեզ՝ ցանգանալով Ար-
տաւազդին յաւիտենական կօրուստ։

Գրիգոր Մագիստրոսից հաղորդուած տողերը հին վիպա-
սանական հատուած պէտքն է համարուին, և որոց մէջ
նկատվում են սուղ և երկար անդամների պայմանաւոր կիրա-
ռութեան ճշտութիւնը, ինչպէս որ ծխոյ շարժուածքը,
նաւասարդի եռանդուն առաւօտը, արագոտն եղջերուն և
թմբակահարութիւնը սուղ անդամներով, բայց անշարժ փող-
հարութիւնը և յամբաքայլ եզն՝ երկար անդամներով են ար-
տայայտուած։ Ահաւասիկ օրականից երիւարը, և յամբակայլ եզն՝
որոց բացատրութեանը փափագում էր Բագրատունին (Երես 28
առաջ. Մշակ.) հասնել, այստեղ լուծուած են աջողապէս։

Արտաշէսի վիպասանականի մէջ, ինչպէս առացինք, մեծ
գեր են կատարում և նորա կրծատ ու երկար տողերը, որոնք
մեծամեծ անդամների նմանութեամբ յայտարար նշաններ են
հանդիսանում, քառանդամ տողը իբրև քառավանդ անդամ,
եռանդամը իբրև եռավանդ, երկանդամը իբրև երկվանդ և
միանդամը իբրև միավանդ անդամ սղութեան և երկարու-
թեան պայմանները ճշտիւ և բացորոշ արտայայտում են։ Այդ
պայմանները բացատրելու համար առաջ ենք բերում այստեղ
վիպական տողերը իրանց թուահամարով տես գլ. 4.

Քառանդամ տողերը 3, 4, 5, և 7, համարով արտայայ-
տում են Արտաշէսի վերին աստիճանի արագաշարժութիւնը՝
որ գործ դրաւ իւր արշանանաց միջացին։ 1, 6, 8, եռանդամ

տողերի մէջ լիշտակուած են Արտաշէսի դանդաղ շարժուածքը և կամ շարժման հանգստութիւնը, 2, Երկանդամ տողի մէջ սեաւ երկիվարը բոլորովին անշարժ կանգնած է, որի վերայ պիտի հեծանէր Արտաշէսը:

Ոսկոյ և մարդարտի արագ հեղեղը բացայալտուած են
9, և 10, քառանդամ տողերով:

11, և 12, եռանդամ տողերի մէջ բացատրուած են Սաթե-
նիկի շարժման եռանդը, որ ցանկանում էր դիմել կամաց կա-
մաց և ծածկաբար գէպի իւր աենչալին, 13, երկանդամ տողի
մէջ լիշտակուած են Արգաւանի անկողինը՝ որոյ վերան-
պիտի հանդէր:

14, Քառանդամ տողի մէջ մանուկին արագաբար լավը-
տակութիւնը, բայց 15, երկանդամ տողի մէջ մի դիւական
մանուկի անշարժ դրութիւնն են արտայայտուած:

16, 17, և 18, քառանդամ տողերի մէջ սուզ անդամներով՝ Արտաւագդը լուզգուած շրջարջում է, Արտաշատումը տեղչէ գտնում, դիմում է գէպի մարաց երկիրը։ Մտադը լութեան արժանի է այն միակ երկար անդամը ո՞ւղի, որ Արտաշատուանշարժ երկիրն է զուզանում, որին չարժանացաւ նաև

19, և 20, տողերով, ինչպէս ասացինք, Արգաւանի եռանդուն արգանքը և խարգաւանքն են բազատրուած:

21, միանդամ տողի մէջ Արտաշէսի յաւիտենական հանգըստութիւնը, 22, եռանդամ տողի մէջ մարդկանց կամաց կամաց հոսանքը դէպ ՚ի գերեզման, բայց 23, եռանդամ տողով Արտաւազդի վարանքն են արտայալտուած, որ աւերակ տեսնելով երերում է իւր մտածութեան մէջ:

Արտաւագդի որսորդական ուղեղութիւնը 24, եռանդամ տողով, բայց համեմատաբար այն արագաշարժութիւնը՝ որ պիտի գործ դնեին դիւական զօրութիւնները 25, քառամդամ տողով. նորա անլոյս բանտարկութիւնը՝ ուր պիտի կենդանի մնար, 26, եռանդամ տողով են բացատրուած։

Այսպէս և Վարդգէսի ընթացքը և դադարումը կը առ

տողերով, բայց նորա եռանդուն գործառնութիւնը քառանդամ տողով են բացալայտուած:

քան ամենայն տեսակ միակերպ տողեր, եթէ միայն չկամենանք ուշ դարձուցանել նոցա տողերի և անդամների պայմանաւոր կիրառութեան վերայ, որովհետև այդպիսի տաղաքափութեան մէջ իրաւունք ունինք գործ դնել ամեն տեսակ համաչափ և անհամաչափ տողեր ըստ պատշաճի տեղուն։ 2. Բայց եթէ կամենաք նաև տողերի և անդամների պայմանաւոր կիրառութիւնը պահպանել, այն ժամանակ խառն տողակարգը աւելի ևս յարմարութիւններ ունի տողերի պայմանաւոր և աշխոյժ դասաւորութեամբ։ 3. Խառն տողակարգը իւր կրծատ և երկայն տողերի սատարութեամբ կարողանում է որևէ նկարագիր և կամ քերթողական գծագրութիւն արտայալտել։ 4. Ամեն համաչափ և անհամաչափ քերթողներ իրանց միակերպ տողերի մէջ հարկաւ շատ աեղ պիտի աւելորդ բառեր և անտեղի մակդիրներ ներմուծանեն, որպէս զի վանգերի թիւը՝ անդամների մէջ, և անդամների թիւը՝ տողերի մէջ լրութիւն առնեն, բայց խառն տողակարգը իւր կրծատ և երկայն տողերի շնորհիւ ազատ է կացուցանում քերթողին ամենայն ակամայ աւելադրութիւններից։ 5. Միօրինակ տողակարգը կարող է ձանձրոյթ պատճառել մանաւանդ երկայն քերթուածների մէջ իրանց միակերպ տողերի և անդամների անընդհատ և շարունակ կրկնութեամբը, բայց խառն տողակարգը իւր բազմակերպ տողերի փոխառփոխ դասաւորութեամբը մեղմացնում է միակերպութեան ձանձրոյթը և ախորժելի է կացուցանում քերթուածքը։ 6. Եթէ քաջ է քերթողը, իւր շնորհը նա աւելի ևս կարող է փայլեցնել խառն տողակարգուած քերթուածքի մէջ, որովհետև հնար ունի միտ դնել ճարտար և աշխոյժ տողագասութեան և անդամների ու տողերի պայմանաւոր կիրառութեան, բայց քերթողի տկարութիւնը և քերթուածքի թերութիւնները կարող են քողածածկուած մնալ տողերի միակերպութեան մէջ, ուր ամեն բան անխտիր միակերպ ընթացք պիտի ունենալ։

8.

ԽԱՌԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

• Բագրատունոյ քառանդամի վերաբերութեամբ մեր կարծիքը յայտնած լինելով՝ որ չէ կարող նա անհամաչափ քերթութեան նպատակին ծառայել. ըստ ինքեան կարելի է մի առարկութիւն յարուցանել թէ—դէպ ՚ի որ արդեօք անհամաչափ քերթութեան եղանակը մենք աւելի վստահութիւն ունինք, որ նա կարող կըլինի վիպասանական և կամ թատերական քերթուածների ամեն տեսակ կարիքները լցուցանել—։ Այդպիսի առարկութեան համար որպէս զի կարողանանք մեր պատասխանը անվրէպ կացուցանել, հարկ է ուշի ուշով գննել նախ առաջինն նախաքրիստոնէական քաջակիթ վիպասան քերթուածների մի քանի հատուկուոր մնացորդները, և յետ այնորիկ Եկեղեցական շարականների և Նարեկեան քերթուածների ընտիր օրինակները՝ որոնք ամենը միահմուռ վկայում են, որ աւելի դիւրին և աւելի կիրառութեան արժանի է խառն տողակարգը։ Եւ այդ ընդունելութիւնը որ խառն տողակարգը գտել է նախնեաց ընտիր քերթուածների մէջ աւելի այն մասին է, որ ինչպէս ասացինք գրքիս 4 գլ. մէջ, ունի բազմատեսակ յարմարութիւններ, որք են,—նախ՝ խառն տողակարգի քերթութիւնը դիւրին է

Ոմանք վեր ի վերոյ ակնարկութեամբ կարող են կարծել թէ խառն տողակարգը բոլորսին անարօւեստ է և իբրև տրձակաբանութիւն, բաւական է միայն եթէ կանոնաւոր քերթուածքների մէջ բազմավանկ բառեր չխառնենք, յայնժամ անաշխատ ամեն արձակ գրուածք կարելի է տարատրուել և խառն տաղաչափութեան դարձուցանել: Այդպէս կը կարծեն նոքա ամենեքեան, որոնք չգիտեն արձակ և չափածոյ տողերը իրարից զանազաննելու: Եւ նաև ոչ եթէ միայն անհամաչափ խառն տողակարգուած քերթուածները, այլ և ամեն համաչափ քերթուածներ, եթէ ըստ պատշաճի և կերթախորժակով չեն յօրինուած, նոքա ևս խտիր չեն ունենալ որեիցէ արձակ գրուածքից: Սակայն ճարտարարուեստ քերթուածները թէպէտ և լինէին բոլորովին խառն տողակարգութեամբ, այսու ամենայնիւ զգալի է մեզ նոյա քերթողական ներդաշնակութիւնը և մենք ստիպուած պահպանում ենք նորա մէջ առողանութեան պայմանները: Անուրանալի որ խառն չափերը աւելի ազատութիւն ունին քան միւսերը, բայց և այդպիսի ազատութեամբ հնար է տալիս քերթողին մերձենալ բնութեանը և պահպանել ոճոյ կենդանութիւն և պարզութիւն: Ահա այսպիսի բարեմասնութեանց համար է, որ մենք բարւոք համարեցինք խառն տողակարգը առաջարկել 'ի կիրառութիւն մանաւանդ երկայն քերթուածների մէջ. միակ անյարմարութիւնը՝ որ նկատելի են, ոչ եթէ միայն խառն տողակարգուած տողերի մէջ, տղ և ամեն անհամաչափ քերթուածների մէջ, այն է, որ երբեմն ընթերցման միջոցին նոյա անդամները տրոհելուց գժուարութիւնների ենք հանգիպում, սակայն այդպիսի գիպուածներում խորհուրդ կրտալինք անհամաչափ քերթողներին կէտադրութեամբ որոշել այն ամեն անդամները միայն՝ որոնք երկբայանաց առիթ կարող էին լինել, զորորինակ հոգեգալստեան շարականի այս տողերը այսպէս կարելի է կէտադրել:

Որպէս բալըշը վեհ հուղմեալ առ ՚ի ժայտէն՝
Զըս գետ հեշ եղաստու ՚ի ծայրէն ութիւնը վրթուցանէ՝
Հերքունելով արդ անցրեալ լոմբունիւն ժայտէն,
Աւելանեաց սպասում ին լուչե, շատուշիւն հոնե հարեալ ՚ի հերդո
Զանաստոն, և լիստ ուծդին արտգի հետողնեալ մինչը հասցէ
Ի դաշտու, և այս ոչ ևս լատալի, լեղեա սպասու-
Սայակէն Հերքոր...

Բագրատունոյ թարգմանութենք:
Եղեանը կը է ժայռեկ կամ
Ակա պատուի գլուխ կը է աշուակ,
Ասպահու առաջ առաջ կը է աշուակ,
Ասպահու առաջ առաջ կը է աշուակ,

Բարյըսալեած վաղիւտ ուղնայ և շնոր իւրիւ լենդին հայրիւ,
Ինչն անխոսկան ծիր հոլովի մինչև հասոց ռաշբայն 'ի հարլի,
Եւ շնոր ուղրու այլ չմրտահէ, անդրիւն լեհուհա յորդորամիտ.
Նոյն Հէկտոր....

Անուշաղիր թողելով թոմաճեանի իւր սեփական և
Փոփ անգլիացու թարգմանութիւնները, որոց մէջ ոչ եթէ
քերթողական շնորհ, այլ հին հոետորական ճարտարախօսու-
թեան հետքեր են նշարվում՝ որ աւելորդ շատխօսութեամբ
վեց տողի փոխարէն ութ և ինն ունին։ Աւելի արժանաւոր
պիտի համարել Բագրատունոյ թարգմանութիւնը՝ որ կարող
էր մըցել հոմերական տողերի հետ, եթէ միայն քառանդա-
մութեան հարկից ստիպուած հակասական բառեր մէջ չը-
խառնէր։ Այս կողմանէ մեր նկատողութիւնը բացայատ կա-
ցուցանելու համար նախ և առաջ հարկ է Հոմերոսի այդ
նմանութեան իմաստը անթերի լմբոնել. և ով որ ծանօթ է
հոմերական քերթուածքներին, դիտէ անշուշտ, թէ ինչքան
նորա նմանութիւնները ճիշտ և բուն գաղափարին կենդա-
նագիր դիպարն են։ Այսպէս և այս նմանաբերութեան մէջ—
ժայռը Տրովատան է, որից պատերազմական հեղեղը (յոյնք)
վալրաբերեց բոլորչի վէմ (որ է Հեկտորը). սա իջանելով
շառաչմամբ և հարկանելով անտառը (այսինքն աղաղակ բառ-
նալով և խրախուսանօք մղելով իւր զօրքերին) յառաջ է ար-
շավում մինչև դաշտը, ուր վէմ Հեկտորը այլ ևս չէ կարո-
ղանում առաջ գնալ, այլ այնտեղ կանգնում է թէպէտ և
սարսեալ։ Այս է Հոմերոսի այս նմանաբերութեան ճիշտ բա-
ցատրութիւնը, ինչպէս որ և ինքն պարզաբանում է անմի-
ջապէս յետոյ։ Արդ՝ ամեն ընթերցող կարող է նկատել, որ
հոմերական տողերի մէջ չկան էլեմենտրոս, ժայռհ, անդրիւն լեհ-
ուհա յորդորամիտ, և Բագրատունին, կարծեմ, ոչ այնքան անգի-
տաբար, որքան ստիպուած է ներս խառնել այդ բառերը իւր
տողերի անդամները լրացնելու համար։ ծշմարիտ է ամեն

թարգմանիչ ունի իւրաւունք բառեր յապաւել կամ յաւելուլ,
բայց միայն այնպէս որ դոքա չվնասէին բնագըլի իմաստին։
Հոմերոսը չկամեցաւ եղեռնընդոստ ասել, որսվհետե
յոյնք եղեռնագործ չէին այլ իրանց արդարացի իրաւունքն
էին պաշտպանում։ և կամ Հոմերոսը չէր կարող ժպիրհ
անուանել ժայռ Տրովատային, երբ որ նա ինքն սրբութեան
չափ յարգանօք է վերաբերվում նորան ամեն տեղ։ Նոյնպէս
և վէմ Հեկտորը զկայ առաւ սարսեալ, այդ նմանութիւնը
թէ վէմին և թէ հեկտորին միապէս պատշաճում է, որով-
հետեւ ինչպէս Հոմերոսն է բացատրում Հեկտորի այն ժամու
վիճակը „անդ կառեաւ, էառ չկայ.... տեղի տուեալ սասա-
նեցաւ“։ Պիտի իմանանք, որ ինչպէս Հեկտորը զօրքերի կուռ
և կազմ վաշտերին հանդիպելով ահիցը և կամ զայրովթիցը
սարսելով գունաթափ եղաւ և սասանում էր, այսպէս և վէմը՝
դաշտն հասնելով և երերալով կանգ առաւ և նորա բնական
գոյնը սարսափածի պէս գունաթափ էր։ Սակայն Բագրատու-
նոյ թարգմանութեան մէջ յոյնք եղեռնագործ, Տրովացիք
ժպիրհ, և ահագին վէմը կանգնելուց յետոյ դեռ յորդորամիտ
էր առաջ խաղալու, որոնք բնաւ հոմերական չեն։ Ըստ Հոմերոսի ամերական անդամները պատերազմ կազմելու համար։

Որդիս վէմ—բոլորչի,

Զոր գետ ուղիւն—հեղեղասասուր—խորտակեալ—ուղղիւն ժայռին՝
Եւ դրդեալ—յորդատանէն—գլուխի ՚ի մայր,

Բարյըսալեած վաղիւտ ուղնայ, —և շնոր իւրիւ լենդին հայրին,
Ինչն անխոսկան—ծիր հոլովի, —մինչև հասոց ռաշբայն 'ի հարլի,
Եւ անդ—առանու զէայ—բոլոյ սորուեալ։

Նոյն Հէկտոր....

Ահաւասիկ այս առղերի մէջ ակներեւ նկատում ենք տողերի և անդամների պայմանաւոր կիրառութիւնը։ Բայց թերեւս գտանուին այնպիսի քննաբանք՝ որոնք տեսնելով անգամ խառն տողակարգի առաւելութիւնները, որ հնար է տալիս զերծ լինել վնասառիթ բառերից և մակրերներից, և որ Բագրատունեան քառանդամ վեցեակ տողերից գրէ թէ մի ամբողջ տող յապաւելով՝ նաև բովանդակում է իւր մէջ անդամների և տողերի սպայմանաւոր կիրառութիւնը։ Բայց 'ի վերայ այսը ամենայնի անընդել լինելով և օտարախորթ համարելով այդպիսի խառնատող քերթուածները՝ Բագրատունոյ հետ ասեն մեզ „լաւ է ցնորել ընդ Հելլէնս, ընդ Հոռոմս և ընդ մեր նախնիս“։ Եւ այդ ասելով Բագրատունեան քառանդամը, նորա տողերի միակերպութիւնը և նորա մտացածին վանդերը աւելի գերադաս և արժանի համարեն նմանողութեան։

Սակայն այդպիսի կամաւոր յանձնառութեանը մենք
խօսք չունենալով՝ չունինք նաև դիտաւորութիւն ուրիշների
ազատ կամացը և ընտրութեանը վերայ բունանալ։ Միայն թէ
մեր կարծիքը այն է, որ ժամանակաւ եթէ ազգային տաղա-
չափական ճաշակը զարգանալ բաւականաչափ, յայնժամ խառն
տողակարգը և պայմանաւոր կիրառութիւնը անհրաժեշտ
պահանջ պիտի լինին քերթողական արուեստի մէջ։

ՄԻ ԱԿՆԱՐԿ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՎԵՐԱՅ

Մեր քննութեան այս առաջին մասի մէջ, ուր որ հետա-
զօտեցինք վիպասանական երգերի չափը և առհա-
սարակ նախնեաց անհամաչափ քերթութեան կանոնաւոր եղա-
նակը, այս վերջումը արժան է ուշ դարձուցանել վիպասա-
նական դարու հին հայոց քերթողական հանճարի վերալ,
որոյ իբրև վկայագիր ունիմք 'ի ձեռին Վահագնի, Արտաշէսի
և Վարդէսի երգերից մի քանի նշխարներ: Այդ երգերի վեհ
գաղափարը, ճարտարարուեստ տողակարգը, կանոնաւոր քեր-
թութեան ճիշտ հետևողութիւնը, սուլ և երկար անդամների
և տողերի մանրակրկիտ դասաւորութիւնը՝ որ նմանը դժուա-
րաւ կարելի է գտնել մի այլ հայկական քերթուածքի մէջ,
այդ ամեն առաւելութիւնները համոզում են մեզ կարծելու,
որ այդ վէպերի ամբողջ քերթուածները հրաշալի էին 'ի ներ-
քուստ և յարտաքուստ, և որ այդպիսի վէպեր հին հայոց
մէջ անհատական երևոլթներ չէին, այլ հարկաւ լայնածա-
ւալ էին նոցա մշակուած դաշտերը՝ որոնցից մեր ձեռքն հա-
սին միայն մի քանի թերթիկներ: Ենթադրել թէ՝ այս վիպա-

սանական նշխարները մի հազուագիւտ և անզուգական հատուածք էին այն ժամանակուայ բոլոր քերթուածների մէջ, անհնարին և անբնական է, որովհետեւ գիտենք, որ ամեն արուեստ և գիտութիւն հետզհետէ յառաջատութեամբ են կատարելագործվում, և անտեղի է վերափոխուել հրաշալեաց դարը, և կարծել թէ Վահագնի և Վարդգէսի և Արտաշէսի երգերը յանկարծուատ կազմակերպուեցին առանց ազգային ընդհանուր նախապատրաստութեան և առանց հոգոյ և ախորժակի կատարեալ կրթութեան։ Այսպիսի մոլար ենթադրութիւններից մենք ազատ լինելով մեր ներգայ դարու շնորհիւ, կարող ենք, թէպէտ և սակաւաւոր լինէին մեր փաստերը, անվրէպ եզրակացնել որ—Հին հայոց մէջ անհամեմատ զարդացած էր բանստեղծական և տաղաչափական դաշտը, և որ նոյն իսկ ոսկեղինիկ հայկական բարբառի ճիւղը այն հնագոյն դարերում արդէն լոկուած էր և ըստ արժանոյն մշակուած, ինչպէս որ ցուցանում են հնագոյն լեզուաբանական փաստերը։

Եթէ կամենանք համեմատել հայոց վիպասանական երգերը Հոմերական տաղերի հետ, թէպէտ և պիտի խոստովանուենք իսկապէս, որ Հոմերական վէպերի նմանը դեռ ևս չըկարաց արտադրել մարդկութիւնը, նորա այն զարմանահրաշ և բազմապիսի գիտերը, բուն ժողովրդական կեանքը և լեզուն, զբուցների բնական պարզութիւնը, նահասպետուկան կենցալը և պատերազմները անկարելի է գտնել մի այլ հնագոյն քերթուածքի մէջ. և թէպէտ այժմ չունենալով մեզ մի ամբողջ վիպասանական արարուած՝ չունինք և հնար համեմատութեան դնելու Հոմերական երգերի հետ. Սակայն եթէ քերթողական տողերի կազմութիւնը համեմատելու լինինք, հայոց վիպասանական տողերը, նկատում ենք, որ աւելի խնամքով են կազմակերպուած, քան Հոմերականը։ Մենք յաճախ հանդիպում ենք Հոմերական տողերի մէջ այնպիսի աւելադրութիւնների, որ տաղաչափ թարգմանիչուածքիւմ միայն կամ

ըող էին ներմուծանել, և կամ նորա մակդիրները ինչպէս Արտիոպն, սովորածուածնի, առաջարթաձա՞ն և այլոց անկարող է ժուժել կիրթ ախորժակը։ Բայց վիպասանական՝ մեր այս գրքի առաջին և երկրորդ մասի մէջ առաջ բերած 53. տողերը, չունին անախորժ աւելագրութիւններ և կամ անվալել մակդիրներ, նոյցա ամէն մի տողը և բառը անհրաժեշտ պարագալքն են քերթուածքին, և նոյցա նմանաձայնութիւնը, ներգաշնակութիւնը, և պայմանաւոր կիրառութիւնը այնքան հմտութեամբ են գործադրուած, որ արժում է ամէն մի տողի և անգամի վերայ կանգ առնել և երբեմնապէս սքանչանալ նոյցա խորհրդաւոր կազմութեանը վերայ։

Վահագնի երգը համեմատելով Արտաշէսի վիպասանականի հետ և նկատելով Վահագնի երգի մէջ նէ փաղաքշական մասնիկի ստէպ կիրառութիւնը, պիտի կարծել որ այդ երգը ոչ եթէ գողթնեցւոց հեղինակութիւն էր՝ այլ արևմտեան հայոց, որոնցից փոխ առած երգում էին և գողթնեցիք։⁽¹⁾ Որովհետեւ ինչպէս Մշոյ և Վանայ բարբառների մէջ նէ ածանցը ամէն բառի անխտիր հարել կարելի է, նոյնպէս և

⁽¹⁾ Խորենացոյ պատմութեան մէջ յէշատակուած գողթն գաւառն առհասարակ կարծիվում է թէ այժմեան Ծգուկեաց գաւառն պէտք է լինի։ Սակայն այդ երկրի մարդկանց ընաւորութիւնը, ինդութ եան և խրոխութեան բացակայութիւնը, նոյցա քերթողազուրկ ճաշակը, բարբառներին անհնարին աղճատմանըը, նաև երկրի ոչ այնպան պաղաւէտութիւնը, և այլ այդպիսի յատկութիւնը մեզ կասեցնում են հաւատալու—թէ գորա բնակիչքն լինէն վիպասանք և երգիչք։ Այլ ամմայն հաւատականութ եամբ պիտի գաւանակը միւս գողթն գաւառին՝ որ ընկնում է Վարանդայ, Տիգակ և Շբասպար մեր գաւառների մէջ ուր որ նկատում ենք թէ՛ երկերը և թէ՛ մարդկերը օժտուած ամեն նպաստաւոր բարեմատնութեամբ։ Այստեղ երկերը պաղատու և այգեւէտ, երգիչներ աշուղներ և շահկեններ անթիւ, մարդկանց եղանակաւոր ձայնը և երգը անհամեմատ ախորժալուր, ընաւորութիւնները ուրախ, զուարժախօս և եւանդուն, բարբառները բառերով և ոճով հարուստ՝ որոց մի քանի օրինակը առւա մեզ Մ. Եահնապարհանցը իւր տմբլաչը խաչանի մէջ, և որոց մտատիւր ընթերցանութեամբ պիտի համոզուիք որ սոցա բարբառներն անդամ՝ բանաստեղծական խմբով շաղախուած են, Արդեօք երկերը և մարդկերը այլքան ժամանակամիջուցում այդ մեջ յեղախուութիւնը կրցիք՝, թէ մե՛նք սխալ որոշեցինք երկը սահմանները։

Վահագնի այս սակաւատող քերթուածքի մէջ տեսնում ենք Հինգ անգամ ի՛ւ ածանցը կրկնուած. զորօինակ—իտրնի՛ւ, էշէ՛ւ- նի՛ւ, պէտանէշի՛ւ, աչ էռնաչ, արէժակուն, (որոց եզակին պէտք է որ լինէր աչի՛ւ, արէժակի՛ւ): Այս կարծեացը նպաստաւոր են և Վահագնի երգի մէջ ծովալին տեսարանների նմանաբերութիւնը, որով պիտի կարծել, ինչպէս այլ անգամ ասացինք, որ քերթողի բնակավայրը ծովեզրեալ էր: Սակայն Արտաշէսի երգը թէ ոճով և թէ բարբառի յատկութեամբ տարբեր է Վահագնի երգից, որ պիտի Արևելեան հայոց քերթուածք համարել. ինչպէս որ Կուր գետի և Ալանաց ազգի սահման- ներն են ցուցանում, և որ բարբառների ի՛ւ առանձնայատ- կութեան նշանը չկայ Արտաշէսի երգի մէջ:

Այս երկու երգերը ոճով և ներքին կազմութեամբ ևս իրարից մեծ տարբերութիւն ունին: Արտաշէսի վիպասանա- կանը ազատ ասպարէզ ունի, նմանաձայն ներդաշնակութեան այնքան չէ միտ դնում, տողերի անձուկ միակերպութեան մէջ չէ սահմանափակվում, այլ այրական զօրութեամբ քեր- թում է իւր տողերը ազատօրէն՝ թէպէտ և տողերի պայմա- նաւոր կիրառութիւնը աւելի ազդեցիկ բնաւորութիւն ունին սորա մէջ: Սակայն Վահագնի վիպասանականը աւելի ևս գերադաս պէտքն է համարել իւր ճարտարարուեստ կազմու- թեամբ, ալստեղ հրաշանում ենք սորա վեհ գաղափարովը, գեղեցիկ և քնքոյշ և ներդաշնակ տողերովը, անդամների մանրակիտ և պայմանաւոր դասաւորութեամբը: Այս փաքը- րիկ հատուածը նման սոկեալ նկարուն կերտուածքի, իւր վերայ ակներե ցոլացնում է նկարչական մանրաթելերը ամեն գեղարուեստական բարեմանութեամբք: Արտաշէսի երգը ինչքան էլ կատարեալ համարելու լինինք, և նորա տողերը ինչպէս այլք վկայում են, կարող են մըցել բոլոր աշխարհին նշանաւոր քերթուածների հետ, սակայն այս փոքրիկ հա- տուածը թէ իւր վեհագոյն գաղափարով, և թէ տողերի քերթողական մանրանկար կազմակերպութեամբ մի կատարե-

լատիպ օրինակ պիտի համարել բոլոր հայ չափական ար- հեստի մէջ: Եւ զարմանալի չէ արդեօք. որ ինչքան մերձե- նում ենք հայոց հնագոյն գարերին, այնքան աւելի նկատելի են ճաշակի կրթութիւն, քերթողական արհեստի կատարելա- գործութիւն և մեծ բանաստեղծական հանճար: Եւ ի՞նչ իրա- ւամբ ոմանք ենթադրում են թէ հայոց գրական լեզուն մեր թարգմանիչների ժամանակին մշակուեցին, երբ որ նոյն սոկե- ղինիկ բարբառով նկատում ենք շատ դարեր առաջ ամբողջ վիպասանութիւններ շարագրուած:

Որովհետեւ վիպասանական երգերի աշխարհիկ բարբառով թարգմանութեան կարեքը զդալի են լինում շատ անգամ, վասն որոյ և մենք մի այդպիսի թարգմանական փորձ կամե- նալով առնել, թարգմանում ենք այստեղ միայն նոցա այն տողերը՝ որոնք չեն վնասում քերթուածքի նպատակին, բայց անթարգմանելի տողերը թողնում ենք նոյնութեամբ:

Երշնէր էրին—և էրին,
Երշնէր և—ծիրանի ծռլ
Երշնը—ծռլում ունէր
Այս հարհի—էշէգնին.

Եշէգն ՚և լեր ծռի—էր դռլու գալին,
Եշէգն ՚և լեր իրալ—էր դռլու գալին,
Եւ իրակըլ—պատուիլի.
Վաշէր հո—հուր շեր ունէր,
Սոտ լէ բոյ—ծըրու ունէր,
Ի աշունան էին—տրէժակուն:

Հէծէ—որի Արտայն—Արտաշէն
Նըժոյգն իւր—անտուիլուն,
Ա.անէլու—ունէու—շիտու—ուրուն,
Խըժոյ ու—ինչպէս արծուի—գետի անյու—ուրուլոր,
Ի ուշշուն—ունէու—շիտու—ուրուն,
Զըժէ մշշէ—Ալանների—օրիորդին,

Եւ շատ—յաւեցրուց—մէջէն պահուի—օրիրուին՝ բժիշոյ
Թագուած—հասցնելով իւր—քահանը:

Ուին լոր—էր Առավելինամ—քեսայութեանն—Սըստշէս,
Թագուած—էր Տարգարիո—հարսութեանն—Սալենին:

Տէնչայր—Սալենին—Տիկին պէտչան,
Զարդարախոյր—խաւարու և զարի—խաւարծի մասնակուի
՚Ի բարձրին—Սրգուանայ: ¹⁾

Վիշտապահուան—գողացան—Սըստշաղու—հանուին,
Եւ աւշը—ուր բըլին:

Արդարշին—ժաջ որդին—Սըստշաղու
Մի աւշ—ապարանի—Սըստշաղում—չ գունելով
Սանցաւ գունոց—ու շինեց—Մարտի մջին—էր Տարակութիւն:
Սրգուանան—նիւթելով նրան—վիշտապահի—պահուան:

¹⁾ Այս տողերուլ քերթողը՝ ոք Սաթենիկի տռվանքը կամեցաւ արտայայ-
տել, ոչ եթէ Հոմերոսի պէս բացարձակախօսութեամբ անցնում է կամեստու-
թեան սահմանը, այլ հայոց բնասուր պարկեցառթեամբ այն սատիճան քողա-
ծածկում է իւր միտքը, որ թերես իւր ժամանակին էլ գժուար կասկանալի
լինէր: Սորա խմանը բացարձելու կամոր բառգլեքը և թարգմանինելը այլ
ընդ այլոյ կարծիքներ են յայտնում, բայց ըստ իս նմանաբերութիւնն է սա, որոց
կերտութեան մէջ շատ կմուտ էն կին քերթողները, և այսուեղ որդարիոյ և որից
ածականի պաշտօն են կատարում ինչպէս որ և հոր Վահակնի երդի մէջ:

Արդարիոյ և այս իբրև ածական ընդունելով՝ այնուհետեւ հարկ է միտ
դնել քերթողի քողածածկեալ նմանաբերութեամբ՝ որ վերաբերգում է իւր գա-
ղափարին այս եղանակաւ: Արտաշէսի Արքունիքը նմանացրուած է մի ծառի,
որի վերան զանազնն ձիւղը կան, և որոց նշանաւորը նոյն ինքն Արտաշէսն է:
Սակայն կան այդ ծառի վերայ և այս իտարքիւ, այսինքն նորաբոյս ծիլ, կամ
փոքրեկ ձիւղ, որ ամէն գարնան կողքիցը բանում են ծառերի վերայ. և նաև
Արդարիոյ իտարքիւ այսինքն արտախայրանման կանացեղին, որ նշանակում է ծա-
ռերի մերայ բռուած այն օտար բողբոնինը որ ինչպէս արտախորը խոյրելին՝
այն նմանութեամբ էլ սա արտաքին փաթեթի պէս զարդարում է ծառերի
գլուխը: (Այս բոյսը փոքրեկ թուրիի մեծութեամբ բանում է ծառերի վերայ,
որին անուանում են գաւառական բարբառով հշանան, և որն քաղելով ուտեսա-
նել տալիս անտառներին): Եւ նաև պէտք է ՚ի նկատ՝ առնուել այն կանգամները,

Պէտք չգնացած,
Պու էրիկու—բովանդաւի—չէն հետ պարիր,
Էւ էն ինչո՞ւ—ուելուանց—վէրայ ակրէմ:
Պու որս դուրս գտու—դէղ աղատ—Սասին ՚ի վէր,
Քէղ գոջէւր—բովանդաւի—դէղ աղատ—Սասին ՚ի վէր,
Սէն ան—այնպէշ և լոյս—ոչ պէտին:
Ուր է ու—տատառապը—նատասարդին—և հույն երդին,
Բատուչ իւն—եղանակին—և բատուչ իւն—լոյս երդին.
Սէն որ—իւր կըսում—պափ ու լըմբին—էնիս իըսում:
Հապուած գնալով—Վարդգէս հանուին
Քաստաշ գետի—հապ Տուշայ—գատառին,
Եղաւ նըստեց—Ելրէն բըլին,
Մօդ Արքիմէտ—հաղաքին ու—Քաստաշ գետին
Կըսէլ—էրփէլ դուստնը—Երտանդայ—Սրգույն:
Որ նորաբոյս խաւարչիլ և արտախորանման խաւարտը աւելի կանաչագեղ և
հրապուրիչ տեղք են ունենում քան հարազատ ծառի ձիւղերը, բայց ինչպէս դոքա-
նոյնպէս և Արգաւանը ծառի անհրաժեշտ ձիւղերը չեն, և կամեմատելով նորա-
պարզաւարել ուղիշների հետ՝ սոքա հատանելու և ՚ի լոց արկանելու արժանի են:
Ակաւասիլ այս նմանաբերութիւնը ամեն մասամբ յարմարվում է իւր
գալափարին, և քերթողի առայտածը թէ—Սաթենիկ տիկինը ցանկանում էր
արտախորանման խաւարտի և նորաբոյս խաւարծույ Արգաւանի անհոգնիցը—
գորտ իմաստը իւր նմանութեան կամեմատութեամբը պարզաբանելով զդալի է
լինում մեղ՝ որ քերթողը յանդիմանում է Սաթենիկի անդգաստ վարմունքը
ասելով—Սաթենիկ տիկինը արքայական ուղելը անուշաբէլ թողնելով՝ իւր տենչը
տարածում էր դէպ ՚ի Արգաւաննեան չնչին ձիւղի և կամ անհարազատ թիվիկը—
Այսպիսի ծածկախօսութեան հետք գտանփում են և ժողովրդական բարբառների
մէջ զորովինակ այս նմանաբար ասացուածը թէ—ամէն մարդ իւր ձիւղը իւր
թուիցը պէտք է կտրէ— նշանակում է թէ—ամէն մարդ աղջիկ տալիս կամ
առնելիս, իւր պատշաճաւոր շըջանից պիտի իւր արժանավայել ամսւաբէլ որոնէ—
Եւ եթէ անտեղետկ անձանց կամար կամենալու լինինք այս նմանութիւնը
մանրամասն բացարձել, հարկ էր որ այս ծանոթութեան չափ երկարացնէնք
մեր խօսքը: Բայց ժաղովրդական բարբառի մէջ վուսարեբարար նշանակում է
տան և ինչո՞ւ անէրնեն: ինչպէս որ նկատում ենք այս նախադասութեանց մէջ—մէն
բարձի ժնէլ մին բարձի ծերանալ: Բայց Գուտի մէ՛ անէլ նշանակում է սիրակարուիլ,
սիրով շաղկապուիլ:

Գրքիս առաջին մասի մէջ որոշեցինք անհամաչափ քեր-
թութեանց այն չափերը՝ որոնք սահմանափակուած
են կանոնների ներքեւ և ունին սուղ և երկար անդամների և
տողերի պայմանաւոր կիրառութիւնը, բայց մեզ դեռ մնում
է ասել նոցա այն չափերի համար, որոնք որոշ կանոնների
ներքեւ չեն սահմանափակվում այլ և նկատվում են երբեմն
նոցա մէջ պայմանաւոր կիրառութեանց մի քանի առանձ-
նալատկութիւնք։ Այս տեսակ չափական եղանակը՝ որին
անուանում ենք անկանոն չափ, եթէ կամենալու լինինք որ-
եիցէ կանոնի տակ ներփակել, պիտի ասենք որ, նոցա տո-
ղերի մէջ կարող են մուտ գործել բոլոր հայկական տաղա-
չափական անդամները մէկից մինչեւ վեց վանգերով, և փոք-
րավանգ անդամները՝ որ կանոնաւոր քերթուածքի մէջ որոշ
տեղ ունէին, այստեղ կարող են տարածուիլ դասաւորուելով
տողերի ամէն մի անկիւնում։ Յայտնի է որ այսքան անպայ-
ման ազատութեամբ տաղաչափեալ քերթուածները շատ սա-

կաւ տարբերութիւն պիտի ունենան որևէիցէ արձակ շարագրից, սակայն ճարպիկ քերթողը ձեռնահաս է լինում անդամների և տողերի հմուտ դասաւորութեամբ, առոգանութեան ճիշտ պայմանաւ և երբեմն եղանակաւոր ձայնի սատարութեամբ նշմարելի կացուցանել այդպիսի անկանոն քերթութեանց տողերը և անդամները: Եւ ինչպէս ասացինք արդէն, եթէ մեր այժմեան սերունդը ևս կամենայ ունականալ անհամաշափ քերթուածների մէջ, հարկ է ընդելանալ ստէպ ստէպ ընթերցանութեամբ, հատուածելով տողերը և անդամները ճշտիւ, և պահանջեալ առոգանութեան եղանակները պահպանելով. այդպիսի կրթութեամբ միայն կարող են քաղցրանալ անհամաշափ քերթուածները, բայց առանց մի այդպիսի նախապատրաստութեան համոզուած եմ որ ոչ եթէ միայն անկանոն, այլ և ամեն տեսակ անհամաշափ քերթուածները պիտի այնքան խտիր չունենան որևէ արձակ գրուածքից և հարկաւ նոքա ընդհանրապէս պիտի անհիմն և օտարոտի երեան մեզ:

Սակայն շարունակելով մեր քննական տեսութիւնը՝ անկանոն քերթուածների վերաբերութեամբ պիտի ասենք, որ այն երկու մեծամեծ հատորները, եկեղեցական շարականները, և նարեկեան քերթուածները՝ որոնք անհամաշափ եղանակաւ են քերթուած, և որ նոյց մեծ մասը վերաբերվում են անկանոն չափերին, քննաբաններից ոմանք չգիտեմ թէ ինչ փաստերի վերայ հիմնաւորուած այդ քերթուածներից մի քանիսը համարում են տաղաշափութիւն, բայց միւսերը արձակ գրուածք, և կամ միեւնոյն քերթողական հատուածի կէս մասը համարում են տաղաշափեալ, բայց մնացորդը արձակ. որ միենոյն է թէ շարականի մի տուն ընտրելով՝ նորա մի քանի տողերը մեր ախորժակի յարմարաւոր՝ համարէինք տաղաշափութիւն, բայց միւս տողերը զբկէինք այդ առանձնաշնորհութիւնից: Եւ արդարեւ այդպիսի կեղակարծ ենթադրութեանց վերաբերութեամբ իրաւացի է կարծել, որ կամ մեր

նախնիքն էին բոլորովին անգիտակ քերթողական արգւեստին, և կամ թէ այդ քննաբանները ցոյց են տալիս լիուլի անընդունակութիւն հնագոյն քերթուածքների քննութեան մէջ: Եւ որպէս զի օրինակով լայտ առնէինք մեր այս ասածները, առաջ քերենք այստեղ շարականից մի այդպիսի տրւն, որոյ համաշափ տողերի հետ յարակցեալ լինէին և անկանոն չափական տողեր: Օրինակ—

Որ յանէից գոյացուցէր ոչ ու զարարածու ՚ի անընդունի, ՚ի պարէւր—Ապրունծութեան ըր ու սպազէր—հարու ՚ի հառոց, ժամանական գէլ—Շըմա զարարածու ըստ է անընդունի:

Ահա այս շարականի բոլոր տները որ քառանդամ տողերից են բաղկանում, իրանց համաշափ տողերից լետոյ միշտ ունին մի երրորդ անկանոն տող: Ալիմ ինչ պիտի ասենք արդեօք այդ տողերի համար,—չիմացաւ և կամ սխալուեց քերթողը, թէ գիտութեամբ անհամաշափ տողերը խառնեց համաշափների հետ, համարելով սորանց միհամաւասար քերթուական տողեր: ՚Ի հարկէ որ պէտք է համարենք գիտակցաբար գործուած, և պիտի ընդունենք, որ վերջին տողը ևս ունի տաղաշափութիւն այնքան ազատութեամբ, ինչքան որ թոյլ են տալիս անկանոն քերթողութեան օրէնքները: Եւ այսպիսի օրինակներ ամեն տեղ հանդիպում են մեզ հնագոյն քերթուածների մէջ, որ ոչ եթէ միայն մասնական հատուածների մէջ այլ և ամբողջ քերթուածների և շարականների մէջ նկատում ենք, որ կիսով չափ համաշափ և կամ կանոնաւոր քերթութիւն ունին, բայց մնացեալ կէսն անկանոն չափով են քերթուած: Եւ անտեղի է ենթադրել, թէ մեր հնագոյն քաջավարժ քերթողները, որոնք ոչ եթէ միայն տողերի և անդամների միտ գարձուցին, այլ և ջանացին նոցապայմանաւոր կիրառութեամբը զարդարել իրանց քերթուածները, նոքա երբեմնապէս զառանցաբանում էին արձակն ու

տաղաչափութիւնը միւնոյն հատուածի կամ քերթուածի մէջ¹⁾ խառնելով։ Եւ բացի սորանից այդ արձակ կարծեցեալ հատուածների համար ունինք անժխտելի փաստեր քերթողական գծագրութեամբ ապացուցուած, որոյ մի քանի օրինակները նկատեցինք և պիտի նկատենք մեր այս գըքի մէջ։

Անկանոն քերթութեանց գոյութիւնը և կիրառութիւնը ընդունելուց յետոյ՝ այժմ առաջ բերենք մի քանի օրինակներ ժողովրդական և գրականական քերթուածներից, որոնք ունին տողակարգութիւնք նոյն նմանութեամբ, ինչպէս որ նկատեցինք արդէն կանոնաւոր քերթուածների մէջ, այսինքն որ նոքա բաղկանում են կամ միանդամ, կամ երկանդամ, կամ եռանդամ և կամ քառանդամ տողերից և կամ խառն տողակարգութեամբ, որոց ամէնի համար բաւական են այս մի քանի օրինակներս։

Այս հմայական ազօթքները անկանոն միանդամ և երկանդամ տողերից են կազմուած և պէտք է հին և ընտիր ժողովրդական քերթուածներ համարել, որոց տողակարգը որոշվում են իրանց բնական առոգանութեան պայմաններով։

Չար աչ +,

Չար անալ,

Չար նիմլ,

Անբուն Ասպուած,

Լուսոյն — լուսանակող,

Օյի պէս — սոշան,

Ուսո՞ւ պէս — բոշան։

¹⁾ Իմքննադատ Թերզեանի այն կարծեացը հանդէպ թէ «շատ օրինակներ կան առ մեզ... երգուած արձակներու»՝ մեր նորագոյն մատենագրներից մէկը յոյժ երաւամբ իւր զարմանքը արտայայտում է ասելով, «մինչև այժմ չէնիք կարծում, թէ կայ արձակ բանիւ երգ»։ Սակայն հարկ է Թերզեանից պահանջել որպէս զեւ այդպիսի անորոշ հարուածով չխախտէր հայոց բուր տաղաչափական հնմքերը, այլ ջանայր ապացուցանել թէ ո՞րնք են այն արձակները, որ երգվում են առ մեզ։

Ըստիսուէ — սուրի առաջին
Ըստիսուէ — յուշտանէն դաւր էլուտ,
Ըստիսուէ — ջուրը հըստուտ,
Ըստիսուէ — չուրը բըստանէց.
Անցեալը — բըստանէց,
Անդասուէ — ճըստէց,
Անէշտուէ — իւրուտ,
Մարտուուտէն — էլուտ։

Նարեկացոյ այս տաղը ևս երկանդամ անկանոն տողակարգ ունի։

Ես յայն — պատիւծուտն ասէմ,
Ու գոչ էր — 'ի քատալեւնին,
'ի քատալեւնին — գոչ էր,
Զայն առանէր — 'ի առանտարմետոն...
Անէլ յայնը — որ ես շուտյ,
Սա քահէ պամուրն — որ ունիմ...
Անէլ պահնջ էլու չունին,
Անէն ունին — անտոյ պղոսինին...
Փատու — փըսիւշին պայտուտ,
Ու փըսիւտյ — ո գերեւլն ՚ի բանդէն։

Նոյնալէս այս շարականը՝ որ մեծաւ մասամբ եռանդամ տողեր ունի

Ու վէր օրհնին — յալուսուլ — ժրովինին,
'ի վէրայ նըստիւլ — յատանին — համեյտոյ,
Բարեբանեալը — որ եիլորտ — 'ի իւրույտուէլ։
Ուսուի և մէս — զյալ լահան — օրհնութեանցն զյայն
Վապույտնեմք չէնլ լահանուր փաստոյ՝
Ըսու պայտուլ — օրհնութելովլ,
Օլստանայ — 'ի բարյուտն — ալելուտետո.
Բարեբանեալ եիլորտ — ասուային պետուտետո։

Նարեկացոյ համբարձման տաղը խառն տողակարգ ունի:

Զերէնային գուսայ—պատմութանին—ըստարտէրն
Դարչեալ—ըստծանել հարցեալ,
Զի՞ հարմէր համուերք ժո ըստ լե ինիւալ—հանչան.
Հանչան—՚ի ինաշին—հարմէալ տակ,
Կոփեցի—ութշամին ինայ,
Յերէիր—ըմշայ հեղեալ—ըմշայ նորտ.
Նոր անդրէն—՚ի նոյն—հարցաբանեալ—ընհիւն.
Զի այտ վերք—՚ի յեսո ժո,
Որ ոչ—՚ի հոշոյ սպեզծէր ըստարտէր ժո—Տէր:

Նոյնպէս խառն տողակարգ ունի և այս շարականը:

Կէնուանարար—Սապըւած—մարդասէր հոգի,
Ըստողուեալսըն—մարդասանին միրով—ըստուորիցիւր—հրեշինօս լեզուօս,
Վասն որոյ և մէս—այսօք ատնէնց—ըստ գուլուստ ժո սուրբ:
Զառորճոյսոն—ժո գուլուստամիւր—սուրբ ատառէնուլուն,
Կոչելով—՚ի մոտին—ու յըստեալսն ՚ի մլետայ—բառշայայ լեզուօս: վասն...

Հոգետորակուն—սուրբ մէրտուլունին՝
Զարդարեցիր նորօս—ողիւելուց—՚ի զգեստը ըստուոյայը—և նորտիւառուս,
Վասնորոյ և մէս—այսօք ատնէնց—ըստ գուլուստ ժո սուրբ:

Այս շարականը քառանդամ տողակարգ ունի անկանոն չափով:

Ա.Ենտոսութեն—երրորդութեան—ընդուրէալ ծառայ—և հաւատարէին,
Յաղլեռզ—սուրաւէն—և չաղ—նորդապաէ,
Երագուհու—սուրբը Սարգիս—շնորհայ—օլեան.
Բարեկառ լէր—առ Քրիստո—վասն անշանայ—թըրայ:
Թուգուրին—երինուտրին—սուրբ ըշրապէտ—և մէսամարտին,
Սկրով—անմուհին—ինաշեալ—յաշլուրէին,
Երագուհու—Սուրբը Սարգիս—ինչին—պլուարտէալ: բա...
Ա.Երեգուհու—սուրաւարութեան—մէծ իսրապէտ—պայտաւաէ,
Ցուցալու—յարդարութեան—

Երագուհու—Սուրբը Սարգիս—անշշէջ—ճառագայլ: բա...

Ա.Երեգուհու—հայոց մէծաց—որիմաւ ՚ի մէջ երէրի—՚ի հետեւոյ,
Հուշին—հարցուոյ—՚ի դաշտ—ծաղ շածին,
Երագուհու—Սուրբը Սարգիս—որ նէ—անհաւութեան.
Բարեկառ լէր—առ Քրիստո—վասն անշանայ—թէ բոյ:

Նոյնպէս և Նարեկացոյ այս տաղը քառանդամ տողակարգ ունի, ամէն մի տողի սկզբում և վերջում միավանդ անդամ գործադրելով: Նարեկացոյ մի այսպիսի քառանդամի օրինակ էլ նկատեցինք գրքիս Ա. մասի մէջ, միայն թէ նորա սկզբի և վերջի անդամները երկվանդ էին: ¹⁾

Լոյն—գերասնային—երինաշատիշ—անհ,
Ունի—որդունածէն—լերոյ ծովտ—քայլ:
Քայլ—լէմ շարժելով—ուշ իսրաւն—նէ առ,
Նիւսպ—որդունածէն—անսուրապի—առ լի:
Տօլլ—՚ի ծարաւուս—երէրի երէրին—քոյ,
Կոյն—որդունաշուր—սկզբանութեան—ունի:

1) Այսուղեակարէ եմ համարում նախ՝ շնորհակալութիւն մատուցանել իզմիրեան Մըցանակաբաշխութեան իմ միւս քննագատ Ըմենապատիւ Խըմեան Հայրիկին, որ քաջածանօթ լինելով առաջազգին անհամաշափ քերթութեանց արուեստին, յանձն առաւ իմ խնդրանք քննութեան աւնու իմ գերքը և ապա ցանկալի էր մմահաւլնորա քննական հատուածի մէջ, թէ իօնէ է նշանակում արդեպ Մուշ, Գողթն, և Ռըշտունեաց գաւառների յիշասակութիւնը, միգուցէ բազմբախս Հայրիկը կարծում է թէ, հնումը հայոց իւրաքանչիւը գաւառ անձնիւը առանձնիւն քերթողական արուեստ ունենք, և որ բոլորի եղանակները և փոփոխութիւնները ևս որոշած չլինելով իմ քննութիւնս էլ ամբողջ և բոլմեգակ չէ համարուել: Ծայդ կարծեաց վերաբերութեամբ իմ ասելիքս այն է, որ թէպէտ բազմակերպ փոխակերպութիւններ կան նախնեաց անհամաշափ քերթուածների մէջ, բայց նոքա բոլորը մի արմատից նև բղիւում: և եթէ մենք անհամաշափ քերթութեան ամէն մի երկրորդական փոփոխութիւնները ՚ի հաշեւ առնելու լինենք, ինչպէս որ այսուղեալ ահա երկը տեսակ քառանդամներ ենք նշամբում, երկուոր նարեկացոյն, մէկը մեծին վարդանայ, յայնժամնոցա բոլորի թէւը կարող էր հաւասարուել ոչ եթէ երկը, այլ հայոց ընդարձակ աշխարհի բոլոր գաւառների թուոյն հետո: և այդ մասին մենք անուշագիր թողելով այդ աննշան փոփոխութիւնները, երկու զիլիաւոր ճիւղերի բաժանեցինք նախնեաց անհամաշափ քերթու ամքները մի քանի ստորագաժամաւը հանդերձ:

Այս վերոյգրեալ և բոլոր նմանօրինակ քերթուածները պարտաւոր ենք տաղաչափութիւն համարել՝ ոչ եթէ միայն իրանց արտաքին կազմութիւնից և պայմանաւոր կիրառութիւնից մակաբերելով, այլ և այն մասին, որ 'ի հնուստ ընդունուած են դոցա քերթողական չափերը և տողերը, ինչպէս որ շարականների մէջ նկատում ենք կէտադրութեան նշանը՝ որով տրոհվում են տողերը, բայց նարեկացոյ տողերը առանց կէտադրութեան նշանի էլ ամէն տեղ գտնում ենք տողակարգուած, նոյնպէս և ժողովրդական քերթուածների տողակարգը կարելի է տրոհել իրանց բնական առողանութեան հետեւողութեամբ և ձայնայանգի նշաններով։ Եւ թէպէտ այսպիսի անկանոն չափերը արձակ շարագրի չափ ամէն դիւրութիւններ վայելում են, սակայն անպակաս են նոցա մէջ և այնպիսի քերթողական ճարտարութիւնք՝ որ ոչ սակաւ դժուարութիւն կարող են պատճառել քերթողին։ Նաև նկատելի են պայմանաւոր կիրառութիւն, զորօրինակ—նարեկան քառանդամ տողերի սկզբում և վերջում գործ դրուած միավանդ և երկվանդ անդամների վերայ երկար շեշտելով ուշադրութեան արժանի ենք դատում նոցա բովանդակութիւնը։ Եւ Ս. Սարգսի շարականը թէպէտ Շնորհալուց ժամանակաւ կրտսերագոյն, բայց այսուամենայնիւ ունի պայմաններ, ինչպէս նորա երկար անդամները՝ որ մեծ համարման արժանի են առնում գործը և գործողը, և դիմու ՚ի մէջ երկն սուլ անդամով լայտնապէս արագութիւն է արտայատվում։ Այսպէս և միւս քերթուածները շատ կամ սակաւ պայմանաւոր կիրառութիւն ունին. և երբեմն նկատում ենք նոցա մէջ մի առանձնայատկութիւն ևս, որ բազմավանդ անդամները և տողերը՝ մեծամեծ, բայց փոքրավանդ անդամները և տողերը փոքրագոյն իրողութեանց լայտարար նշաններ են հանդիսանում, որ այսպիսի օրինակների շատ ենք հանդիպում Շարականների և նարեկան քերթուածների մէջ։

Եւ ոչ եթէ միայն անհամաչափ կանոնաւոր քերթու-

թիւնները, այլ և անկանոն տաղաչափութիւնները 'ի հնուստ անտի վիպասան-քերթողներից են հասած մինչև քրիստոնէական դարը, որոյ ապացոյց ունինք Խորենացոյ գիրք Բ. Գ. ԾԲ. Ուր որ արդիւնաշատ պատմագիրը լիշտատակելով Սմբատի գրուատիքը լայտնապէս վկայում է, որ այդ հատուածը վիպասանական առասպելներից առնուած է. և իսկապէս նորա կազմութիւնը մտադիւր զննելով՝ նկատում ենք որ տնկանոն չափով է քերթուած։ Ահաւասիկ և նորա տողերը՝ որ բնական առոգանութեան ճիշտ պայմանները պահպանելով դասւորեցինք ալստեղ։

Ու ունելի հաստի անդամոյ համար հաջութեան,

Եւ առաջնութեան ոգեւոյն պարզ,

Եւ գլուխութեան ունեց վայելչայեալ.

Սակա ինչ արեան նիշ ունելով յաշն,

Որուս դրանեան,

'ի վերայ սոհոյ և ՚ի մէջ մարդարայ ծա՛գեր:

Եւ ՚ի վերայ շրյա անզին և մարմոյ շագոյ յամենայնի,

Եւ առաջնութեան յաջոշուածոյ ուներ ՚ի մարդու

Առաջել առն ունենայն ոչ:

Ոչ եթէ միայն Խորենացոյ վկայութեամբ, այլ և այս հատուածի մէջ եղած գաղափարները ևս հեթանոսական են. ինչպէս որ որսորդական հետամտութիւնը որ ունէր Սմբատը գէպ ՚ի ոչ անառակութեան այլ առաքինութեան ոգիքը, որ այդպիսի բացատրութիւնը քրիստոնէական չէ։ Նոյնպէս և պատերազմական աջողութիւնը բերման և կամ մի այլ պատերազմական չաստուծոյ տուչութիւն է համարում, որոյ սկզբնական նշանակութիւնը գեռ սկահանվում է աշխարհիկ բարբառի մէջ, և անուանում են առաջն կամ պատռվի. և որևիցէ քաջութիւն, ըմբշամարտութեան ոյժ, բանաստեղական հանճար պատռվի է ասում են, և կամ այն ինչ սուրբեց

առաջած են համարում։ Սակայն քըստոնեալք և նոյն իսկ Խորենացին այդպիսի աջող և անաջող դիպուածները աստուածային նախախնամութեանն են վերագրում։

Այս վիստասանական հատուածի տաղաչափական կազմութեանը համար իբրև անհերքելի ապացոյց ունինք նաև տողերի և անդամների պայմանաւոր կիրառութիւնը, որովհետև քերթողը իւր հերոսի մեծամեծ ձիրքերը, քաջութիւնը, ճարպիկ և դիւրաշարժ կազմուածքը սուղ անդամներով արտայալտելով՝ դոցա միջավայրում զետեղում է չորրորդ տողը իւր երեք երկար անդամներով „սակաւ ինչ—արեան նիշ—ունելով յաչսն“ որոյ մեղմ և ծանր արտաքերութեամբ իսկոյն զգալի է լինում մեզ՝ որ այդ նիշը փոքրիկ էր և անջինջ կպած Սմբատի աչքին։ Եւ ոչ եթէ միայն առողանութեան պայմանաւ, այլև քերթողական դժագրութեամբ տեսանելի է մեզ այդ արեան նիշը հինգերորդ տողով „որպէս դրակոնդիկոն“, որն մտած է քերթուածքի մէջ ճիշտ այն նմանութեամբ, ինչպէս նիշն էր Սմբատի աչքում։ Նշանակութեամբ ևս դրակոնդիկոն նիշ է նշանակում, բայց տեսլեամբ այնպէս հրապուրիչ, ինչպէս վեցերորդ տողն է ցուցանում։ Մի այսպիսի քերթողական ճարտարութիւն էլ նկատեցինք անցեալ 7. գլխի մէջ. այնտեղ վիստասան-քերթողը երկար անդամներով շրջապատել էր ռաբէո պարագաներով սուղ անդամը, բայց այստեղ սուղ անդամներով շրջապատել է արեան նիշը յայտարար անդամները և տողը։ Անտեղի չէ միւսանգամ ևս կրկնել մեր խօսքը թէ—կարելի է արդեօք հակաճառել, որ վիպասան-քերթողները անդիտակցաբար դասաւորեցին այստեղ իրանց սուղ և երկար անդամները և տողերը՝ և որևէից մի արձակ շարագիր ընական առողանութեան հետևողութեամբ տողակարգելով՝ կարող ենք այսքան ճիշտ յայտարար նշաններ ստանալ։

Այսպէս և Խորենացոյ պատմութեան վերջին գլուխը թերեւ այն քերթուածքն է, որի համար ձեռագրների մէջ

լիշտակուած է „բանք չափաւ լինքն և՚ի Սահակ Բագրատունին“ վերնագրով։ Մի գուցէ կամեցել է քերթողը այդ գլխի մէջ արտայալտել իւր և Սահակ Բագրատունոյ ներքին համոզումները հայոց ազգի վերաբերութեամբ այսպիսի տողերով—

Ուբա՛մ—ըշէ՛շ—Հայոց աշխառհ,

Ուբա՛մ—ըշէ՛շ հանուրց—Հետիսականաց—վշհագոյն....

Բայց Կաղկանդուացոյ ճարտասան-քերթողի ողբական երգը անկարծիք պէտք է տաղաչափեալ համարել, որովհետև նոյն պատմագիրը վկայում է, որ ողբերգակ Դավթակը՝ արուեստագիտական իմաստից տեղեակ, հնարագիւտական վարժիւք աջողակ և վերծանական քերթութեամբ յառաջադէմ մի անձն էր. որից պէտքն է նաև մակաբերել, որ քերթողներին համար մեծ առաջադիմութիւն էր համարվում նոցա գերազանցիան վերծանութեան վարժութեան՝ որն ըստ իս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այն առողանութեան ճիշտ պայմանները՝ որ պիտի պահպանուին սուղ և երկար անդամների և առողերի արտաքերութեան միջոցին։ Այս երգից էլ ահա մի քանի տող—

Խարբաւանոց—խորհրդովնք—ասրեալ Ձեկուսի՝

Եւ անողորմ—խոյսոմամբ—Հերա-որեաց զ վեհառոց.

Խըրիս էիր ուու—՚ի վերայ աշգայ—աիեղ երաց,

Խըրիս էիր խոյսիր—որ պէ՛շ—արթնացուցանէին:

Իու արտ—ուարչաւ արինին—յայլ Ճանապարհ.

Եւ եկանինեցին—՚ի վերայ ժու—որդիս Ճանապարհ:

Կաղուցին շուկաք—իտիստեան—նորս,

Եւ լըս-շունչ էրէնից—Ճանապարհին—՚ի վերայ նորս,

Ագուաւաչ զրուց—ուզուցին—՚ի նմա՝

Եւ գողոսնք վայրի—սպասուցին—նըմա։ . . .

Զեսուեցին—յահն ժամանակաց—ուուրչ ուուալիներ,

Յորում առեւցաւ—հան քո—յաւուբեր։

Անկանոն քերթութեանց համար բաւական են այս մի
քանի նշարները՝ որոց մէջ թէպէտ կալին այնպիսի օրինակ-
ներ՝ որ քերթողական ճիշտ տողակարգի նմանութիւն ու-
նէին, և կալին այնպիսիքը՝ որ արձակ շարադրի չափ ազատ
էին, բայց նոցա բոլորի չափական արուեստը միևնույն աղբիւ-
րիցն են բղխում, այսինքն որ հայկական մէկից մինչև վեց
վանդերով տաղաչափական անդամները գործադրվում են տո-
ղերի ամէն մի անկիւնում անխտիր։ Եւ մեծ ճարտարու-
թեամբ կարելի է գործ դնել այս տեսակ քերթուածների մէջ
տողերի և անդամների սլալմանաւոր կիրառութիւնը, եթէ
միայն քերթողը կամենայ և կամ այդ հմտութիւնը և վար-
ժութիւնը ունենալի։ Այժմ դառնանք մի ընդհանուր հայեացք
ձգել Շարականների և Նարեկեան քերթուածքների վերայ
բացառապէս։



ԶԱՐԱԿԱՆՆԵՐ,

Համապատակ քերթութեան լիակատար օրինակներ
ունինք Եկեղեցական շարականների, ժամերգութեանց
և տաղերգութեանց մէջ, ուր որ հանդէս են գալիս
քրիստոնէական դարու բարեպաշտ և Աստուածամերձ
թողները իրանց ողորկ քերթուածներով՝ և գերապանծ ու
ստից բովանդակութեամբ։ Սոքա են բուն ազգային քեր-
ղութեան տիպարները, և եթէ ոչ ներքին տաղաչափական
նուածովք, գոնէ արտաքին կազմութեամբ հին ազգային
համաչափ քերթութեան նմանութիւնն են մեզ ներգա-
նում։

Եւ ոչ թէ միայն շարականների տաղաջափական արուեստը այլ և Շաբահն անուանակոչութիւնը մեր թարգմանչաց հնարած չէ, այլ հին գարուց մնացած. և ընդունայն ԵՇարականների բացատրողի կարծիքը թէ—շարական նշանակում է շեյրական, իբր թէ պարսկական չեց բառի վերայ պատռաստած հարոց ական ածանցը. Այս մասին կամենալով մեր կարծիքը յատնել, պիտի ասենք որ—աւելի իրաւացի է այն ստուգաբանութիւնը՝ որ հայացի բառով մեկնում են շու—

ական, իբր թէ շորհ ական։ և ոչ թէ միայն շորտկան, այլ և երաժշտական գրէ թէ բոլոր բառերը հայկական ծագում ունին և նախաքրիստոնէական դարու արդասիք են։ Եւ նախկին շորտկան անուանակոչութեան բուն պատճառը այն էր, որ այն հին ժամանակին երկու տեսակ մատեանները արտաքին կերպարանօք իրարից զանազանելու համար, մի տեսակին անուանում էին շորտկան՝ որոնք ակունքների պէս ձայնագրական նշաններ ունեին իրանց տողերի մէջ տարածուած, բայց մնացեալ տեսակները շարագիր էին, որոնք չունեին միջանկեալ նշաններ այլ շարայար գրուածքներ էին։ Եւ շոր ոչ թէ ածական է այլ գոյական, որ ունի յատկացուցիչ ական։ Այս է իմ համոզումս ահա, որ Խորենացոյ լիշտակած անբաւ զրուցաց մատեանների մէջ, 'ի հնուստ անդի կային և այնպիսի ձայնագրեալ մատեաններ, որ անուանվում էին շոր—ական։ և որոնք գրուած էին այլազգի ասուերով, բայց հայացի բառերով։

Եւ այդպիսի շարական մատեանների մէջ ամփոփուած էին յատկապէս տաղաչափեալ քերթուածներ, և ինչքան որ հին է մարդկութեան մէջ և ընդ նմին մեր ազգի մէջ երաժշտական և եկեղեցական արուեստը՝ նոյնքան ժամանակաւ հնագոյն պիտի համարել և քերթողական արուեստը։ Եւ ինչ են արդեօք քերթուածները, եթէ ոչ երաժշտութեան կրտսերագոյն ժառանգները, որոնք ծնունդ առին երգեցողական պիտուքները լցուցանելու համար միայն։ Երաժշտական եղանակներին համապատասխան յօրինում էին տաղաչափեալ տողեր, և ամէն մի եղանակաւոր ձայն ծնանում էր նորագոյն քերթուածք, որոնք լետոյ ժամանակաւ ծառայեցին նաև հասարակ ընթերցանութեան համար առանց եղանակաւոր ձայնի։ Այսպէս պէտք է կարծել և հայոց վիպասանական երգերի և նոյն իսկ Հոմերական տաղերի վերաբերութեամբ, որոց քերթուածները սկզբաննէ երգվում էին, ինչպէս նոցանուակոչութիւն է ցուցանում, բայց լետոյ նոցա քերթու-

դական մատեանները և տաղաչափութիւնները ծառայեցին և հասարակ ընթերցանութեան համար։ Մեր ըուն ազգային քերթողական արուեստը՝ որոց օրինակները գտնում ենք մեր եկեղեցական երգերի մէջ, այնքան ընդարձակ ծաւալ ունին, որ միևնույն քերթուածքի մէջ կանոնաւոր և անկանոն տողերի հետ 'ի միասին կարող են գործադրուիլ և ամեն տեսակ համաչափ տողեր։ Եւ ինչպէս ասացինք, անկարելի է թէ, մենք այդպիսի խառն քերթուածներից ընտրանօք որոշէինք մեր ճաշակի յարմար համաչափ և կամ համաչափանման տողեր, և տաղաչափութիւն համարէինք նորանց, բայց միւս անհամաչափ տողերը՝ որոնք անախորժ էին մեր քմացը, և կամ որ նորանցից մեր խելքը բան չէր կտրում, համարէինք արձակ շարագիր։ Այլ հարկ է իմանալ, որ ամեն անհամաչափ քերթուածք բովանդակում է իւր մէջ ամեն տեսակ տաղաչափեալ տողեր, և երբ որ մենք նոցա մէջ մի քանի տեսակ տողերի քերթուածք ենք անուանում, նոյն իսկ մեր այդ խոստովանութիւնը մի անհերքելի ապացուց է, որ միւս տողերն էլ նոյն սեռին են պատկանում։ Բացի դորանցից ունինք նաև իրական փաստեր շարականների մէջ, որովհետեւ 'ի հնուց սովորութիւն է եղել ձեռագիր գրիչներին ամեն տողակարգուած քերթուածքներ շարայար գրելու ժամանակին՝ նոցա տողերը կէտադրութեամբ որոշել։ որ և այդ հանգամանացը ուշ դարձուցանելով նկատում ենք, որ շարականների մէջ եթէ ոչ ամենայն տեղ, գոնէ շատ տեղ բութով և կամ միջակէտով քերթողական տողերը բաժանուած են։ Ահաւասիկ այս տողաբաժանարար կէտը յալտնապէս նկատում ենք գործադրուած և ամեն անհամաչափ կանոնաւոր քերթողական տողերի վերայ, ուրեմն ինչպէս համաչափ, նոյնպէս և ամեն անհամաչափ տողեր հնումը քերթուածք համարելով՝ տողակարգում և նոցա տողերը միապէս բաժանուած էին։ որով և պիտի փարատուի հագրատունոյ երկրայանքը՝ որ գժուարանում էր միատող և երկտող քերթուածքները իրարից զանազանելու։

ՄԵզ ալժմ հարկ լինելով մի ընդհանուր գաղափար
կազմել շարականների վերայ, անտեղի ենք համարում դի-
մելու այն դիւրին միջոցին, որ ոմանք միայն վերնագրերը
յիշատակելով բաւականանում են, որովհետեւ ամէն քայլափո-
խում կարող ենք հակասութեան հանդիպել, և նաև անկարելի
էր, եթէ բոլոր շարականները մի առ մի տողակարգեինք
այստեղ կարեոր բացարութեամբ և մեկնաբանութեամբ:
Միայն մի ճաշակ տալու համար բաւական ենք համարում
շարականներից մի գլուխ ընտրելով տողակարգել այստեղ՝ 'ի
նկատի ունենալով նոցա տողաբաժանարար կէտերը: Եւ այս
եղանակաւ տողակարգուած շարականների մէջ մենք ամեն
տեղ հանդիպում ենք համաշափ և անհամաչափ տողերի,
որոնք անխտիր հետզհետէ իրարու յաջորդում են: Մեր այս-
տեղ առաջ բերած օրինակը Աստուածայայտնութեան առա-
ջին աւուր շարականն է, որն նպատակայարմար է և հանրա-
ծանօթ:

1. Խորհրդական միջ՝ և առանձիւթեալ որ յայսմ առարկ յայտնեցաւ,
Հովհանն երգեն ըստ հրեշտական պատ առարկի առարկան
Ծնու առ Արքայ՝ 'ի Բելղանէմ ժաղանի,
Որտես հարդան օհունեցէ՛ զե վասէն մեր հարժայաւ,
Անբանելին երկնի և երկնի ՚ե խոնչարտրս պատեյաւ,
Ոչ մէնելուն՝ 'ի հօրէ՝ 'ի սուրբ այրէն բաղաւյաւ:
Այսօր յանձնան երկնեցն ՚ի վերասար մեծապայծան աւելիս,
Եւ արարած ամենայն զգեցան հանդերձ վրիշտաւան:
Այսօր յայրէն ընծայեցաւ չընկարու որդին Սպառածոյ,
10. Եւ հրեշտական բաղաւյաւի յարէնից յարէնի վայրին ետք
Այսօր հովհանն ըստ պետական պարտարաննետն արեգակն,
Եւ ըստ հրեշտական երգեն փառաւ ՚ի բարյաւան Սպառածոյ:
՚ի հօրէ ծագեցար ըստաստրել զարդարածու,
Արդարանելաւան արեգակ ըստ պէլ փառաւ քեզ,
Ծըստը ՚ի յայրէն ընծայեցաւ Բելղանէմ:

Հովանեսաց յանձնելու երգը գետը՝ 'ի հոգու.
Ե- Եւ երգեցուտ որ ՚ի հուսէն մարդացար:
Հ. Անըսինըն եւ եակեց բանստ հօր,
Ու էկը յառաջ քան զայտակետնու,
Ե- Եկիր ՚ի պրեւալետ սպեղտուծոց քո,
Ըստել օրհնեմի Աստված հարցը մերոց:
Ծըստը ՚ի հուսէն անմաս մըտթիւն,
Անըստանէլի և միշտ գուռն ոչ մէն եցար ՚ի հայութուն ծոցոց:
Ցընծութեամբ առնեցուտ ըստընունդ ու սուրբ,
Ու յայտնեցար մէջ շոյ ՚ի շուոյ,
Ե- շուուու ու շոյ ըստըն ըստիւն երու.
Գործըն առաստ ըստակը օրհն եցէն,
Ե- բարչը արարէն ըստ յանդատան:
Ըստեալ ՚ի պրեւ կուսէն օրհն եցէն,
30. Զատճառաւելի պժուռնոր պրէշն գունեցէն:
մ. Ուրախ լէր Աստվածուծին յոյ և պրէշն մայր, ուսի
Ըստեալ ըստունու շուոյ Բժժոյուցանէն:
Ըստեալ շուոյ մայր և կոյս, ուսի մայր ու մասունք կոյս
Ըստեալ գործըն կուսաց Աստվածային, ուսի առաջիւնութիւն
Զայտին յընծութեամբ Բժժոյուցանէն:
Մայր սուրբ պատրիարք շուոյ,
Հրեշտականը օրհն ուստանաւ ըստէն ըստունունէն:
Ո. Ա. Աւանեմաստ ամ ան հոյ լուսանուշ ինամուղ սպեղտուն և ամ ՚ը ըստրիւ,
Անեց և ե էկը ետէ, մասի ուստանաւ ըստէն:
40. Զար միշտ օրհնեն դաստ անմարդականու ըստ յատերթաբար հընչընմէն:
Որ կերպարան և կերիս հօր,
Աստեւու ըստան լէր ծառայի կերպ ՚ի կուսէն,
Որ է ՚ի յալուս վաստաց անպէս վերնորոյն,
՚ի յարըն կըտանի և ՚ի մըսուր յանընիւ ըստմէալ:
Զ ՚ի կուսէն մարմարաց բանն,
Եկայս ժողովուրդ ըստ հովիւսն ըստիւնեանեացու,
Ե- ըստ մագուց երգ միշտական գետըն:

- Ը նոր երշտային — պարսկ երգեցաւք — փառաւք՝ 'ի բարյունս — Ասպուծոյ:
տ. ծառագոյլ — և էնդրաբան — էնթելեւան հօր բանը Ասպուծ,
50. Զանդ բարյունս — նէմէ ասելով — փառաւք՝ 'ի բարյունս — Ասպուծոյ:
Որ մեայար — 'ի մարմին — ասմասապաղէ — ճշմարիտ Ասպուծ.
Որ սահիծոյ — ըստ բարյուն — շրտապալպարտիւն — ժրիստոս Ասպուծ:
մ. Սուրբ — պԱսպուծածածինն
Օքնութեամբ — մէծացուցանէն:
Աւետուր — հրեշտակն աւետուրունն
Հնջնեալ Փրիչն — 'ի սրբոյ իւսունն:
Ասէ — սւրբին լէ՛ր — լէ՛րիւսոյ,
58. Քանչը — պէր պէրսոյ — և ըստ ժէն:
- Ահաւասիկ այս քերթուածքի տողերը շարականի ճիշտ հետևողութեամբը դասաւորելով նկատում ենք, որ համաշխափ անհամաշխափ, կանոնաւոր անկանոն, և դոցա խառն տողակարգը անխտիր իրարու յաջորդում են: Եւ թէ անցնենք միւս բազմաթիւ շարականներին, նոյս մէջ ևս փոքր ինչ տարբերութեամբ նոյն անհամաշխափ քերթուածքի ճիշտ պիտի նկատենք: Սակայն անհամաշխափ քերթութեան այդ փոխակերպութիւնները հնումը խորհրդով էր կատարվում, ինչպէս որ մինչև այժմ նկատեցինք շատ տողերի և անդամների պարմանաւոր դասաւորութիւնները. և այժմ մենք տեսնելով մեր առաջ բերած այս օրինակի զանազան փոփոխութիւնները և հետազօտելով՝ նորա մի քանի նշաններից այն եղակացութեան ենք հանդչում, որ քերթողը այս քերթուածքի մէջ տողերը և անդամները շատ տեղ գիտակցաբար է դասաւորում. Ահա մի քանի ապացոյց:

1—12. տողերը համաշխափ են և քառանդամ, որոց անդամները իւրաքանչիւր տողի մէջ բաղկանում են 4, 3, 4 և 3 վանգերով: Սակայն նկատելով 3, 5 և 7 տողերի մէջ համաշխափութիւններից զարտուղութիւնները, մեր մէջ երկբայանք է ծնանում, թէ արդեօք, քերթողը չիմացաւ, և կամ չըկարողացաւ առանց որևէց զարտուղութեան 12, տող համա-

չափ քերթուածք գրել, թէ գիտութեամբ ներմուծեց այդ զարտուղութիւնները. որ և հետազօտելով նկատում ենք գիտակցաբար կատարուած, օրինակ — Երբորդ տողը „Ծնաւ նոր արքայի՝ 'ի Բեթղեհէմ — քաղաքի՝ թէպէտ և համաշխափ վանդեր ունին, բայց այդ տողը կրծատ թողեց քերթողը յատարար նշան կացուցանելու համար այդ փոքրիկ տողը այն նորածին մանուկին, որ այդ միջոցում գտնվում էր մսուրի մէջ: Կրծատ և երկայն տողերին մի առանձին նշանակութիւն ունենալը այս քերթուածքի մէջ հաստատվում են նաև 23 և 39 տողերով, ինչպէս պիտի տեսնենք ահա: Հինգերորդ տողի մէջ էրինքն և էրիքն հնգավանգանդամը՝ որ պէտքն է եռավանգ լինէր, ունի պատճառ, այստեղ նկատում ենք սղութեան պայմանաւոր կիրառութիւնը որ աջողապէս համեմատութեան է գնում Յիսուսին երկնի և երկը անբաւելի զօրութիւնը նորա խանձարութի մէջ գտնուած ժամանակի հետ „'ի խանձարուը պատեցաւ“: Այսպէս և 7-երորդ տողի մէջ էրինքն ՚ի վերասոր սուլ անգամը յայտարար նշան է այն անօրինակ և եռանդուն ցնծութեանը՝ որ այդ միջոցին կատարվում էր երկնքումը: Ուրեմն պէտքն է համոզուինք, որ բոլորովին համաշխափ են այս տողերը՝ բայց այդ երկու սուլ անդամները գիտակցաբար գործադրուած. և ոչ թէ միայն այստեղ այլև ծննդեան բոլոր շարականների մէջ՝ որոնք Մովսէս Խորենացունն են համարվում, ունին համաշխափ տողեր, ինչպէս չորրորդ աւուր մէծացուցիւն ՚Զքեզ կոյս և մալը“, եօթներորդ աւուր ոշորմեան՝ որ երկանդամ է „Խոնարհեցար 'ի բարձանց“ նոյնպէս և „Ուրանացիւն“ ևալն:

18—30 տողերը անհամաշխափ են և եռանդամ. բայց ինչ է նշանակում արդեօք, այդ բոլոր միակերպ եռանդամ տողերի մէջ միակ 23 տողը, որ քառանդամ է: Այդ նպատակաւ հետազօտելով նկատում ենք որ քերթողը այդ տողի մէջ Յիսուսին հօր ծոցից չմեկնուած ըմբռնելով, նորան հաւա-

սարում է երբորդութեան միւս երկու անձնաւորութեանը՝ հետ, որոյ տողերը ինչպէս նկատում ենք 38 և 40 համարի մէջ, նոյնպէս քառանդամ են Սակայն 3 և 39 և այլ տողերի մէջ քերթողը Յիսուսին ըմբռնելով իբրև նորածին մասուկ, նորա տողերը կրծատ երկանդամ կամ եռանդամ են թողուած:

Տողերի գիտակցաբար դասաւորութեան նշանը՝ յայտնապէս նկատելի են 38, 39 և 40 համարների մէջ, յայտեղ քերթողը կամ ենալով երրորդութիւնը այս ծննդեան միջոցին նկարագրել իւր խորհրդաւոր տողերով, առաջին տողի մէջ հայրը, երկրորդ տողի մէջ որդին նորածին, երրորդ տողի մէջ հոգին սուրբն է ներգալացնում ըստ կարգին: Աստուածութիւնը, անբաւելին երկնի և երկրի, անպարագրելին, տմենուրէքը, ներգալացնում է 38 և 40 տողերով՝ որոց թէ քառանդամ տողի և թէ ստուար անդամների նմանութեամբ ամենակին չկան այս քերթուածքի մէջ: Բայց այս միջոցում նորածին Յիսուսի տողը կրծատ է և մանրիկ անդամներով՝ անեղ—և էից էակ: Նոյնպէս և տարբեր տողակարգ ունի Յիսուսը 23 երտ տողի մէջ, երբ որ ըմբռնում ենք նորան չմեկնուած հօր ծոցից:

Այստեղ արժան է նաև՝ ի նկատի առնուլ բառերի միջաբեկութիւնը, որ ընդհանուր սովորութիւն է դարձած շարականների մէջ, սակայն և այդ ևս ունէր նախնի ժամանակին խորհրդաւոր կիրառութիւն: Այս նկատմամբ 38 տողի մէջ միջաբեկեալ բառն ամենանից, նկատելով տեսնում ենք, որ դորա տառերի նախընթաց կէս բաժինը գտնվում են 23 տողի Ապօֆենէլի, Միշտ, Մէհեցար բառերի մէջ. բայց երկրորդ բաժնի տառերը նից կան 39 տողի անէլու նից բառերի մէջ: Որով կամեցաւ քերթողը իւր համազումը արտայալտել թէ, ինչպէս անէնից, նոյնպէս և Յիսուսը մի անձնաւորութիւն գոլով և միւնոյն ժամանակին թէ անբաժանելի և չմեկնուած էր հօրիցը, և թէ խանձարուրի մէջ պատուած էր իբրև

նորածին մանուկ, որսց ներգայացուցիչքը են 23 և 39 տողերը: Մեր այս կարծիքը կարող էր տարապարման համարուել, եթէ միայն չունենալինք այդ տեսակ բազմաթիւ օրինակներ. ինչպէս արևագալի երգն է, ուր որ բառերը միջաբեկ են լինում այն խորհրդով, որպէս զի սրբոց նահատակների լիշտոտիկը մեզ մտաբերեն, որոնք մարմնով նահատակուած բարի անուն թողեցին այս աշխարհում և հոգւով երկինքը վերացած բարեխօս են լինում առ Աստուած: Ահա նոցա տողերը, որ համաշխանման են:


Ճըդուարուն—Ասուուծոյ—և ժամանակորդուն—Երշնից արհայութեան, Ուր փետուածուն—իւրաշ զանցուարուն—առաջ զանցուարուն ըստ բարութեան, Բարիկուս—աչյէս առ անը—վասն մանէան—Եկէցւուարուն, Նահատակն—արածելին—և պէտցաւուն—իւրէնուարուն Հօրէն, Ուր հնդրու—շայտ ընտ չընսուարուն—արեամբ յերու—'ի մահ կառչին: Բ... Մարտիրոս—շանէնուլին—և օնեան—հոգւայն ճշմարդութեան, Ուր յաշնեւ—յիւ հոգւայն—կարեաց և—յանհութեան: Բ... Գուշելին—աշխարհին—և բաշչանուն—լերնոցըն պէտութեան, Ուր երանու—թեան հասին հասին—հան զամենայն—որդին հարուին: Բ... Կամաւու—պատարագին—հանէուն որիով և հա—տարեալ իմաստութեանին, Ուր փետու—նաև կանին—արբեւ—ընդինին—պայշեցուիչ: Բ...

Այս ամէն տողերի մէջ բոլոր երկու բաժանուած բառերը երկու տեսակ գաղափարի և կամ վիճակի յայտարար նշաններ են հանդիսանում: Զորօրինակ փետուածուն—իւրաց՝ անցաւոր կեանքից գէպ 'ի անանցը փոխադրուիլն է ցուցանում: Միրու—շայտ՝ որ նոքա երկու կերպով մկրտուեցան մէկ անդամ ջրով և միւս անդամ արեամբ իւրեանց: Յաշնեւ—յիւ՝ որ նոքա լալթել են թէ մարմնաւոր կարեացը և թէ հոգեկան ցանկութեանցը: Նոցա Երանու—թեան մասը յոյժ նախանձելի էին թէ այս և թէ միւս աշխարհուամբ: Մանուկ էին հասակով և կա—տարեալ իմաստութեամբ, և կաթի փոխա—նակ

արբին զմալլեցուցիչ գիտիք: Բացի գորանից ամէն տան վերա-
ջումն էլ կրկնվում է բարե—խօսեցէ՛ք, որոյ միջաբեկ լինելովը
կամենում է քերթողը զգալի կացուցանել որ սուրբ նահա-
տակները մարմնով այս աշխարհում աղօթում էին մեզ հա-
մար, և մեր եկեղեցոյ պարծանքն էին, և հոգւով այն աշ-
խարհում պիտի բարեխօս լինին առ Աստուած: Այսպիսի խոր-
հրդաւոր բառերի միջաբեկութիւն կան և ուրիշ տեղեր էլ:
Նարականների տաղաչափական քննութիւնը նաև թելադրում է
մեզ կարծելու, որ բուն հայկական չափը սկզբաննէ համա-
չափ եղանակն էր, սակայն քաջակիրթ քերթողները ժամա-
նակաւ նոցա մէջ իմաստալից տողակարգ, անդամների և տո-
ղերի պայմանաւոր կիրառութիւն, և բառերի խորհրդաւոր
միջաբեկութիւն ներմուծելով կամեցան յայտարար նշաններ
հանդէս հանել զանսազան խորհրդածութեանց, որով և ծնունդ
առին անհամաչափ քերթութիւնները:

Նարականները և առ հասարակ ամեն եկեղեցական երգերը տաղաչափեալ համարելով՝ ըստ ինքեան պիտի հարց ծագէր մեր մէջ, թէ ի՞նչու և սաղմոսները չպիտի քերթուածք համարուին, աւելի այն մասի, որ 'ի հնուստ ամէն երգեր ունէին չափական եղանակ։ Այս կարծեացը պաշտպան են հանդիսանում Հ. Զամչեանը և Զարբանալեանը՝ որ այս վերջինս նաև սաղմոսներից մի քանի տողեր է առաջ բերում երբե տաղաչափութիւն։ Սակայն իմ կարծիքս այն է, նախ՝ որ սաղմոսները երգվում են իրանց մանր տնատութեան շնորհիւ և միայն այնպիսի եղանակաւոր ձայնով՝ որի համար այնքան փոլթ չեն տաղաչափական պայմանները։ Եւ երկրորդ՝ սաղմոսները և օրհնութիւնները թէպէտ քերթողական ոգի ունին, բայց քերթողական չափ չունին, և ոչ էլ նոյն մէջ երեւում են որեկցէ տողերի և անդամների պայմանաւոր կիրառութեան նշաններ։ Եւ երրորդ՝ բաւական չէ միայն եթէ մենք կարողանանք սաղմոսները և կամ այլ արձակ գրուածքներ տողակարգել, մանաւանդ եթէ գործադրելու

լինինք և բառերի միջաբեկութեան սովորութիւնը, այլ հարկ է որ նոցա տողերը ունենալին տաղաչափական ճաշակ, նպատակալարմար տողակարգ և պայմանաւոր կամ խորհրդաւոր կիրառութիւն։ Բայց առանց այդ պայմաններից մէկը կամ միւսը ունենալու ոչ եթէ սաղմոսները միայն, այլ և ամեն խնամքով բայց աննպատակ տողակարգուած քերթուածքները ևս պիտի արձակ շարագիր համարուին։



շմայք պդման միջնորդության վեղմանակաց պատ
զարժիքը և է նացքանձար վեստի արդյախախի մասն ։
առ և պահանջ պահանջամ մազարեցու գոյացեց ու մասնակցաւ
անոնք ներ մատի օրուն զայտոց մի բժիշու շին այնք
պարփակ չեն պահանջամ պայտ և ու ամայակաց ու ճառաց
մազի պահանջ արդյախիք զայտ բայ լուսավեցու ներ ու
բայ ու է մասնի արդյաք ։ Խորհանապար մայն այս ամայակաց
պայտ մազի դաստի ամայտ ու ու ու ամայտ այն այս այս այս
խորհանապար մայն ամայտ ու ու ու ամայտ այն այս այս այս

108. *Constitutio ad regiam* 3

ՆԱՐԵԿԱՑՈՅՑ

ԱՆՀԱՄԱՉԱՓ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԸ:

Փացի շարականներից անհամաչափ քերթութիւնները իրանց
Չամեն փոխակերպութեամբ գործադրում է և Գրիգոր
Նարեկացին իւր աղօթագրքի, ներբողների, գանձերի և տա-
ղերի մէջ, որոնցից մի քանիսը միայն մինչև ալժմ համա-
րուած են տաղաչափութիւն, բայց մնացեալները՝ ոչ։ Սակայն
ես ալժմ Նարեկացոյ այդ բոլոր երկասիրութիւնները իբրև
տաղաչափութիւն յայտարարելով, հարկաւ պէտքն է որ ընդ-
դիմադրութիւն կրեմ, և իմ այս առարկութեանը իբրև ապա-
ցոյց քերթողական զգալի փաստերը անբաւական համարելով՝
թերես շոշափական ապացոյցների ¹⁾ պահանջը ևս զգանքը։
Այսու ամենայնիւ հարկ է մեզ մեր իմացածը պարզօրէն առաջի
առնել, և ապացուցանել ըստ կարեաց, որ Նարեկեան երկերը
քերթուածք են, և արժանի են ուսումնասիրութեան։

¹⁾ Այսպահ զգալի պահանջն է Նկատում իմ իմքնեաղաւատ Թերզեանցի վերջին խօսքի մէջ, որ ասում է «Նարեկացւոյ... ամելող գործը թէ տաղաւախեալ է, ապացոյցի կարօտ խնդիր մը է»: Բայց թէ ի՞նչ են իմ առաջ թերած ապացոյցները, և թէ ի՞նչ արժանիք ունին նորա, նոյնպէս քննութեան կարօտ խնդիրներ պէտքն է համարուին:

Նարեկացոյ ամբողջ աղօթական մատեանը, ներքողները, գանձերը և տաղերը քերթուածք եմ համարում ես, և իմ ասլացոյցներս սոքա են: Նախ՝ որ նոցա ոճը մեծ տարեերութիւն ունի, և ամէն փոքր ՚ի շատէ հայագէտ անձն կարող է խորի դնել նորա արձակ և քերթուածոյ երկասիրութեանց մէջ: Նարեկացին որ քաջ հայկաբան է, և մեր բոլոր մատենագրների մէջ առաջնակարգ տեղն ունի, նա՝ պէտքն է մենք աներկրայ ենթագրենք, որ գիտութեամբ էր գործադրում իւր քերթուածքների մէջ այն այլատարազ և խորթ ոճը՝ որին ոմանք զարմացմամբ և ոմանք դժկամակութեամբ են վերաբերվում մինչև ցայսօր. բայց նոյն Նարեկացին ակներև նկատում ենք, որ խրատական և երգոց երգոյն մեկնողական արձակ գրուածքների մէջ բոլորովին ընդել և սահուն հայկաբանութեամբ է վարվում, որ ոչինչ տարեերութիւն չունի թարգմանչաց ոսկեղենիկ և պարզ բարբառից: Ուրեմն պէտքն է եղակացնել, որ Նարեկացին գիտակցաբար էր գործ դնում իւր վսեմ և գերապանծ ոճը իւր քերթուածների մէջ, որ այդպիսի խտրութիւնը առհասարակ ընդունուած է մի քանի հին և նոր քերթողների մէջ, ինչպէս որ և նոյն իսկ Բագրատունին՝ որ իւր արձակ գրուածքների մէջ քաջակիրթ և ախորժ հայկաբան է, բայց իւր քերթուածքների վերայ մի առանձին ջանք է գործ դնում, որ լինէին մանուածապատ և գերապանծ:

Երեսութ՝ Նարեկացոյ ոճը մեր մէջ կասկած յարուցանելով՝ թէ մի գուցէ նոքա քերթուածներ են, և այդ դիտմամբ հետազօտելով նորա քերթողական երկասիրութիւնները՝ իսկոյն մեր աչքին է կպչում մի յայտնի տաղաչափական նշան, այն է հնդավանդ անդամների այնքան չափազանց առատութիւնը, որ նոցա նմանութեամբ անկարելի է դանել մի այլ արձակ գրուածքի մէջ։ Նաև երբեմն մենք ստիպուած ենք լինում նորա անդամները և տողերը տրոհելով ընթեռնուլ, որովհետեւ բացի հնդավանդ անդամների յորդութիւնից, նորա մէջ

կան ստէպլ կըկնութիւնք զանազան տողակարգութեամբ, և երբեմն հանդիպում ենք այնպիսի հատուածների՝ որոց քերթուածքը գրէթէ մերձենում են համաչափութեան; Այսպիսի տաղաչափական նշանները բաւական են մեզ համոզելու, որ Նարեկացոյ աղօթքները, ներբողները և գանձերը ևս տաղաչափութիւնք են, ինչպէս որ սովորաբար տաղաչափութիւնք են համարվում սորա տաղերը ծննդեան „Աչքն ծով՝ի ծով“ Քառասունից, Համբարչյան և Հռիւոյ գաղտնական ևայլն: Եւ հետաքըրքը բարական է իմանալ թէ Նարեկացոյ քննաբանները, որոնք նորա այս ինչ տաղը և կամ այն ինչ հատուածը տաղաչափութիւն համարելով տողակարգում են, բնչու պիտի ժիտեն նորա միւս երկերի տաղաչափութիւնը, երբ որ ակընյալտնի նկատում ենք նոցա մէջ այնպիսի տաղաչափական հաւաստիք, որոնք աւելի ևս աներկբայելի են կացուցանում նոցա ոտքերը: Այն անտեղի համարում՝ որ ունին ոմանք մեր հին քերթողների վերաբերմամբ, թէ նոքա փոխ մի քանի տող ոտանաւոր և յետոյ մի քանի տող արձակ գրելով էին շարունակում իրանց քերթուածները, ևս այդպիսի բասրանքները ինչպէս շարականների նոյնպէս և Նարեկացոյ վերայ շինել անիրաւացի եմ համարում, աւելի այն մասին որ Նարեկան քերթողի մէջ նկատում ենք գերօրինակ հմտութիւն և ճշմարիտ քերթողական ոգի, և բնչու կարելի է մեղադիր լինել նորան մի այնպիսի թերութեան մէջ, որ նորավարժներն անգամ նոյնը չեն համաձայնուիլ գործելու: Կարելի է կարծում են թէ հին քերթողները մեր այժմեան աշուղների պէս վէպեր էին պատմում երբեմն արձակ և երբեմն տաղաչափեալ, սակայն Աշուղների վէպերն ևս այդքան թերամտութեամբ չեն յօրինվում, որովհետև նոքա վիպական-պատմական մասը միշտ արձակ են պատմում, բայց երգերը միշտ տաղաչափուած են և յարմարուած երաժշտական եղանակի, և երգվում են բարձր ձայնով, որոնք և յայտնապէս տարբերվում են արձակ պատմութիւններից:

Երրրորդ՝ Նարեկեան քերթողը իւր քերթուածների անուանակոչութեամբը ևս կամեցաւ յալտ առնել՝ որ իւր յօրինուածքը տաղաչափութիւնք են. որովհետև նորա քերթուածների վերնագրերը շատ տեղ երգ գրիգորի՝ են բաղհիւսում, և ամբողջ աղօթագիրքը նա անուանում է „մատեան ողբերգական“ որ նշանակում է այնպիսի երգ՝ որ ողբական է: Նարեկացոյ քերթուածքների թէ անուանակոչութեան և թէ յօրինուածութեան բնաւորութիւնից կարելի է մակաբերել, որ քերթողը իւր մանր երգերը որևէ երաժշտական եղանակի էր յարմարում, բայց աղօթքները հաւանական է թէ ընթերցանվում էին որևէ եղանակաւոր ձայնիւ այնքան աղատութեամբ, ինչքան որ նոցա աղօթական և տաղաչափական աղատ պայմանները կըներժին: Եւ եթէ փոքր ի շատէ համոզեցուցիչ են մեր փաստերը, որ առաջ բերած ունինք մինչև ալժմ, թէ երգերը բացառապէս տաղաչափվում էին հնումը մէջ, ալդ դիտմամբ ևս պիտի տաղաչափեալ համարուին և Նարեկեան այն ամեն քերթուածքները որոնք երգ են անուանվում և ունին տաղաչափական նշաններ: Զարրորդ՝ մեր վերոլիշտատակեալ փաստերը կարող էին լինել անհաստատ և անհաւանական, եթէ որ չկարողանալինք Նարեկեան քերթուածների նոյն իսկ տողերը և անդամները և նոցա դասաւորութեան կարգը որոշել: Այսպիսի խուզարկութեան ձեռնամուխ լինելով այստեղ, ոչ եթէ Նարեկեան բոլոր քերթուածները մի առ մի պիտի զննութեան առնունք, որն մեզ համար անկարելի է, այլ պիտի ջանանք միայն հաստատուն տաղաչափական նշաններ որոնել. որով և մեր ընդհանուր հետեւութիւնը կարող է լինել վաւերական: Այս մասին մենք ընտրում ենք Նարեկացոյ աղօթագիրքը՝ որն նորա քերթուածքների պարագլուխը և նշանաւորն է, և որոյ քերթողական սկզբնաւորութիւնը և տողակարգը անվիճելի կացուցանելով՝ հետեւալ աղօթական գլխակարգութիւնքը ևս պիտի նոյն եղանակաւ տաղաչափակեալ համարել:

Նարեկեան աղօթական ողբերգութեան սկզբում մենք գտնում ենք մի նախերգ „Դրութիւնք լոգնաթախանձ“ վերնագրով, որի կազմութիւնը այնքան օտարախորթէ և մանուածապատ, որ ամեն ոք ակամայ պիտի հրաժեշտ տար նորա քննութիւնից, եթէ միայն մի քերթողական հանգույց վարանման տեղիք տալով չկասեցնէր մեզ: Այդ հանգույցը մատեան ողբերգական ասացեալ՝ բառերն են, որ մեր մէջ հատաքրքրութիւն է շարժում հետազոտելու, թէ ինչ նպատակաւ արգեօք քերթողը այդ սխալը գործեց, որովհետև ոչ եթէ հապեան առաջարկ, այլ հոգեան գրեալ էր պատշաճում, ուրեմն կամ յայտնի վրիպակ կայ ալստեղ և կամ մի թագուն խորհուրդ: Եւ արդարեւ այդ խորհրդաւոր վրիպակը առաջնորդ առնելով հնարաւոր է լինում մեզ այդ նախերգը ընթեռնուլ և 'ի ներքուստ 'ի վեր, որով և բացգում է մեր առաջին նարեկացոյ ճարպիկ և քերթողական գծագրութիւնը և նորա քերթուածքի գիտակցաբար տողակարգութիւնը:

Տողակարգելով այդ նախերգը՝ նախ և առաջ նկատելի են մեզ խորհրդաւոր պատկերագրութիւն, որովհետև այդ նախերգը տողակարգելով անփոփխ վերուստ 'ի վայր՝ մեր առաջին խաչափայտն է գծագրվում, բայց ներքուստ 'ի վեր տողակարգութեամբ խաչեցեալ Յիսուսը: Բ. նկատելի են խորհրդաւոր տողակարգ և նոցա պայմանաւոր կիրառութիւնքը, որովհետև այդ նախերգի տողերը թուով հաւասար են քերթողի անուանական տառերի թուոյն հետ՝ „Դրիգորի նարեկալ վանից վանականի“: Եւ բաց 'ի դորանից այդ չորս անուանական բառերի թուով նկատում ենք որ քերթուածը ևս չորս մասի է բաժանուած, և որոց իւրաքանչիւր մասը որևէ ից լայտարար նշաններով լարաբերութիւն ունին իրանց հանգիպահայեաց անուանական բառերի հետ: Գ. Այդ փոքրիկ քերթողական հատուածի մէջ նկատում ենք գործադրուած անհամաչափ քերթութեան ամեն տեսակ տողերը և անդամները, թէպէտ և ոչ այնքան խառն դասաւորուած, ինչպէս կան

նորա միւս քերթուածներում: Ուրեմն այդ նախերգը եթէ մեր երևակայութեան մէջ վերացականապէս գրոշմում է խաչն ու խաչեցեալը, միւս կողմից էլ մի քերթողական նախագիծ է մեզ համար հանդիսանում, որով և ուսանում ենք, որ անհամաչափ քերթութեանց մէջ անդամներ կարող են մուտքործել մէկից մինչև վեց վանգերով, և նոցա տողերը կարող են լինել կամ միանդամ, կամ եռանդամ և կամ քառանդամ գասաւորութեամբ:

Այժմ տողակարգենք Նարեկացոյ աղօթական նախերգը երկու պատկերի մէջ, մէկն վերուստ 'ի վայր, և միւսն ներքուստ 'ի վեր տողակարգութեամբ. և ըստ իս անվիճելի է այս քերթուածքի այսպիսի տողակարգը, որովհետև ոչ եթէ միայն նոցա բնական առողանութիւնը, այլև անուանական տառերի թիւը և իրարու մէջ ունեցած պայմանաւոր յարակցութիւնը նոյնն են հաստատում, ինչպէս որ պիտի բացատրենք ահա:

Ահաւասիկ այս հանդիպահայեաց քերթողական պատկերի մէջ, որ խաչափայտն է ներկայացնում, ընթեռնլով „ասացեալ մատեան ողբերգական“, նկատում ենք որ չեն յարմարվում, ինչպէս ասացինք. և զգալով որ անդրադարձ ընթերցանութեան բանալին այստեղ է գտանփում, սկիզբն ենք առնում „մատեան ողբերգական“ բառերից, որովհետեւ դոքա են որ ըմբոստ են յարաբերութեամբ տառայէտ միակ դերբայի հետ: Սկսանելով „մատեան ողբերգական“ և դորա յաջորդող անուանական բառերն „Գրիգորի Նարեկայ Վանից Վանականի“ տարածանելով ամբողջ քերթուածքի վերայ, նկատում ենք որ ոչ եթէ միայն քերթուածքի իւրաքանչիւր տողերը հաւասար են այդ անուանական տառերի թուոյն հետ, այլև այդ քերթուածքը չորս մասի բաժանած՝ նորա ամեն մի մասը որևիցէ խորհրդաւոր կապ ունին հաստատած իրանց համապատասխանող անուանական բառերի հետ: Ահաւասիկ և այդ անդրադարձ տողակարգը՝ որոյ սկիզբն է հարեւան ոշնչերդական, բայց յաջորդ տողերը հետեւում են իրանց անուանական բառերին՝ որ պիտի նախ Գրիգորի յետոյ նարեւոյ յետոյ Վանից հուսկ յետոյ Վանականի մասերը հետզհետէ տողակարգել:

յարդարելուց յետոյ ապա դառնում է բուն աղօթագրքին, և մեզ հարկ է այստեղ նոյն իսկ առաջին ողբերգի մէջ որոնել տաղաչափական նշաններ՝ եթէ որ նորա այս գիրքը ամբողջապէս քերթուածք ենք համարում։ Եւ արդարեւ այս առաջին գլուխը համեմատած դրքի ամբողջութեանը հետ, աւելի ևս արձակ շարագրութեան նմանութիւն ունի, որովհետեւ միւս գլխների մէջ քերթողական տողակարգը շատ անգամ որոշուած են կրկնութեան և կամ որևէցէ նմանաձայնութեան միջոցով, բայց աղօթագրքի սկզբնաւորութիւնը այդքան բացորոշ նշան չունի. միայն թէ մենք նկատում ենք նորա մէջ մի գիտակցաբար ներմուծուած վրիպակ՝ որ է գերբայն առաջնորդ, որն ակտքն է, բայց լինէր, ինչպէս շարագրութեան կարգն է ցուցանում։ Եւ այդ քերթողական վրիպակը հետազոտելով պարզվում է նարեկեան քերթողի ճարտարարուեստ և խորհրդաւոր քերթուածքը իւր այդ աղօթական սկզբնաւորութեան մէջ։ Նարեկացին Խաչն ու Խաչեցեալը իւր երեակալութեան մէջ քերթողապէս արձանացնելուց, յետոյ և երախտապարտ համարելով իւր մարդկային չնչին գոյութիւնը աստուածալին ալդ մեծ զոհաբերութեան հանդէպ, իւր աղօթքների այս առաջին գլխի մէջ ուխտում է անձնանուէր լինել Աստուածոյն։ Եւ ինչպէս որ Յիսուսը Խաչին վերայ պատարագուեց մեզ համար, ինքն էլ Աստուծոյ համար իւր անձը իմացականապէս ողջակեզ է մատուցանում, որոյ խարոյէր իւր անձին թախծութեան հուրն է, զոհաբերութիւնը իւր մտաւոր տուչըրման ճենճերոյ պտուղն է, (որ է իւր աղօթագրիքը), և բուրգառաւ խունկի մատուցարանը իւր վերապատուող կամքն է։ Որ և այս մասին խնդրում է Աստուածանից որ իւր այս աննիւթական ողջակեզը աւելի ևս ընդունելի լինէր քան ամեն նիւթական գաշը հաստատուն լինէր Աստուծոյ հետ, Աղօթագրքի այս առաջին գլխի մէջ տարածանում է քերթուածքի վերայ իւր անուանական տառերը այսպիսի բովանդակութեամբ, “Գրիգորի պատարագս այս”։ Ահաւասիկ ալդ քերթուածքի տողակարգը։

ԲԱՆ ԱՐԱՋԻՆ		1
Դ	Ի ԽՈՐԾ ՄՐՏԻՑ ԽՕՄՔ ԸՆԴ Ա.ՍՈՒԵՇՈՅ	2
Դ	Առաջարկություն և դիմում մշտաբային պահանջման դեմք առաջ գործը, պահանջման պահանջման դեմք, Առաջարկ պահանջման դեմք	3
Դ	Հեծութեան սպառքական պահանջման դեմք	4
Դ	Պահանջման դեմք Ուժու ուղացիկ պահանջման դեմք առաջ գործը	5
Դ	Քեզ—Զերպայեմ Տեսողութ գողացնեաց, որի (առաջ գործը) համար պահանջման դեմք Առաջարկ պահանջման դեմք	6
Ե	Եւ հապուցեալ երեալ՝ ի հոր Առաջարկ պահանջման առջին պահանջման դեմք	7
Ե	Բայպուշ—ըշցից ճշճճերոց—սահանեալ հայոց՝ պահանջման դեմք	8
(Է)	Բուրժաւու իտոյոց—սահանեալ (ի) առ չեզ պահանջման դեմք	9
Դ	Այլ հապուցեացից—հայեացին, գլուխ'ծ,	10
Հ	Քան՝ ի պատարացն—բոշորդապուշ	11
Է	Մապուցեալ—ծիսյոն բարդութեան.	12
Տ	Բնիշեալ—ըշտիտահանեաց	13
Է	Բնահյու յօդուած,	14
Դ	Քեզ՝ ի հաճալեկան,	15
Է	Եւ մէ՝ ի բարեւութեան:	16
Դ	Ելոյէ՝ ի խորոց սառիկ—ըզ գայութեանց խորհը—դանիք սէնեէն:	17
=	Վաշշաշահին ժամանել առ չեզ—	18
Է	(Կամուրդական նուելը—բանական պահին)	19
Ի	Ու ջանին եալ—ուշութեային ճարպոց	20
=	Ու յիսն է—պարարբութեան:	21

Հարկ է՝ ի նկատի առնուլ այս պատկերի մէջ քերթողական գծագրութեան մեծ ճարտարութիւնը՝ որի նմանութեամբ շատ քիչերն ենք նկատում։ Նայիր ահա 3—16. տողերը, որ աղօթարար մարդկալին պատկեր է ներգալացնում ոտքի վերալ կանգուն, որոյ գլուխը, մարմինը, զգեստը նշմարելի են և երկու ձեռքերը երկու կողմից կարկառած 7-րդ տողի մէջ՝ բազկատարած աղօթում է։ Աւելի որոշակի գծագրուած են ոտքերը, որոյ յօդուածներից յետոյ (բանից յօդուած) նկատում ենք 15 և 16 տողերի մէջ իրարու մօտ սեղմուած երկու ոտքերը՝ ինչպէս նոցա նմանաձայնութիւնը և ձայնայանգն են ցուցանում։ Ոտքերի այսպիսի գիտակցար գծագրութիւնը նկատեցինք և նախընթաց օրինակի չառայ, ինչպէս, տողերի մէջ, ուր որ ամփոփուած էին Յիսուսի բևեռած ոտքերը։ Այս աղօթարարը նարեկացին ինքն է, այստեղ քերթողը կամենում է իւր կուսակրօնութեան ուխտը գծագրութեամբ ևս վաւերացնել։ Տես ահա, որ այսպիսի բազկատարած աղօթարարութեան միջոցին աւանդում է նա իւր հոգին, որոյ յարտարար նշանը գտնում ենք 9-որդ տողի մէջ՝ որն ուղիղ մարդկալին սիրտն է ներգալացնում։ Այստեղ Առաջեւ գերբալի վերալ անհրաժեշտ հարկ կայ բայանալու, այս պահանջը լցուցանելու համար նորա (ի). տառը (որ հոգւոյ ներգալացուցիչն է), դուրս ելանելով՝ նորա փոխարէն հանդիպահայեաց Գրիգորի անուանական բառից (ի) տառը պիտի փոխ առնու, որով և 9-որդ տողը առանց էլ վանգի պիտի ընթեռնունք այսպէս—

Բարձաւառ կամայ—առաջի տա ժե՞ւ։

Սակայն անուանական բառերն էլ ջլատուած չեն մնում, որովհետեւ 'Ի նախդիրը 'ի վերուստ ընդունելով՝ որն վերջի յարութեան նշանն է, պիտի ընթեռնունք։

'Ի Գրիգորէ պատարացո այս։

Այսպիսի գծագրութեամբ մեզ զգալի է լինում նարեկացոյ

ուխտը, որ ամեն տեսակ զրկանքներ կըելով, և միշտ այսպիսի ջերմեռանդ աղօթարարութեամբ պիտի աւանդէ իւր հոգին՝ նուիրելով իւր անձը Աստուծոյն մինչև ՚ի վախճան կենաց։

Աւելի ուշագրութեան արժանի են այս քերթուածքի մէջ և այն յայտարար նշանները՝ որով արտայալտում է թէ ինչ են դառնում իրանից յետոյ իւր հոգին և մարմինը։ Իւր հոգին աւանդելուց յետոյ նորա մարմինը նկատում եմք տարածուած գետնի վերալ 17-րդ տողի մէջ, այստեղ հոգոյ բացակալութիւնը արտայուտուած է խորհրդ—գակիր բառի միջաբեկութեամբ, և ել մարմնոյ ներգալացուցիչը նկատում ենք այս տողի սկզբում ելցէ բայի մէջ։ Սակայն նկատում ենք գերեզմանը ևս փորուած վերջին երեք փակագծեալ տողերի մէջ, այստեղ իջեցրուած է իւր պատարագեալ մարմինը՝ որ ճարպոյ պարարտութեան գորութեամբ ողջակիդեալ բանական զոհի նուերն է, բայց հոգին ոչ այնքան պարզ աչօք, այլ միայն մտքով ենք իմաստում որ համբարձուեց երկինքը։ Եւ այս փոխադրութիւնը զգալի է լինում մեզ 17. և 2. տողերի իրարու նմանութեամբ։ որպէսէն 17-րդ ամբողջ տողը նոյն իմաստն ունի ինչ որ 2-րդ տողի նախընթաց անդամն ՚ի խորոց արտից։ Եւ այդ 2-րդ տողը, ինչպէս պիտի նկատենք, վերին հոգեկան կայարանն է ներգալացնում, ուր որ պիտի փոխադրուին հոգիքը։ Այս երկրորդ կայարանը փոխադրուած հոգին (ի) տառի ձևակերպութեամբ նկատում ենք կըկին վերագարձած Գրիգորի մօտ (՚Ի Գրիգորէ պատարացս այս) որն պէտքն է տեղի ունենայ վերջին յարութեան օրը. և այս մասին էլ այս աղօթական քերթուածքի մնացեալ բոլոր տողերը վերջին դատաստանի համար են ակնարկում այսպիսի բովանդակութեամբ։

Ե—՚ի բնելու—իմ ընդ ժե՞ւ դադ—խառնեալ աղերսի—հըց՛ր,
Մէ իմրև—ընդհանուրութիւն չեացոյ—ամբարդաւուն Յահովու,
Բար բաշտեցոյ—Եսուիոյ—և զանիրաւութիւնն Բաբելոն։

Տաղակալէ քեզ—Երևացի։
Զոր տուակ—Եօլանտանէրորդի—Երիբորդի—սաղմովն աղբէ։
Այլ ի՞ր շը բորբուլ—խոռոշին համոյական—՚ի խորոնին—Սեղմայ
Զոր Դաւեհելը—հանգնեալ—նորոգեաց
Տաղակալէին—հանգըստեան—՚ի գերութեանին—ուրբէւյ,
Որ ՚ի շերսպին գիւտ—իրաւուեալս հոգւոյ—սատին,
Էնդունէլի—համաց տու շէի։

Ալսպէս ալս առաջին ողբերգը մինչև վերջը ահաւոր դատաստանի համար է խորհրդածում, և այժմէն ծնանում է քերթողի մէջ մարդու յարուց նուազնէն։ Եւ ոչ եթէ միայն ալս, ալլ և բոլոր աղօթագիրքը հաւաստեաւ պիտի կարծել, որ խորհրդաւոր տողակարդ ունին, և որոյ վերալ մեծ աշխատութիւն գործ գրաւ քերթողը նուիրական տքնութեամբ։

Վեցերորդ՝ իւրաքանչիւր աղօթական գլխի համար ևս քերթողը մեզ նախազգուշութիւն է տալիս, որ նոքա քերթուածք են, համաչափ վերնագիր յօրինելով։ Արդէն մեր ասածներից պիտի եզրակացնենք, որ աղօթագրքի իւրաքանչիւր գլխում եղած վերնագրերը երկնքի յարտարար նշաններն են, որին և գծագրեալ աղօթարարը ուղղած լինելով իւր գէմքը աղօթում էր. այդ վերնագիրը երկրորդ գլխից սկսած քառատող քերթուածքով է կազմվում երկանդամ տողերով և հնգավանդ անդամներով, որոնք գրէթէ համաչափութեան մերձենում են։ Ահաւասիկ և այդ տողերը։

¹⁾ Բան ի՞րորդ—Շերսպին յաւելուած Կըրէն Հէծուեկան—Շորին հըսկողէ Աս նոյն աշերս—հաշմանաց բանի։ ՚Ի խորոց սրբից—խօսք շնոր Ասպաւծոյ։

¹⁾ Այս առաջին տողի նախընթաց անդամը պէաքն է լրութիւն ստանայ ամէն մի զիտում միայն թուահամորի փոփոխութիւն կրելով և կրկնելով բան ի՞րորդ, բան շերսպէ, ևս նոյն աշերս—հաշմանաց բանի։

Խորհրդաւոր տողակարգը այս քառեակ տողերի մէջ այն է, որ քերթողը կամենում է սորանով երկինքը ներգայացնել։ Իւր նախերգի մէջ խաչեցեալ Յիսուսը՝ նկատում ենք առաջին գլխի մէջ իբրև բան Ասպաւծ յարուցեալ, բայց երկրորդ գլխից յետոյ իբրև համբարձեալ իւր անքաժանելի երրորդութեամբը գտնվում է այս քերթուածքի վերևում, որն երկնքի վերին աստուածալին կայարանն է նշանակում։ Բայց վերջին տողը այստեղ երկնքի ցածը կալարանն է (ի խորոց սրտից), ուր տեղ հաւաքվում են հոգիքը մինչև վերջին դաստաստանը։ Նարեկացոյ այս տողերին մեր այսպիսի բացատրութիւնը իբրև ապացոյց կարող են լինել պատարագի քառատող երգերը, որոնք ուղղուած են հօր, որդւոյ և հոգւոյն սրբոյ, ուր որ վերջին չորրորդ տողերը միշտ վերաբերում են մեզ երկրաւորացս, և այնտեղ մասնաւորապէս խնդրում է Աստուածանից, որ հանգուցանէ մեր ննջեցելոց հոգիքը։ Միւնոյն այս գաղափարով էլ նարեկացին է վարվում, և իւր հոգւոյ կայարանը երևակալում է չորրորդ տողի մէջ՝ որտեղից (՚Ի) հոգեկան մասնիկ՝ Դրիգորը ընդունելով պիտի յարութիւն առնէ վերջին դատաստանի օրը։ Ահաւասիկ իւրաքանչիւր աղօթող գէպ ՚ի այս երկնակամարը պիտի վերառաքէ իւր հեծութիւնները, աղերսները և մաղթանքները, ինչպէս որ ընթեռնում ենք վերոյգրեալ քառատող քերթուածքի մէջ։

Եթէ կարողացի զգալի կացուցանել նարեկեան քերթողի մեծ շարչարանքը և մտատանջութիւնը որ կրել է նա իւր խորհրդաւոր քերթուածքների պատճառաւ, և կամ եթէ շօշափելի է մեզ արդէն նորա ինքնայօմար խաչելութեան կողը՝ որ պարզ աչօք նկատեցինք նախերգի և աղօթական սկզբնաւորութեան այն նրբամիտ տողագասութիւնների մէջ, այդքանեաւը պիտի բաւականանանք արգէն, որովհետեւ գրէթէ ստիպուած ես շատ անգամ խորամուխ եղալ նախնեաց տաղաչափական գաղտնիքը բացատրելու բաղձանքով՝ հետազոտել նաև նոյն կրօնական գաղափարները՝ որոնք սուլբը հարց մեկնողանան գրքերի վերա-

բերեալ գործեր էին: Սակայն հարկ է այստեղ իբրև է: Առաջ ապացուց առաջ բերել նարեկեան աղօթագրքից զանազան տողադասութեանց մի քանի օրինակներ ևս առանց հպելու նոցա խորհրդաւոր կազմութեանը, միայն տողակարգելով բնական առողջանութեան հետևողութեամբ: Եւ այս մասին հարկ է նախապէս իմանալ, որ նարեկացին իւր քերթուածքները զգալի կացուցանելու համար յաճախ դիմում է իւր սովորական կրկնութեան ոճոյն, որոց մէջ և գործադրում է զանազան քերթողական տողակարգներ, բայց առանց կրկնութեան նորա քերթուածքները միշտ խառն տողակարգ ունին: Եւ ահաւասիկ նորա աղօթագրքից այս մի քանի օրինակները:

Միանդամ տողակարգի օրինակ գլ. Գ.

Հաստիչ հոգւոյ հոյ,
Օպոր մեռալեռանց ան,
Անէրիքոյ, խոսութիւ,
Ծածիրիլ շանէալիկ,
Զգեստ անէստրոյ,
Օլոյ բուշան,
Զարդ գտանց,
Զեւսն անէալուս,

Երկանդամ տողակարգ գլ. 1.

Եռանդամ տողակարգ. գլ. ԻԶ. և ԻԱ

Անբարելու «Հաղպետը»՝ ի պահեստ — դաստիարակության արգելանքի,
Հեծունուն և զարգացման շարունակության բանալիքի,
Անսպառության դաշտավայրը՝ անլուղակը՝ համ ողբոյթի,
Այլ յեղանակը՝ ինչ ոչ բարեխանուց ասպառության հանդեպի,
Փոխարքեցին սովորեցին բարբառով՝ ինձ հաջթելի,
Կարգարկեցի շրջաբնիքությանը՝ ի նոյն պարագանի,
Անհատապես մեր կորպորատաժան՝ երջեակ պահանջելիք և նայուն
Ու ոչ՝ ի հարդիանէ մշակու — և ոչ շըլջայուտ,
Ու ոչ ուսուրացյաւ — և ոչ ամաչեացու...
Ու ոչ անհամար — ի բարբառությանէ — և ոչ ընդունակությաւ,
Ու ոչ կորպորատաժան՝ մշակութեան — և ոչ աշխատանքու,
Ու ոչ հաղպետը — ի շնորհէ գալաքու — և ոչ ոչ բայց... և այլուն

Քառանդամ տողակարգ. զլ. ԺԲ. ԻԲ. և ԻԵ

Համաշխանման տողեր գլ. Գ.

Խառն տողակարգ. գլ. ԺԵ

Եւ արդ ըստ ակնառութելուն — սասարչառիկ Տաղմայն
Բորբոքութեամբ — ճագարոյ վազառն գուռ — և էս պաշտպահ,
Տէր եւեւ ի մին — ի տրու ևս շիս պահեւ:
Ըստ աշխատաց — ըստ եւշ եւշ — իշշառն գիշերն — ի տարիառիան
Սկզ իւժ իւժ:

ԱՀ ՊՐԵՒ,
ԱՇԽԱՏՈՒՄ ՊԱՍԼՒ,

Այլ ծըստանու — էիր Սապոնցա — բատակել

በኢትዮጵያ መመሪያዎች ክርክሩ

Ու վարդապետություն է—պատիւ հարծողական—ու իսկ ու գիտելու

Սակայն այս պատճենը առաջ է գալիք ու առաջ է գալիք այս պատճենը:

Ոչ չետինը՝ մեայն չեմ մը — հպատակութեան

ՈՂ Հարեգութեալլ—Սապուած Աբքաւոյ

Այս էլ բայց են—գուշի մեջութեան—մէծաւ ունիս

Զօրեւ չո բանիր — աս ի՞մ բժշկութեան — ... ևայլ

Page 46 of 51

թեանց անդամները և տողերը, և կամ թէ այն ո՞ր հատուած-ներն են Նարեկեան քերթուածքների մէջ, որոց մի քանի տողը քերթուածք է, մնացեալը արձակ շարագիր, և կամ թէ ի՞նչ փաստերի վերայ հիմնաւորսւած ենթադրում են որ մեր նախնիքը փոխ առ փոխ մի քանի տող ոտանաւոր և մի քանի տող արձակ շարագրելով էին շարունակում իրանց երկասի-րութիւնները։ Այդ ամենի համար դեռ բացորոշ պատասխան-ներ չունինք, և անկարելի է սպասել այնպիսի քննադատնե-րից, որոնք սովոր են անբացայալու և անհիմն առաջարկով ՚ի չիք դարձուցանել ամեն յայտնի և հիմնաւոր առաջակներ։

առաջանք դու մի չել և պայման և պահանջման ըստով
միաց մի ըստ ՀԱՅ պահանջման ըստով մասմասութ մի միաց
չել նոյն և պահանջման ըստով պահանջման և գծուանդիք պահ
ուն դու մե հայութեան ճաւարանից բայց պահանջման չել
չեաց մի և պահանջման ըստ պահ մի միաց ու պահանջման
համբայ պահանջման մի է խոյման պահանջման ըստ
մասմասութ ըստով ու գումար համար ըստ պահանջման ըստ պահանջման
համբայ պահանջման չել պահանջման և պահանջման դու խոյման
պահանջման մեջման և պահանջման ու գումար պահ պահ
ու պահանջման պահանջման և համար մասմասութ պահ է

այսու ըստով նախանդոյ մի ապամուր ու մի պահ
պահանջման ըստ պահանջման մասմասութ պահանջման
չել պահանջման մի պահանջման ըստով պահանջման
ու պահանջման մի պահանջման ըստով պահանջման մասմասութ
պահանջման ըստով պահանջման ըստով պահանջման ըստով պահանջման
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.



Ամեն ազգ իւր բարբառի կազմութեան համեմատ տաղա-
շափական արուեստի մէջ մի տեսակ ներդաշնակու-
թիւն է որոնում։ Նոքա՝ որոց բարբառի մէջ շեշտերը ոչ
եթէ միշտ բառերի վերջում, ալլ վոփոխակի երեմն լետա-
դաս և երեմն առաջադաս վանդերի վերալ են տարածուած,
իրանց տաղաչափական անդամները և տողերը ևս շեշտերով
են պայմանաւորում։ Նոքա՝ որոց բարբառի մէջ յայտնապէս
տարբերվում են սուզ և երկար ձայնաւոր տառերը, որ նո-
րանցով էլ կազմվում են նոյնանման վանդեր, իրանց տաղա-
չափական պայմանները ևս որոշվում են սուզ և երկար վան-
դերով։ Բայց ինչ ազգ չունի ոչ բառերի վերալ թափառող
շեշտեր, և ոչ սուզ և երկար ձայնաւոր տառեր, սոցա տա-
ղերը չափվում են բնական առոգանութեամբ միայն՝ այսինքն
վանդաչափով, և ամեն տաղաչափական անդամներ և տողեր
տրոհվում են որոշ վանդերի թուով։ Այս երեք եղանակներն
են ընդհանրապէս, որով կազմակերպվում են զանազան ազ-
գերի տաղաչափութիւնները, և շատ սակաւ կարող ենք հան-
գիպել բացառութեանց։

Բայց թէ ինչ եղանակաւ էին լորինվում հայոց տաղա-
չափական տողերը նախնի ժամանակին. այդ երկբալանաց
անվը լուծումն կարող ենք գտնել, եթէ ողջմտութեամբ
'ի նկատի առնունք հայոց բարբառի այն անվիճելի յատկու-
թիւնը, որ ոչ թափառող շեշտեր ունի իւր բառերի վերայ,
և ոչ սուղ և երկար ձայնաւոր տառեր, ուրեմն հին հայոց
քերթողները իրանց տաղաչափական անդամների մէջ ներ-
դաշնակութիւն որոնելու դիտմամբ՝ հարկ էր որ բացառապէս
դիմէին իրանց բնական առողանութեանը, և իրանց տաղերի
անդամները և տողերը հատուածէին վանդաչափով։ Սակայն
եթէ մեր հակառակ կուսակցութիւնը դեռ կամենալ պնդել
և համոզել մեզ, որ շեշտերով և սուղ ու երկար տառերով
էին լորինվում մեր քերթուածքները, այդպիսի անձինք թող
նախ և առաջ ապացուցանեն մեր բարբառի մէջ թափառող
շեշտերի և սուղ ու երկար ձայնաւորների գոյութիւնը, ապա
թէ յօժարուէինք քննութեան առնել նոցա տաղաչափական
օրինակները և ապացոյցները։

Բացէ 'ի բաց հերքելով հայոց տաղաչափութեան ամեն
օտարախորթ և անհարազատ կազմակերպութիւնները՝ և ըն-
դունելով վանդաչափը միայն՝ որն և պարզ աչքով նկատում
ենք տիրապետած մեր ամեն քերթուածքների մէջ, մնում է
մեզ մի այլ խնդիր ևս 'ի նկատի առնուլ՝ թէ արդեօք—Հին
Արամազնեալք՝ որ ըստ Խորենացւոյն գիրք Ա. Գլ. Զ. Նոյի
ժամանակից արդէն սկսած էին քերթել և ունէին վիպասա-
նական երգեր, նոքա նախ առաջինն համաչափ թէ անհամա-
չափ վանդերով կազմակերպեցին իրանց քերթողական տողերը
և անդամները—։ Այդ կէտը ինչքան էլ մութ, սակայն բա-
ցալաւ կարող էինք կացուցանել, եթէ 'ի միտ առնէինք
հայկական տաղաչափութեանց այն հանդամանքը, որ համա-
չափութիւնից խոտորուելով միայն այն ժամանակ են անհա-
մաչափ անդամներ ներս ընդունում իրանց քերթողական
տողերի մէջ, երբ որ հարկ են համարում արտայալտել խոր-

հըրդաւոր և յայտարար նշաններ, որոց իրական փաստերը և
օրինակները շատ տեղ մեր այս գրքում ջանացինք բացայալ-
տել։ Այս նկատմամբ եթէ կամենանք 'ի բաց հրաժարել ամեն
անհամաչափ անդամները՝ որոնք գիտակցաբար և խորհրդով
են ներմուծուած տողերի մէջ, կմնային տաղաչափական ներ-
դաշնակութիւն պահպանելու համար սպարզ և համաչափ ան-
դամները միայն։ և եթէ ենթադրելու լինինք, ինչպէս բնու-
թեան օրէնքն է ցուցանում, թէ կար մի ժամանակ հնումը,
որ հայոց քերթուածները նորածին, պարզ և անպաճոյն էին
զուգաչափ անդամներով առանց խորհրդաւոր ներմուծու-
թեանց, և որ ամեն բարդ և պայմանաւոր կիրառութիւնք
յետոյ միայն մուտ գործեցին տողերի մէջ խորհրդով՝ կատա-
րելագործելու համար հայոց քերթուածքները ներքին և ար-
տաքին բարեզարդութեամբ։ յայնժամ հեռու չէինք մնալ այն
ուղիղ հետեւութիւնից թէ—Հին հայոց տաղաչափութիւնը
համաչափութիւնից սկսանելով հետզհետէ դիմեց դէալ 'ի բարդ
և խորհրդաւոր անհամաչափութիւնը—։ Միւնոյն ալդպիսի
յեղափոխութիւն կարող էինք կրկնել և այժմեան ժամանակում,
եթէ միայն մեր քերթողները հակամիտուելով դէպի անհամա-
չափութիւնը բագրատունոյ նմանութեամբ՝ սկսանէին կենդա-
նութիւն ներշնչել հայոց բարբառին և տաղաչափութեանը։

Հայոց քերթողական արուեստը գեռ Վահագնի ժամա-
նակին հասած ենք նկատում իւր բարձր կատարելութեանը։
Ինչպէս մարդկութիւնը ամեն բանի մէջ, նոյնպէս և հայոց
քերթողները իրանց տաղաչափական վարժութեան մէջ յաջոր-
դաբար առաջադիմութիւն գործեցին։ Ոչ եթէ միայն Խորե-
նացոյ վկայութեամբ գիտենք, որ գրաւոր էին մեր նախնի
վիպասանութիւնները, այլ և քերթողապէս գծագրական ա-
պացոյցները, որ զետեղուած նկատեցինք վիպասանական քեր-
թուածների մէջ, աներկայ ցուցանում են, որ վիպական երգերը
գրաւոր էին, որովհետեւ ամեն բերանացի երգերի մէջ պիտի
աննպատակ լինէին նոցա խորհրդաւոր գծագրութիւնները։

Նախնի քերթողները չբաւականացին նախկին պարզութեամբ և վանդերի անարուեստ միօրինակութեամբ, այլ ինչպէս ասացինք, չան 'ի գործ դրին ներմուծանել տաղաչափական տողերի մէջ զանազան յայտարար նշաններ։ Սուղ և երկար անդամների ներմուծութեամբ, վաղուց արդէն հայոց քերթողական արուեստը ազգակցութիւն հաստատեց Հելլենականի հետ, բաց 'ի գորանից հայոց քերթողները սկսեցին անհամաշափ տողերի սատարութեամբ՝ զանազան քերթողական գծադրութիւնք պատկերագրել, բառերի խորհրդաւոր միջաբեկութեամբ՝ երկակի գործողութեանց յայտարար նշաններ ակներեկացուցանել, խորհրդաւոր տողակարգով և տառերի խորհրդաւոր գասաւորութեամբ զանազան գիտակցութիւն արտայատել։ Եւ այդ ամենը ոչ եժէ նորագոյն քրիստոնէական դարուեկեղեցական քերթողները հնարեցին, այլ կալին 'ի վաղուց ազգային քերթուածների մէջ, ինչպէս որ շատ անգամ ալպացուցինք սուղ և երկար անդամների և տողերի պայմանաւոր կիրառութիւնը վիպասանական երգերի մէջ, և նաև այն նշանաւոր քերթողապէս գծագրութիւնները, որ տեսինք Արտաշէսի երգի մէջ երկար անդամներով շրջապատուած միակ սուղանդամը որդէս զարդարել, և Սմբատէ երգի մէջ երկար տողերով շրջապատուած միակ կրճատ տողը որդէս որդէս ուղարկուին։ Հին Հայոց քերթողները անհամաշափ քերթութեան այսքան ազգատ ասպարէզ ունենալով՝ ամեն մէկը իւր կարողութեան իւր ախորժակի իւր ճարտարութեան և ներհմտութեան համեմատ քերթողաբանում էր։

Զենք սխալուիլ եթէ կարծենք, որ Հին Հայոց Տաղաչափական արուեստը բաղդ ունեցաւ մուտ գործել եկեղեցական քերթուածների մէջ Բաղմերախտ Խորենեան քերթողահօր սատարութեամբը, որոյ վասն և Քերթողահօր մեծ անուանակոչ չութեանը արժանացաւ։ Եւ իրօք նկատում ենք, որ ինչ շարականներ որ, Մովսիսի անուանն են վերադրուած, մի առանձին հմտութեամբ և Խորհրդաւոր տողականաբութեամբ

փայլում են միւսերի մէջ: Խորենեան քերթողը իւր այդ փոխառութեամբ շնորհապարտ պիտի գտնուի Բագրատունեան իշխանին՝ որ իւր ցեղի և ամբողջ Հայոց ազգի պատմութիւնը գրելու խնդրանոք՝ Հարկադիր ստիպեց նորան թարթափել Հայոց հեթանոսական մատեանների մէջ և հետազոտել նոցա վիպասանական քերթուածները: Այդպիսի քրիստոնէութեան խոտելի զբաղման Մովսէսը առաջին անգամ, ինչպէս նշաններից երևում է, զգուանքով և ակամայ վերաբերուեց, բայց հետզհետէ քաղցրացին նորա քմացը իւր զբաղմունքները, նա նկատեց հեթանոսական երգերի մէջ որեկիցէ գերակշռութիւն, որ մինչև անգամ հրապուրուելով հաճեցաւ նորանցից մի քանի քեկորներ աւանդել մեզ. և այդ եղանակաւ ընդելացաւ նա հնոց քերթողական չափերի հետ՝ որոնք կամ նոյնութեամբ և կամ սակաւ փոփոխութեամբ գործադրեց իւր քերթուածների մէջ, ուրիշներին էլ ուղղեցոյց հանդիսանալով: Հարևանցի նկատմամբ տարբերութիւնը գտնում ենք սուզ և երկար անգամների ու տողերի մէջ, որ վիպասան-քերթողները աւելի հմտութեամբ և յաճախ էին գործադրում, բայց Եկեղեցականները աւելի հակամէտ էին դէպ ՚ի այնպիսի խորհրդաւոր տողակարգը՝ որոնք տառերով էին պայմանաւորվում: Եւ իիրաւի դժուարին էր Եկեղեցական քերթողներին՝ որոց համար ամեն բան նոր էր, և ՚ի նորոյ պիտի սկիզբն առնէին այսպիսի վերացական քերթութեանց, որոց ոչ օրինակներին և ոչ բացատրութեան եղանակներին չպիտի հանդիպէին մի այլ հայկական քերթուածքի մէջ: Եւ այդ մասին նկատում ենք որ վիպասան — քերթողները ընութեան հետ հաշտ են վարվում, նոքա աւելի հակամէտ են դէպի ժողովրդական բարբառը և նոցա ամեն վերըմբռնումները հաստատուած են ժողովրդական աւանդութեան և գաղափարների վերայ, սակայն Եկեղեցականները միշտ ուղղուած են դէպ ՚ի գերբնականը, և հարկադիր պիտի քերթողաբաննեն աննիւթ, անիմանալի էութեան հրաշալիքները: Այսքանը միայն կարելի է

ասել առ այժմ մեր եկեղեցական քերթուածների վերաբերութեամբ, քանի որ ըստ ամենայն մասանց գեռ չեն հետազօտուած:

Արժան է և այս խնդիրը՝ ի նկատի առնուլ, թէ պիտանի են արդեօք մեր Եկեղեցական քերթուածները և արժանի մանրամասն հետազօտութեան—։ Այդ խնդրոյ վերաբերութեամբ իմ համոզումս այն է, որ ոչ եթէ հետազօտութեան, այլ արժանի են նաև խնամքով տողակարգութեան և մանրամասն բացատրութեան, մի այդպիսի տաղաչափական երկասիրութիւն աւելի պիտանի և օգտակար կը լինէին քան Նարեկի լուծման և Շարականների բացատրութեան տաժան և անշահ աշխատութիւնները։ Մեր Եկեղեցական քերթուածները հմուտ տաղաչափների ստարութեամբ՝ ի մի համախըմբելով և մի լիակատար ժողովածու կազմելով՝ մեր հայրենի հնութեան նշխարների վերայ խնամք տարած և ժողոված կը լինէինք, որոնք ցրուած և անփոյթ սփոռուած են այժմ ամեն տեղ. և նա և մեր նորագոյն քերթողների համար թերես նոքա իբրև քերթողական հրահանդ հանդիսանին, որով և աւելի հաստատուն հիմքերի վերայ կը բարձրանար մեր ազգային քերթողական արուեստը և միւսանգամ կեղակարծ գուշակութեամբ այլ ևս չէինք տատանիլ։ Մի լիակատար տաղաչափական ժողովածուի մէջ կարող են մուտ գործել ամեն տեսակ ընտիր անհամաչափ քերթուածներ, որոնք մինչեւ այժմ անլայտաբար պատմագրերի մի անկիւնում, և կամ ժամագրոց, պատարագամատոյցի, շարականների, աղօթագրոց, նոյնպէս և ժողովրդական առակների, առածների, անէծքների, ազօթքների և երգերի մէջ խորասուզուած են՝ համարուելով իբրև արձակ շարագիր և կամ անարուեստ քերթութիւնք։ Նոքա լոյս աշխարհ ելանելով նոր կերպարանափոխութեամբ, տողերի և անդամների բարեկարգ դասաւորութեամբ և պարտուպատշաճ բացատրութեամբք՝ կարող էին մեր հնագոյն քերթողների վարկը վերականգնել՝ որ նսեմացրել էինք մեր տգիտութեամբ, այլ և հրապուրիչ կարող էին

հանդիսանալ մեր նորագոյն քերթողներին՝ սիրել և նմանողութեան արժանի համարել անհամաչափ քերթուածները, որոնք աւելի ևս յարմարութիւններ ունին և իրաւունք ընդհանրանալու քան պարզ և անարուեստ համաչափ եղանակները։ Ես երբէք մտադիր չեմ անպայման դիմագրել և մերժել տաղաչափական շրջանից մեր ամեն տեսակ համաչափ քերթուածները, այլ միայն անտեղի և վնասակար եմ համարում միշտ միակողմանի լինել և անպայման անձնատուր լինել համաչափութեան. վասնորոյ հարկ է երբեմնապէս վիպասանական և Եկեղեցական անհամաչափ քերթուածների հետ ընդելանալ, նոյց ընտրելագոյն քերթուածներից օրինակ առնուլ և նմանուիլ, և մեր նեղ և կաշկանդուած սահմանից դուրս ելանելով ազատ շրջանառութեան մէջ մտանել։

Եւ ոչ եթէ անհամաչափութեան լուծը մենք գիտակցաբար թօթափեցինք և համաչափութիւնը մեզ իւրացուցինք, այլ ժամանակին համատարած խաւարից ստիպուած մոռացութեան մատնեցինք նորան մի այնպիսի դարում, երբ որ քերթողական կատարելութիւնը և ճաշակի կրթութիւնը բացակայում էր, և անիմանալի ու անխորհուրդ էին փոքրավանդու բազմավանդ անդամների և տողերի՝ մէջ ընդ մէջ և աններգաշնակ կիրառութիւնը։ Եւ անմեղադրելի էին այն մի քանի հանճարամիտ քերթողները՝ որոնք լաւ համարեցին ժամանակին յարմարուիլ, անհամաչափութեան անկայիւն կանոններից խոյս տալով համաչափութիւնը ընտրել, որն դիւրընդել, ախորժալուր և որոյ կազմութեան եղանակները ամենեցուն մատչելի էր. և այդ առաջին քայլից յետոյ այլ ևս անհնարին կամ դժուարին էր մեր քերթողներին միւսանգամ դառնալ դէպի անհամաչափութիւնը՝ որն իւր արտաքին կազմութեամբ համարվում էր մեզ համար իբրև արձակ շարագիր, և նորա անհարժ տողերը անարուեստ էին և անխորհուրդ:

Բայց համաչափ և անհամաչափ քերթուածներից թէ ո՞ր մէկը աւելի իրաւունք ունէր տարրանալու ազգի մէջ, այդ

մասին արդէն իմ համոզումս յայտնի է, որ աւելի անհամա-
չափութեան եմ կուսակից։ Եւ ի՞նչպէս կարող էր մարդկալին
նախկին անարուեստ պարզութիւնը գերադաս լինել քան դա-
րերով յղկեալ և կոկեալ կատարելագործութիւնը։ Եւ եթէ
ցանկալի է մեզ համաչափութեան միակերպ քողը պատառե-
լով ներմուծանել քերթովական տողերի մէջ երբեմնապէս
գծագրութեան, միջարեկութեան, սղութեան և երկարու-
թեան յայտարար նշանները՝ որին փափառնօք ցանկանում
էր Բագրատունին մեր նորագոյն քերթողներից ամենահմտա-
գոյնը, յայնժամ հարկ է մեզ միտում ցուցանել դէպի անհա-
մաչափ եղանակները, որոյ ընդարձակ ասպարիզի մէջ կարող
ենք ազատ շըջան առնել, ովք ինչքան կարող է։

Այս վերջումը եբրև յաւելուած դառնանք Թերզեանի
այն հարցմանը թէ—Հայոց տաղաչափութիւնը Փրանսականի,
Իտալականի թէ Հելլենականի հետ ազգակցութիւն ունի—
և որ այս խնդրոյն վերայ յատկապէս շեշտում է ասելով
„Այս կէտը լուսաբանել իրեն (Բահաթրեանին) ճշմարիտ պար-
ծանք մը կըլլար“։ Իրաւ որ ես էլ մի այդպիսի պարծանքի
փափառվ էի դիմել Իզմիրեան մըցանակաբաշխութեան յան-
ձնաժողովոյն, սակայն ցաւօք սրտի պիտի ասել որ նախ քան
ինձ ուղիւները առաջեցին գրաւելու ալդ պարծանքը, և չը-
կարծեմ թէ ինձ համար էլ մի ուրիշ պարծանքի տեղ թողած
լինին։ Այս եղելութիւնը բացատրելու նպատակաւ հարկ է
ինձ միջնադէպ պատմել, որոյ մասին և խնդրեմ ընթեր-
ցողաց երկայնմտութիւնը։

1888 թիւ օգոստոսի վերջն էր, երբ որ իմ այս տաղա-
չափական քննութեան մի օրինակը պատրաստելով Արարատ
ամսագրի համար գնացողով ճանապարհեցի Եջմիածին, ծրա-
բիս հասցէն ուղղելով ուսուցչապետ Ս. Մանդինեանցին։ Բայց
գարմանք պատեց ինձ, երբ որ անակնկալ գոյժ հասաւ թէ
Աղստափայ կայարանումը ոչ եթէ միայն իմ ծրաբը, ալլ և

բաւականաչափ գրքեր մի սնտուկի մէջ լքցրած յափշտակեցին։
Ես համոզուած լինելով որ այդ կողոպուտը անվերագառնալի
էր, կրկին անգամ սոյն տաղաչափական քննութիւնը կարգա-
ւորելով առաքեցի Ա.-Պոլիս՝ Իզմիրեան Մրցանակաբաշխու-
թեան յանձնաժողովոյն այն բաղձանքով միայն, որ լրջօրէն
քննութեան առնուէր իմ գիրքը և ոչ անիրաւաբար յափշտա-
կութեան արժանանար։

Սակայն մինչև Իզմիրեան Մրցանակաբաշխութեան հանդի-
սակատարութիւնը որ պէտքն է լինէր 1889 թ. յունիսի 29-ին,
ուրիշները առաջեցին իրանց տաղաչափական քննութեան
հետևանքները մամուլի միջոցով մեզ հաղորդել՝ որոց նիւթը
մեծաւ մասամբ վիպասանական երգերն էին, որ միւսուն է
թէ հին հայոց տաղաչափական արուեստի քննութիւնն էին
նոքա։ Եւ որովհետեւ այս քննութեանց մէջ նկատում ենք
Թերզեանի հարցման լիուլի պատասխանները, այս մասէն էլ
պիտի կարծել որ սոքա առաջադոյն արժանացին նոյն պար-
ծանացը։ Եւ իմ այս յանձնառութիւնս չպէտք է անհիմն
համարել, քանի որ մեր գրական հանդէսների մէջ նոցա վե-
րաբերմամբ լուելեայն հաւանութիւն արտալայտեցին, և կամ
գրաւոր հաւանութեան ցոյցեր արին։ Սակայն ես Թերզեանի
հաւանութիւնը ևս շահելու նպատակաւ առաջ եմ բերում
ալստեղ վերովիշեալ քննութեանց համառօտութիւնը։

Նախ առաջինն Մալխասեանը 1889 թիւ Մայիսի 7-ին
քննութեան առաջ „Արձագանք“ շաբաթաթերթի մէջ Վա-
հագնի վիպասանական երգը, և նկատելով որ այդ վիպասա-
նականի տասն տողերը բաղկացած են 5, 7, 8, 9, 10 և 11

վանգերից, և որպէս զի այդ երգը կարողանալ յարմարել հա-
մաչափութեան, այդ տասն տողերից մէկը գուրս ձգելով իբրև
անհարազատ, միւսը ուղղագրելով իբրև վրիփակ գրչութիւն,
և մի քանիսի վերայ էլ չայնը առաջբելով՝ այն եղրակա-
ցութեան է հասնում, որ վահագնի երգի տասնտողեան այդ
հատուածը խառն եօթնոտեան և տասնոտնեան ոտանաւոր

է համաչափ: 'Ի նկատի չառնելով այն թերութիւնը որ մեր գրականութեան մէջ գտանվում է, և եօթն՝ ու տասն տողերը իրարու հետ չեն հաշտվում համաչափութեան մէջ, ես կը ցանկանայի խորհուրդ տալ այս բանասիրին որ աւելորդ էին իւր առաջրութիւնները և ուղղագրութիւնները. որովհետև Վահագնի վիպասանականի մէջ, որ մի երկայն քերթուածք էր և չհասին մեզ, հարկ է ենթադրել որ պիտի լինէին ամեն տեսակ տողեր, քանի որ այս տասն տողերի մէջ վեց տեսակը արդէն ակներև նկատում ենք: Ուրեմն աւելի լաւ էր միանդամալն եզրակացնել թէ—Հայոց հին քերթուածքները համաչափ էին, և որոց իւրաքանչիւր տողերը բաղկանում էին խառն 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16 և թերես աւելի վանդերից—: Բայց թէ այսպէս և թէ այնպէս, մեզ հարկաւորը այն էր միայն՝ որ այս բանասիրի կարծիքը իմանալինք մեր հին վիպասանական Վահագնի երգի մասին, որ Փրանսականի ազգակից է համարում: Ա.հաւասիկ այս բանասիրի քննութեան մէջ նկատելով թերզեանի հարցման պատասխանը առաջարկում եմ նորա դատաստանին, և կարծեմ որ պարծանաց արժանի համարէ: Այս Մալխասեանն է կարծեմ, որ չի լուսաբառը թարգմանեց՝ և որոյ քննադատութեան հետ ծանօթ է թերզեանը:

Երկրորդ հետամուտ անձն տաղաչափական պարծանաց եղել է նոյն իսկ մեր Շուշի քաղաքում Ա.բեղեանը, որ մի Մոգացի հայի բերանացի պատմութիւնից գրի առնելով Դաւթէն և Մհեր ժողովրդական վէպը, տպագրել տուաւ և մօտաւորապէս յունիս ամսին 1889 թուականի լոյս աշխարհ ընկաւ: Այս վէպի առաջաբանի մէջ Ա.բեղեանը գրում է որ Մոգացի հայը վէպի պատմական մասը արձակ էր պատմում, բայց երգերը փոքր ինչ եղանակաւոր ձայնիւ, ճիշտ մեր ժողովը գական աշուղների պէս: Սակայն այս բանասէրը հետազոտելով ոչ եթէ մեր այժմեան աշուղների հեքեաթները, այլ մեր հնագոյն վիպասանական երգերը՝ և նկատելով որ նոքա Ռու-

սական շեշտակին չափով են յօրինուած, սկսանում է ինքն էլ այս Մոգացի վեպի թէ արձակ և թէ չափական մասերը հատուածել և իբրև քերթուածք տողակարգել: Եւ ապացոյց առաջ է բերում վիպասանական երգերի իւր ինքնուրոյն հատուածեալ տողերը, այսպէս—

Հէծա՛ւ—արկ'—արքա՛յն—Ա.բարձրշի՛—է ա՛ս—ւշա՛ գէ՛—շէյէ՛... Ա.հաւասիկ այս բանասիրի կարծիքը ևս առաջի առնելով թերզեանի դատաստանին՝ յուսամ որ եթէ ոչ առաջին, գոնէ այս երկրորդ անձի քննական հետևանքը պարծանաց արժանի համարէ, որովհետև Խտալական և շեշտակին է սորա առաջարկը. բայց 'ի դորանից „Մուրճ“ ամսագիրը ևս քննութեան առնելով մէծ հաւանութեան ցոյցեր արաւ¹⁾): Եւ ես ի՞նչպէս չդժգոհեմ թերզեանից, երբ որ այլոց առաջարկած արձակ պատմութիւնները համարվում են տաղաչափութիւնք, բայց իմ տաղաչափեալ եղանակաւոր երգերը մերժվում են համարուելով իբրև արձակ շարագիր:

Երբորդ՝ թերզեանի Հելենական տաղաչափութեան հարցը յոյժ աջողութեամբ լուծեց մի ոմն պրլսեցի Կարապէտ Կաղատացի, և տպագրել տուաւ „Նոր-Դար“ լրագրի մէջ միևնուն այն օրը (1889 թիւ յունիսի 29-ին) երբ որ մըցանակաբաշխութեան հանդէսը Պոլսում կատարվում էր: Այս բանասիրի քննութիւնը համակարծիք պիտի համարէինք Հ. Բագրատու-

¹⁾ Սոյն այս Աբեղեանը անցեալ 1890 թուականի ընթացքում մի շաբաթ լրագրական յօդապահներով՝ հանդէս մտնելով «Նոր-Դար»-ի մէջ, ՚ի միջի այլոց նորա 142 համարում բացարձակ պարզաբանում է իւր հայեցքը հայոց բարբառների վերաբերութեամբ՝ մօտաւորապէս այսպէս գրելով—հայկական գրոց և աշխարհիկ գրականական լեզուները, նոյնպէս և հայոց արկմաեան ձիւղի բարբառները ըստին շեշտագրութիւն, այլ որեկցէ մի այդպիսի նշաններ մեզ զգալի են հայոց Աբեղեան ձիւղի բարբառները մէջ—:

Եթէ իրաք գրոց և Տաճկակայոց բարբառները շեշտեր չեն կրում, ի՞նչ երաւամբ՝ ա'րդեօք նոցա տաղաչափութեանց մէջ մենք պիտի շեշտեր որոննեք. և կամ եթէ Ռուսահայոց բարբառներն են միայն, որ մի այդպիսի կասկածանաց տեղիք են տալիս, ուր են ապա նոցա շեշտակար տաղաչափութիւնները. Այս և սոյնանման հարցերը, մի այնպիսի առեղծուածներ են, որ անձկանոք սպասում են Աբեղեան լուծման:

Նոյ հետ, եթէ միայն մի քանի տառերի այլալլութիւնը՝ որ գտանվում են Հելլենական և Հրէական անուանակոչութեանց մէջ, մեզ արգելառիթ չլինէին: Սակայն միենոյն է, սորան էլ ալսպէս հաճոյ երեցցաւ հայոց տաղաչափութիւնը հրէականին ազգակից համարել: Եւ սորա ապացուցները հիմնաւորուած են այն նմանութեան վերայ, որ թէ հայոց և թէ հրէից հին քերթուածքների մէջ իրէնութէննէր են նշմարվում:

Սակայն ներելի լինի այստեղ մեր միջամտութիւնը Թերգեանին համոզելու համար, որ արժանի չդատէ իւր համաքաղացին պարծանաց մրցանակին ամբողջապէս, որովհետև եթէ միայն կրկնութիւնների վերայ չափելու լինինք տաղաչական ազգակցութիւնը, այդ դիպուածում ամեն հին ազգերի քերթուածքները իրարու ազգակից պիտի համարենք, որ բոլորեքեան այդպիսի կրկնութիւններով առատ են: Եւ բաց 'ի դորանից դեռ մինչև այժմ հրէից աստուածաշնչի սազմուները և օրհնութիւնները ոչ ով չէ կարողացել բացատրել թէ ինչ չափով են յօրինուած, և երբ որ չգիտենք հրէական քերթուածների չափերը, ել ինչչէս կարող էինք ապացուցանել թէ հայոց տաղաչափութիւնը հրէականի ազգակից է:

Ս.Հա սոռքա են, որ առաջեցին քան զիս հայոց վիպասա-
նական երգերի չափը վերլուծանելով պարձանաց արժանի
լինել։ Եւ ափառո որ այդպիսի քննական հետազօտութիւն-
ները չեն եղել առաջ և չեն շարունակվում ալժմ, այլ մի-
այն 1889 թուոյն նախընթաց կիսամետակի մէջ լոյս ընկին
այդպիսի բանասէրներ իրանց տաղաչափական քննադատու-
թեամբ։ Սակայն անկեղծօրէն խորհուրդ եմ տալիս տաղա-
չափութեան ամեն քննադատողներին, որ եթէ իսկապէս կամք
ունին իրանց այդպիսի քննական ընթացքը շարունակելու,
թող հրապարակ ելանեն՝ միայն թէ անկեղծ փաստերով և
համոզիչ ապացուցներով։

ՑԱՆԿ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

	ԳՈՐԾՎԱԿՑԻ	Տ	Տ	Տ	Տ
Հայութաց	71	71			
Անդրկան	102				
Կանաչակցութեան	81	71			
Առ Խաղութաց	10	12			
Աղջ					3.
Առաջաբան		60	60		5.
Համաշափ քերթութիւնք	81	72			7.
Անհամաշափ քերթութիւնք	10				9.

U.S. U.


- | | | |
|----|-----------------------------------------------------------------------------|-----|
| 1. | Անհամաշափ քերթութեանց կանոնաւոր չափը և նորա քաւանդամ
տողակարգը | 11. |
| 2. | Երկանդամ տողակարգ. Վահագնի վիպասանական երգը | 23. |
| 3. | Անկամաչափ կանոնաւոր քերթութեանց միանդամ և եռանդամ
տողակարգը | 30. |
| 4. | Խառն տողակարգ. Վահագնի վիպասանական երգը | 34. |
| 5. | Սուզ և երկար անդամներ թէ՞ վանդեր | 42. |
| 6. | Սուզ և երկար անդամներ շարականների մէջ | 46. |
| 7. | Սուզ և երկար անդամների և տողերի պայմանաւոր կիբառութիւնը | 52. |
| 8. | Խառն տողակարգի կարեռութիւնը | 66. |
| 9. | Մի ակնարկ վիպասանական երգերի վերայ | 73. |

Umaña 5

- | | | |
|---------------------------------------|-----|------|
| 1. Անհամաշխափ քերթութեանց անկանն չափը | 12. | 81. |
| 2. Անհամաշխափ քերթութեանց, Նարականներ | 18. | 93. |
| 3. Նարեկացոյ անհամանչափ քերթուածները | 11. | 104. |

Ընդհանուր ականքի թիւն

4	9	Թեղենի	Թեղենի
8	17	գործատըել	գործադըել
"	20	անվում	գնվում
17	18	բերեյարմար	բարեյարմար
24	9	դասաւորութիւն	դասաւորութիւնն
25	30	սարլ	սարլ
27	13	բղբէղ	բղբէղ
"	21	արծաթասիրութեամբն	արծաթսիրութեամբն
37	1	'ի տաճարին վիշապաց	'ի տաճարին—վիշապաց
41	5	իւրաքանչիւր	իւրաքանչիւր
45	10	անդաւմների	անդաւմների
48	26	ոմլողջապէս	ամլողջապէս
52	—	Գլոխ 5	Գլոխ 7
56 Ճանօթ.		տաշտային	դաշտային
67	13	աեղ	աեղ
71	3	որսվահակ	որսվահակ
72	9	համորելով	համարելով
74	13	դալանա	տալանա
"	22	գիպեր	տիպեր
75 Ճանօթ.		մտատիւր	մտադիւր
79 Ճանօթ.		տարածում	տածում
96	31	արդարաւթեան	արդարութեան
100	24	նկառմամբ	նկառմամբ
110	13	պանծելիք	պանծալիք
104	10	շոշափական	շոշափական
112	12	բազմամասնեա յերկանց	բազմամասնեայ երկանց
115	5	ողբաց	ողբաց
117	10	ել	(ել)
121	6	փոխատըեցի	փոխադըեցի
"	12	աշխատեաց	աշխարեաց
130	10	տաժան	դաժան



ՀՀ Ազգային գրադարան



NL0241731

